

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՌՈՂՋԱՊԱՀՍԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍՐԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆ 2023



ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՉԵԿՈՒՅՑ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2023



Սույն զեկույցը մշակվել է «Արժանապատիվ աշխատանք հիմա՝» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (այսուհետ՝ ԹՀԿ), Հասարակական հետազոտությունների առաջատար խմբի, «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոնի կողմից՝ «Կրթություն և համերաշխություն» արհմիության հետ համատեղ:

Չեկույցում ամփոփված են «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի կողմից ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության մոնիտորինգի զննահատման արդյունքները:

Այս զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՌՈՂՋԱԴԱՅԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՉԵԿՈՒՅՑ

Հանրային կառավարման գծով խորհրդատու՝ Արմեն Խուդավերդյան
Իրավական հարցերով փորձագետ՝ Արմինե Չախալյան
Ծրագրի ղեկավար՝ Զրիստինե Մարգարյան

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երևան 0002, Սարյան 12 փող., 5-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 569589, 569689
Էլ. հասցե՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

Հապավումներ.....	5
Ամփոփագիր.....	6
Նախաբան	21
Ներածություն	21
Մեթոդաբանություն	23
ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԱՏՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆԵՐԸ...	29
1.1 ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ՀՀ ներպետական օրենսդրությունը և կիրառվող գործիքակազմերը.....	29
1.2 Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության համապատասխանությունը աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիայի պահանջներին	45
ԳԼՈՒԽ 2. ԱԱՏՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ..	60
2.1 ԱԱՏՄ գործունեության ծրագրով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում վերապահված միջոցառումները	60
2.2 ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության հաշվետվողականությունը և կատարողականի գնահատումը	67
ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԱՏՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	84
3.1 ԱԱՏՄ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների ծրագիրը, դրա իրագործման արդյունավետությունը	84
3.2 Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացումը	90

ԳԼՈՒԽ 4. ԱԱՏՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ	101
4.1 Տեսուչների բարեվարքության պահանջները	101
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	113
Հավելված 1 - Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վարչության գործառույթների իրականացման մասով.....	113
Հավելված 2 - Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վարչության գործունեության և կատարողականի գնահատման չափորոշիչների մասով.....	115
Հավելված 3 - Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային իրավունքների ոլորտին վերաբերելի իրազեկմանը և խորհրդատվության տրամադրմանը միտված միջոցառումների մասով	126
Հավելված 4 - Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վարչության ծառայողների շահերի բախման և բարեվարքության պահանջների պահպանման մասով	131
Հավելված 5 - Հարցաթերթ տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման	136

Հապավումներ

ԱԱՏՄ - ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

ԱՄԿ – Աշխատանքի միջազգային կազմակերպություն

ԱՍՀՆ- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԱՕԿԿ – ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն

ԹԻՀԿ – Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

Ամփոփագիր

Ուսումնասիրության նպատակն է՝ գնահատել աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության արդյունավետությունը, վերահսկողության գործիքակազմերի և մեխանիզմների կիրարկման կարողությունները, վեր հանել օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի բացերը և մշակել առաջարկություններ՝ միտված աշխատանքային իրավունքների պետական վերահսկողության մեխանիզմների և գործիքակազմերի բարելավմանը, ԱԱՏՄ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Մոնիտորինգի խնդիրներն են՝ գնահատել

- ԱԱՏՄ՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի օրենսդրական կարգավորումներն ու կիրառվող գործիքակազմերը, դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը և ԱՄԿ չափանիշներին,
- ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականը՝ համեմատելով սահմանված ծրագրի և փաստացի աշխատանքի արդյունքները,
- տնտեսվարող սուբյեկտներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման իրականացման միջոցառումների արդյունավետությունը,
- տեսուչների շահերի բախման և բարեվարքության պահանջների պահպանման գործում վերապահված գործառույթների իրականացման համապատասխանությունն օրենսդրական պահանջներին:

Ուսումնասիրությունն իրականացվել է փաստաթղթերի համեմատական վերլուծության մեթոդով (փաստաթղթերի դիտարկման որակական և քանակական մոտեցումներով)՝ հիմք ընդունելով ԱՄԿ-ի «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիայի, «Աշխատանքային օրենսգրքի», «Տեսչական մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության, ՀՀ Վարչապետի և այլ գերատեսչական իրավական ակտերով սահմանված՝ տեսչական մարմինների գործունեությունը կանոնակարգող պահանջներին համապատասխանությունը:

ԱԱՏՄ գործունեությունը գնահատելու նպատակով տեղեկատվության հավաքագրման առաջնային աղբյուր են հանդիսացել ԱԱՏՄ տարեկան գործունեության ծրագրերը և դրանց իրականացման հաշվետվությունները, կատարողականների գնահատման արդյունավետության, ինչպես նաև ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծության արդյունքները, տնտեսվարող սուբյեկտների իրազեկմանը և խորհրդատվության տրամադրմանը միտված միջոցառումների իրականացման վերաբերյալ ԱԱՏՄ կայքէջում հրապարակված տեղեկատվությունը: Միաժամանակ, ՀՀ ԱԱՏՄ-ին ուղղվել են պաշտոնական հարցումներ, որոնց տրված պատասխանների բովանդակային վերլուծության և օրենսդրական կարգավորումներին համադրման արդյունքում բացահայտվել են ՀՀ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության արդյունքներն ու բացերը:

ԹԻՅԿ կողմից իրականացվել է ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության կայացածության գնահատում 3 մակարդակներում՝ «Գործում է լիարժեք», «Գործում է ոչ լիարժեք» և «Կայացման փուլում է»։ Կայացածության յուրաքանչյուր փուլի համար սահմանվել են գնահատման տոկոսային միջակայքեր, համապատասխանաբար՝ «Գործում է լիարժեք» - [80-100%], «Գործում է ոչ լիարժեք» - [50-79%] և «Կայացման փուլում է» - [30-49%]։ Ընդ որում՝ մինչև 30 տոկոսային միջակայքն ամենացածր ցուցանիշն է և դիտարկվել է որպես սահմանային, որից հետո միայն հնարավոր է չափել կայացածության աստիճանը։

Գնահատումն իրականացվել է ներքոշարադրյալ 5 չափորոշիչներով՝

1. ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության ոլորտում գործունեության ապահովման օրենսդրական դաշտ և դրա համապատասխանությունը ԱՄԿ ստանդարտներին,
2. ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի համար նախանշված միջոցառումներ,
3. աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության կատարողականի և տեսուչների կատարողականի իրականացման աստիճան,
4. տնտեսվարողներին խորհրդատվության և իրազեկման ծրագրային աշխատանքներ,
5. տեսուչներին ներկայացվող բարեվարքության պահանջների պահապանման, այդ թվում՝ շահերի բախման իրավիճակների կառավարում։

Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ՀՀ ԱԱՏՄ կայացածության (արդյունավետության) գնահատումը կատարվել է փորձագիտական գնահատման մեթոդով։ ԱԱՏՄ 2021 թվականի աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության կայացածության մակարդակը ԹԻՅԿ կողմից գնահատվել է 38 տոկոսային բալային միավոր և համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի՝ ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչներով գտնվում է «Կայացման փուլում»։

Եզրակացություններ

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության ոլորտում գործունեության ապահովման օրենսդրական դաշտի, ինչպես նաև նյութատեխնիկական, տրանսպորտային, վարչական գույքի ու սարքավորումների, մարդկային ռեսուրսների համապատասխան գործիքակազմերով ապահովվածության տեսանկյունից՝

1. «ԱԱՏՄ կողմից նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումը և ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ» գործառույթը հակասության մեջ է համապատասխան ոլորտային քաղաքականություն մշակող և իրականացնող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ՀՀ առողջապահության նախարարություններին «Կառավարության կառուցվածքի և գործունեության կազմակերպման մասին» ՀՀ օրենքով վերապահված ոլորտներում քաղաքականության մշակման գործառույթի հետ, որը հանգեցնում է քաղաքականության մշակման գործառույթի կրկնորոգմանը։
2. ԱԱՏՄ անձնակազմին ներկայացվող «...կայունության և անկախության, ինչպես նաև արտաքին ազդեցությունից պաշտպանվածության ու երաշխավորության» մասին ԱՄԿ

Կոնվենցիայի պահանջներն ուղղակիորեն հակասության մեջ են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով վարչական պաշտոնների, այդ թվում՝ ԱԱՏՄ ղեկավարի և նրանց տեղակալների համար սահմանված պայմաններին:

3. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ «տնտեսվարող սուբյեկտին ստուգումների մասին նախապես գրավոր տեղեկացնելու» դրույթը հակասության մեջ է Կոնվենցիայի՝ «Տեսուչների կողմից առանց նախօրոք տեղեկացնելու՝ ցերեկվա և գիշերվա ցանկացած ժամի անարգել մուտք գործել տեսչական ստուգման ենթակա ցանկացած ձեռնարկություն» պահանջի հետ:
4. «Տեսուչների վերահսկողության ներքո գտնվող ձեռնարկությունում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնաբաժին ունենալու»՝ կոնվենցիայով սահմանված արգելքը ԱԱՏՄ ստուգումների ընթացակարգերով նախատեսված չէ:
5. «Հանրային ծառայության մասին» և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքները տեսուչների համար չեն սահմանում կոնվենցիայով սահմանված արգելքները. «(բ) պարտավոր են ... պաշտոնաթողությունից հետո չիրապարակել արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթաց, որոնց նրանք կարող էին ծանոթանալ իրենց պարտականությունների կատարման ժամանակ», և «(գ) պարտավոր են բացարձակորեն գաղտնի պահել բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների վերաբերյալ բողոքների աղբյուրը»:
6. Առկա է ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վարչության և տարածքային կենտրոնների հաստիքների համալրման խնդիր, ինչպես նաև նշված կառուցվածքային ստորաբաժանումները նյութատեխնիկական, տրանսպորտային միջոցներով, վարչական գույքով և սարքավորումներով ապահովվածության գնահատման անհրաժեշտություն:
7. ՀՀ Վարչապետի աշխատակազմի՝ կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից կազմակերպվող քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացները չեն ապահովում ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տեսուչների մասնագիտական կարողությունների զարգացումը, դրանք համահունչ չեն քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման և իրականացման պահանջների հետ:
8. «ԱԱՏՄ-ի և վերահսկողություն իրականացնող այլ պետական տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և կառավարման» Էլեկտրոնային համակարգը դեռևս չի ձևավորվել, չի գործարկվել աշխատանքային պայմանագրերի Էլեկտրոնային հարթակը:
9. «Տնտեսվարող սուբյեկտներից և աշխատողներից անանուն բողոքների ստացման ԱԱՏՄ-ի www.employeeprotect.am Էլեկտրոնային համակարգը օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում չի գործում:

ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների աշխատանքային ծրագրերով՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի համար նախանշված միջոցառումների իրականացման տեսանկյունից՝

10. ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի մշակման համար բացակայում են դրանց կազմման, կառուցվածքի, միջոցառումների ժամկետների, ակնկալվող արդյունքների ու գնահատման ցուցիչների սահմանման մեթոդական ուղեցույցներն ու ենթաօրենսդրական կարգավորումները:
11. ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերում բացակայում են աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում տիրող իրավիճակը բնութագրող ցուցանիշները, ոլորտային խնդիրներն ու ռիսկերը: Դրանց փոխարեն ծրագրերում ներկայացված են ԱԱՏՄ-ի աշխատակազմում առկա խնդիրները:
12. ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի «օրենսդրության վերահսկողության ոլորտի խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված (հավելվածներ՝ 1-ի՝ 2-րդ, 3-րդ և 14-րդ) միջոցառումները չեն բխում ոլորտում արձանագրված խնդիրներից և ռիսկերից, «ակնկալվող արդյունքներ» սյունակում տրված ձևակերպումները չունեն սպասվող արդյունքների քանակական կամ որակական գնահատականներ և կատարման մակարդակի գնահատման տեսանկյունից խնդրահարույց են:

Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության և տեսուչների կատարողականի իրականացման տեսանկյունից՝

13. ԱԱՏՄ գործունեության նպատակի չափորոշիչի՝ մի շարք ցուցիչների վերաբերյալ փաստացի ցուցանիշները՝ «հիմնական նպատակին համետիւ մակարդակը», «առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների գնահատականը», «ռիսկերի պլանավորման, վերլուծության համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները», «խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները», «ՀՀ կառավարությանը և համապատասխան պետական մարմիններին օրենսդրական առաջարկների ներկայացման քանակը», չեն բնութագրում ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ կանոնադրական խնդիրների իրականացման ապահովման և աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի նվազեցման մակարդակները և ԱԱՏՄ գործունեության արդյունավետությունը:
14. ԱԱՏՄ գործունեության 2021 թվականի գործընթացների իրականացման չափորոշչով, գործող մեթոդաբանության կիրառման պայմաններում ամփոփ գնահատական ստանալ հնարավոր չէ, քանի որ գնահատումն իրականացվել է «Աշխատանքի իրավունք»-ի ոլորտի մասով, մինչդեռ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվությունում կիրառվել է «աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» ոլորտ եզրույթը, իսկ «հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկերի կանխման նպատակով ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների», ինչպես

Նաև «ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանի» մասով բացակայում են ոլորտային գնահատումները:

15. ԱԱՏՄ գործունեության աշխատանքի իրավունքի ոլորտում արդյունքային չափորոշչով ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցության, ինչպես նաև ԱԱՏՄ վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխության վերաբերյալ գնահատումներ չեն իրականացվել, մինչդեռ մեկ ստուգման ծախսերը միջին հաշվով կրկնապատկվել են, իսկ տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված համարյա բոլոր ստուգումների արդյունքները բողոքարկվել են կա՛մ տեսչական մարմին, կա՛մ դատարան:

16. ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտի ստուգաթերթը, որպես ստուգումների իրականացման գործիք, չի գործել և հիմք չի եղել 2021 թվականի ստուգումների ծրագրի կազմման համար, քանի որ ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը և ռիսկերի չափորոշիչները հաստատվել են միայն 2021 թվականի նոյեմբերի 25-ին, իսկ աշխատանքային իրավունքի ոլորտում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը՝ ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 10-ի N 299-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 20-ին:

17. ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի աշխատակիցների (տեսուչների) գործունեության կատարողականի վերաբերյալ:

Տնտեսվարողներին խորհրդատվության և իրազեկման ծրագրային աշխատանքների իրականացման տեսանկյունից՝

18. ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի, աշխատանքային օրենսդրության, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների ապահովման ոլորտում տնտեսվարողներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման միջոցառումները չեն բխում ոլորտում արձանագրված խնդիրներից և բացահայտված ռիսկերից, չունեն հասցեականություն, միտված չեն առանձին տնտեսվարող սուբյեկտների կոնկրետ խմբերի մոտ արձանագրված ռիսկերի կանխարգելմանը կամ դրանց լուծմանը: Նշված միջոցառումները չունեն քանակապես գնահատելի ցուցիչներ և ակնկալվող արդյունքներ՝ թիրախ խմբերի, մասնակիցների շրջանակի, իրականացման ժամկետների, ներգրավված համայնքների, կազմակերպությունների կամ շահառուների քանակը, հանրությանը և տնտեսվարողներին իրազեկման մակարդակը գնահատելու համար:

19. ԱԱՏՄ 2021 թ. իրականացրած դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպման միջոցառումների կատարողականը զերծ է կոնկրետությունից: Բացակայում են իրականացված դասընթացների, սեմինարների, քննարկումների մասնակիցների, իրավական ակտերի դրույթների մասով իրականացված բացատրական աշխատանքների բովանդակության, թիրախ խմբերի, նոր իրավական ակտերի ընդունման կամ ուղեցույցների

հրապարակման, իրազեկման մասին վիճակագրական տվյալները՝ խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներին հատկացված ֆինանսական, ինչպես նաև մարդկային ռեսուրսների գնահատականները:

20. Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների իրազեկման կազմակերպման, ինչպես նաև ԱԱՏՄ հեղինակության բարձրացման տեսանկյունից ԱԱՏՄ կայքէջն ունի սահմանափակումներ, մասնավորապես՝ դժվարացված է նոր իրավական ակտերի հայտարարությունների վերաբերյալ հաղորդումների որոնումը, ԱԱՏՄ գործունեության կանխարգելման ու իրազեկման ամենամյա ծրագրի և դրա իրականացման հաշվետվությունները, կառավարման խորհրդի որոշումները տեղադրված են PDF ձևաչափով, մեքենայական ընթեռնելի ու «բաց տվյալների» ձևաչափով չեն: Ձեռնարկների, բուկլետների, տեղեկանքների հրապարակման համար կոնկրետ դաշտ առանձնացված չէ, տեսանյութերի հրապարակումների հղումները կցված չեն, «թեժ գծով» հեռախոսազանգերին տրված պարզաբանումների արդյունքները արձանագրված չեն ԱԱՏՄ կայքէջի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում:

ԱԱՏՄ տեսուչների բարեվարքության պահանջների, այդ թվում՝ շահերի բախման չափորոշիչների պահպանման տեսանկյունից՝

21. «Հանրային ծառայողների տիպային կանոնների» հաստատման պայմաններում, ԱԱՏՄ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից՝ 2020 թվականի մարտի 16-ի թիվ 328-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ ծառայողների վարքագծի կանոնները վերախմբագրման կարիք ունեն:
22. Օրենսդրորեն ԱԱՏՄ անձնակազմի կառավարման և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառնությունների վերապահումը ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը ինստիտուցիոնալ առումով հնարավորություն չի ընձեռում ԱԱՏՄ-ին՝ ապահովելու տեսուչների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պայմանների պահպանման, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների խախտումների բացահայտման համար:
23. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով ԱԱՏՄ տեսուչների շահերի բախման սահմանումը և շահերի բախման իրավիճակների համար նախատեսված արգելքները համահունչ չեն հանրային ծառայության մասին օրենքում շահերի բախման սահմանմանը, մասնավորապես՝ շահերի բախման միջազգայնորեն սահմանված ստանդարտներին ու չափորոշիչներին:
24. Օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում ԱԱՏՄ-ի կողմից գործնականում չեն կիրառվում տեսուչների իրավիճակային շահերի բախման հանգամանքների արձանագրման և գրավոր հայտարարությունների գործիքները: Մշակված չեն տեսուչների գործունեությամբ պայմանավորված շահերի բախման (տեսուչի ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածության) հնարավոր հանգամանքների (ռիսկային իրավիճակների կամ գործոնների) և տնտեսվարող սուբյեկտների հետ պոտենցիալ կամ

հավանական փոխկապակցվածության ցանկերը: ԱԱՏՄ ղեկավարությունը, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերը, ստուգման կարգադրագրեր կամ հանձնարարագրեր կազմելիս նախօրոք չեն հավաստիանում տեսուչների և նրանց կողմից վերահսկվող կամ դիմում ներկայացնող տնտեսվարող սուբյեկտների շահերի համընկնման կամ հակասելու հանգամանքների առկայության կամ բացակայության մեջ:

Առաջարկություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝

1. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով բացառել ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ենթակա ոլորտներում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման ձևաչափով առաջարկությունների ներկայացումը լիազոր մարմին կամ կառավարման խորհրդին՝ ապահովելով, որ ՀՀ առողջապահության և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների կողմից չլրկնորվի նշված ոլորտներում քաղաքականության մշակման գործառույթը:
2. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխությունների և լրացումներ կատարելու միջոցով ԱԱՏՄ-ին ապահովել անանուն դիմում-բողոքների ընդունման և դրանց հիման վրա վարույթներ իրականացնելու օրենսդրական հնարավորությամբ:
3. Զննարկել «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ու լրացումների իրականացումը՝ ապահովելու ԱՄԿ Կոնվենցիայի՝ «առանց նախօրոք տեղեկացնելու՝ ցերեկվա և գիշերվա ցանկացած ժամի անարգել մուտք գործել տեսչական ստուգման ենթակա ցանկացած ձեռնարկություն» դրույթները ԱԱՏՄ տեսուչների կողմից կիրառելու նպատակահարմարության հարցը:
4. «Տեսչական մարմինների մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու միջոցով ապահովել Կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված՝ «նույնիսկ պաշտոնաթողությունից հետո չիրապարակել արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթաց» և «գաղտնի պահել բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների վերաբերյալ բողոքների աղբյուրը և գործատուին կամ նրա ներկայացուցչին չհաղորդել այն մասին, որ տեսչական այցելությունը կատարվել է այդպիսի բողոքի հիման վրա» արգելքների օրենսդրական սահմանումը:
5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ համատեղ՝ «Տեսչական մարմինների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով ապահովել, տեսչական մարմիններում վերահսկողական գործառույթների առանձնահատկություններով պայմանավորված, տեսուչներին ներկայացվող նոր սահմանափակումների, մասնավորապես, տեսչությունում տեսուչի կողմից իր կամ իր ընտանիքի անդամի մասնակցությամբ ընկերությունների ու կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության իրականացումը և տեսուչի կողմից վերահսկվող տնտեսվարող

սուբյեկտների հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքման արգելք, երբ դրանք չեն կրում համընդհանուր բնույթ:

6. ԱԱՏՄ և վերահսկողություն իրականացնող այլ պետական մարմինների միջև էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման, տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ձևավորման նպատակով տեխնիկական առաջադրանքի մշակման շրջանակներում քննարկել տեղեկատվության կառավարման համակարգի միջազգային փորձը:
7. Քննարկել Հայաստանում գործառույթների կողմից նոր ստեղծվող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների հիմնադրման ու գործունեության կազմակերպման նախապատրաստական փուլերում ԱԱՏՄ-ին նախապես ծանուցման նոր գործիքակազմի ներդրման նպատակահարմարության հարցը՝ նախաձեռնելով միջազգային փորձի մանրամասն ուսումնասիրություններ:

ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդին՝

8. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանության» մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով ԱԱՏՄ հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատման բանաձևում ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» որոշման հավելվածի 5-րդ կետի՝ տեսչական մարմնի հիմնական նպատակին հասնելու գործունեության արդյունավետության ամփոփ գնահատականը ստանալու պահանջը:
9. Ռիսկերի նվազեցման նպատակային մակարդակի մասին ամբողջական պատկերացում կազմել նպատակով, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանության» մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել, որ հիմնական նպատակին հասնելու չափորոշիչի գնահատման բանաձևում, ստուգաթերթերի միջոցով ստացված կշիռների առավելագույն միավորներից բացի, ներառվեն նաև գրավոր դիմումների, անանուն հաղորդումների, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերի գրանցման էլեկտրոնային հարթակից բացահայտված խախտումների և հաղորդումների տվյալների հիման վրա կատարված ստուգումների քանակները:

ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին՝

10. ՀՀ արդարադատության նախարարության օրենսդրության զարգացման կենտրոնի, հանրային կառավարման բարեփոխումների աջակցման թիմի հետ համատեղ՝ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության «Մարդկային ռեսուրսների

կառավարում և հանրային ծառայություն» հենասյուն բաժնում նախատեսվող «Արհեստավարժ ավագ գործադիր կորպուսի ձևավորում» միջոցառման ներքո իրականացնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ այն հաշվով, որ տեսչական մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ ղեկավարի և նրանց տեղակալների վարչական պաշտոնների համար ապահովվեն ԱՄԿ Կոնվենցիայով սահմանված՝ «...նրանց զբաղեցրած պաշտոնների կայունությունը և անկախությունը կառավարության փոփոխության դեպքում կամ ոչ պատշաճ արտաքին ազդեցությունից պաշտպանվածությունը»:

11. ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից նախապատրաստել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝ ապահովելով քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքների համալրման, կատարողականի գնահատման, վերապատրաստման գործընթացներում թեկնածուի բարեվարքության գնահատման չափորոշիչներ՝ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների գնահատման ձևերում ներառելով բարեվարքությանը վերաբերելի ցուցիչներ, սահմանել թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար թեստավորման առաջադրանքների և հարցաշարի կիրառման պահանջ, իսկ հարցազրույցի փուլում թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար՝ իրավիճակային խնդիրների կիրառման պահանջ:
12. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման վարչության, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ՝ ԱԱՏՄ-ի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության, ինչպես նաև ԱԱՏՄ տարածքային կենտրոնների աշխատակիցների համար մշակել և իրականացնել ռազմավարական և տարեկան պլանավորման, գործողությունների ընթացիկ վերահսկման, ինչպես նաև տվյալների հավաքագրման թեմաներով վերապատրաստման ծրագրեր:
13. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման վարչության, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի հետ համատեղ՝ ԱԱՏՄ-ի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի, ԱԱՏՄ տարածքային կենտրոնների աշխատակիցների համար սահմանել կանխարգելման և իրազեկման ծրագրերի մշակման, դրանց իրականացման կոմպետենցիաների պահանջներ, մշակել և իրականացնել հաղորդակցության կոմպետենցիաներին տիրապետման, տնտեսվարող սուբյեկտների ու քաղաքացիներին իրազեկման գործիքակազմերի տիրապետման, դրանց կիրառման նպատակային, թիրախային խմբերի սահմանման, կարողությունների զարգացման վերապատրաստման ծրագրեր:
14. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման վարչության, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի հետ համատեղ՝ քննարկել ԱԱՏՄ տեսուչների մասնագիտական վերապատրաստման կարիքների գնահատման և վերապատրաստումների ծրագրի մշակման գործառնությունները ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման ստորաբաժանումից ԱԱՏՄ-ին փոխանցելու հարցը:

15. Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ-ի և միջազգային կազմակերպությունների համագործակցության շրջանակներում ծրագրավորված և իրականացվող վերապատրաստման մոդուլներն ու դասընթացների ծրագրերը ներառել տեսուչների վերապատրաստման պարտադիր ծրագրերում և հաշվարկվող կրեդիտների գնահատականներում:
16. ԱԱՏՄ տեսուչների անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների պայմանների խախտումների բացահայտման նպատակով՝ տեսչական մարմինների որակի ապահովման վարչությունների համար ապահովել հասանելիություն ՅՅ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն՝ «Հանրային պաշտոն գրադեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշմամբ սահմանված՝ քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգին, ինչպես նաև ՅՅ պետական կառավարման որոշ մարմինների տեղեկատվական բազաներին՝ պահանջվող տվյալների ներբեռնման և առկա տվյալների արժանահավատության ստուգման հնարավորությամբ:

ՅՅ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեությունը համակարգող գրասենյակին՝

17. ՅՅ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեությունը համակարգող գրասենյակի կողմից մշակել տեսչական մարմինների գործունեության ամենամյա ծրագրի կազմման, դրա կառուցվածքի, միջոցառումների մշակման, կատարման ժամկետների, գործողությունների իրականացման, ակնկալվող արդյունքների ու դրանց գնահատման ցուցանիշների ու ցուցիչների սահմանման մեթոդական ցուցումներ կամ ուղեցույց:
18. ՅՅ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեությունը համակարգող գրասենյակի կողմից մշակել տեսչական մարմինների գործունեության՝ կանխարգելման և իրազեկման ծրագրի կազմման մեթոդական ցուցումներ կամ ուղեցույց:
19. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (համաձայնությամբ) հետ համատեղ, «Տեսչական մարմինների մասին» ՅՅ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել ՅՅ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանումից տեսչական մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների փոխանցումը տեսչական մարմինների որակի ապահովման վարչություն՝ վարչության պետին վերապահելով տեսչության բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները:
20. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (համաձայնությամբ) հետ համատեղ, «Տեսչական մարմինների մասին» ՅՅ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել շահերի բախման հիմնական դրույթների համապատասխանեցումը «Հանրային ծառայության մասին» ՅՅ օրենքով սահմանված պահանջներին:

21. ԱԱՏՄ ստուգումների ընթացակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել՝ տեսուչների կողմից, Նախքան ստուգման գործընթացը, իր կամ իր ընտանիքի անդամի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնաբաժին ունենալու վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու, ԱԱՏՄ-ում «տեսուչների (նրանց ընտանիքի անդամների) առևտրային կազմակերպություններում մասնակցության վերաբերյալ» ռեեստրի ստեղծման, ըստ վերահսկողության բնագավառի՝ տեսուչների մասնագիտացման և այն ընկերություններում, որտեղ մասնաբաժին ունեն, ստուգումների իրականացումը բացառելու պահանջները:
22. ԱԱՏՄ-ի կողմից ստուգումների իրականացման գործընթացներում օրենսդրորեն սահմանել. ԱԱՏՄ ղեկավարության, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերի, ստուգման կարգադրագրեր կամ հանձնարարագրեր կազմող և ստորագրող պաշտոնյաների կողմից Նախօրոք հավաստիանալու պահանջ՝ տեսուչների կողմից վերահսկման, ստուգայցների կատարման կամ դիմումների քննարկման ժամանակ տնտեսվարող սուբյեկտների շահերի համընկնման կամ հակասելու հանգամանքների մասին:

ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին՝

ԱԱՏՄ կարողությունների պարզացման մասով՝

23. ԱԱՏՄ ղեկավարի՝ 2020 թվականի փետրվարի 20-ի N 152-Ա հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով՝ «Աշխատանքային օրենսդրության վերահսկողության» վարչության կանոնադրությունը համապատասխանեցնել ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ-ին վերապահված լիազորություններին և անվանափոխությանը: Վարչության վերանայված կանոնադրությունը հրապարակել ԱԱՏՄ պաշտոնական կայքէջում՝ <https://www.hlib.am/>:
24. Նախաձեռնել ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների՝ Նյութատեխնիկական, տրանսպորտային միջոցներով, վարչական գույքով, սարքավորումներով ապահովվածության և կադրերով համալրման կարիքների գնահատման ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով ԱՄԿ կողմից սահմանված չափորոշիչները:
25. Համագործակցելով ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության հետ՝ ապահովել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում թափուր հաստիքների համալրումը:
26. Մշակել առաջարկություններ՝ տնտեսվարող սուբյեկտների ու աշխատողների կողմից անանուն բողոք-դիմումների ստացման www.employeeprotect.am համակարգում անանուն դիմումների ներկայացման, դրանց արձագանքման ընթացակարգի սահմանման, դիմում-բողոքում նվազագույնը ներառվող տեղեկատվության շրջանակի, ԱԱՏՄ-ի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա հետագա վարույթների կամ ստուգումների իրականացման գործընթացների վերաբերյալ:
27. ԱՄԿ Կոնվենցիայի պահանջներին համապատասխանության գնահատման Նպատակով ապահովել ԱԱՏՄ համագործակցությունը Աշխատանքի միջազգային բյուրոյի հետ՝

ներկայացնելով ԱԱՏՄ պաշտոնական կայքէջում (hlib.am) հրապարակված տեսչական մարմնի գործունեության ամենամյա հաշվետվությունները (զեկույցները):

28. ԱԱՏՄ-ի՝ դոնոր, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության շրջանակներում զարգացնել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում հաղորդակցման կարողությունները՝ մշակելով ԱԱՏՄ հաղորդակցման ռազմավարություն և գործողությունների ծրագիր:

29. Արդիականացնել և վերանայել ԱԱՏՄ կայքէջը՝

- Ստեղծել «Իրազեկում» բաժին, որտեղ տեղադրել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված իրազեկման բոլոր գործիքակազմերով պահանջվող նյութերը՝ ըստ առանձին ենթաբաժինների:
- Իրազեկում բաժնում առանձնացնել «նոր իրավական ակտերի, հայտարարությունների» ենթաբաժին:
- «Հարց ու պատասխան» բաժնի նյութերը խմբավորել ըստ թեմաների և համալրել աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված խորհրդատվության, «թեժ գծով» ստացված հեռախոսազանգերին տրված պարզաբանումների, տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրական խախտումներից ձևավորված հարցերով ու պատասխաններով:
- Կայքէջում տեղադրվող նյութերը, այդ թվում՝ ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրերը, դրանց իրականացման հաշվետվությունները, հանրության կամ քաղաքացիների համար դարձնել հասանելի առցանց, ամբողջովին մեքենայաընթեռնելի ձևաչափով (JSON, XML, RDF, CSV):
- Ներդնել կայքէջի օգտատերերի հաշվառման գործիք:
- Ապահովել կայքէջում տեսանյութերի, հոլովակների, բուկլետների, ձեռնարկների և այլ նյութերի տեղադրման տեխնիկական հնարավորությունները:
- Պարզեցնել կայքէջում որոնման հնարավորությունները, բարելավել տեխնիկական հզորությունը:

ԱԱՏՄ գործունեության ծրագրի մասով՝

30. ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրից հանել միջոցառումների՝ օրենսդրական ակտերի բաժինը: ԱԱՏՄ-ի կողմից ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացվող՝ վերահսկողության ոլորտային խնդիրների ու ռիսկերի նվազեցմանը ուղղված օրենսդրական առաջարկությունները ձևակերպել առանց նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ կոնկրետ ստուգումների արդյունքներով և հիմնավորումներով:

31. ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրում թեմատիկ ուսումնասիրությունների, առանձին հարցումների արդյունքների, քաղաքացիների դիմում բողոքների և այլ վիճակագրական տվյալների հիման վրա, «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների առկա վիճակը» և «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա խնդիրներն ու բացահայտված ռիսկերը» բաժիններում ներկայացնել ԱԱՏՄ վերահսկողության, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տիրող

իրավիճակի ընդհանրական պատկերը, ըստ ոլորտների ռիսկային գործոնները, կոնկրետ ոլորտներում համատեքստը (տարվող քաղաքականության, սոցիալական պայմանների, կիրառվող տեխնոլոգիաների և այլն), լուծման ենթակա առաջնահերթ խնդիրներն ու արձանագրված ռիսկերը:

32. Փոխել ԱՎՏՄ-ի ամենամյա գործունեության ծրագրի կառուցվածքը. ԱՎՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումները խմբավորել՝ ըստ ԱՎՏՄ վերահսկողության ոլորտների, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության, նախանշվող միջոցառումները բխեցնել կոնկրետ ոլորտում արձանագրված խնդիրներից ու գնահատված ռիսկերից, միջոցառումների համար մշակել ակնկալվող արդյունքներ, քանակական և որակական չափելի ցուցանիշներ և գնահատման ցուցիչներ, պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումներ և կատարման կոնկրետ ժամկետներ:
33. ԱՎՏՄ 2023 և հետագա տարիների գործունեության ծրագրերում նախատեսել աշխատանքի իրավունքի ոլորտում ստուգման արդյունքներով տեսչական մարմնի և դրա աշխատակիցների դեմ բերված դիմում բողոքների հարաբերակցությունը կրճատելու ուղղությամբ միջոցառումներ, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների իրազեկման, ստուգման արդյունքների նախնական քննարկումների և պարզաբանումների ներկայացման, տեսուչների վերապատրաստման, ստուգման եզրակացությունների որակի բարձրացման միջոցով:
34. ԱՎՏՄ 2023 թվականի և հետագա տարիների գործունեության ծրագրերում նախատեսել միջոցառումներ՝ աշխատանքի իրավունքի ոլորտում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշի նվազեցման ուղղությամբ, այն հաշվով, որ 1 ստուգման համար նախատեսված ծախսերը վերադառնան տեսչության կողմից իրականացվող ստուգումների միջինին:

ԱՎՏՄ գործունեության կատարողականի գնահատման մասով

35. ԱՎՏՄ գործունեության կատարողականի գնահատման համակարգում, աշխատանքի իրավունքի վերահսկողության ոլորտի համար սահմանել հիմնական արդյունքային նպատակին հասնելու թիրախային ցուցանիշ, իրականացնել դրա աճի կամ նվազեցման գնահատում:
36. ԱՎՏՄ 2022 և հետագա տարիների գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություններում, գնահատման մեթոդաբանությանը համապատասխան, աշխատանքի իրավունքի ոլորտում.
- հաստատված ստուգաթերթի և ստուգումների պլանի հիման վրա իրականացնել ստուգումներ և հաշվարկել ռիսկերի գնահատման մակարդակները,
 - գնահատել առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունները՝ համադրելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալների հետ,
 - սահմանել ստուգումների նպատակային մակարդակների ցուցանիշներ, մասնավորապես՝ «ըստ անհրաժեշտության» և «ծրագրավորված» ստուգումների, ինչպես նաև բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների ու ստուգման օբյեկտների համար,

- «Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական ու մարդկային ռեսուրսները» չափանիշով հաշվարկել ֆինանսական գնահատականը, նույնիսկ այն դեպքում, երբ լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն կատարվել:
 - «ՀՀ կառավարությանը կամ համապատասխան մարմիններին ներկայացված առաջարկությունների քանակի» վերաբերյալ չափանիշով գնահատել ներկայացված առաջարկությունների քանակը, դրանց մասով ստանալ գնահատման գործակից՝ հարաբերելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշի հետ,
 - ապահովել «Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը, ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին» չափորոշիչով գնահատումները,
 - արդյունքային չափորոշիչների մասով նախատեսել և հաշվարկել աշխատանքի իրավունքի ոլորտում 3-5 բարձր ռիսկայնության բնագավառներում իրավիճակի փոփոխության վերաբերյալ գնահատումներ:
37. ԱԱՏՄ ամենամյա գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունում ապահովել աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման ֆինանսական միջոցների, ինչպես նաև մարդկային ռեսուրսների պահանջվող գնահատականները:
38. ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություններում ներառել և ԱԱՏՄ կայքէջում հրապարակել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության և տարածքային կենտրոնների տեսուչների կատարողականի գնահատման չափորոշիչներով գնահատականները:

ԱԱՏՄ կանխարգելման և իրազեկման ծրագրի մասով

39. Վերանայել ԱԱՏՄ-ի կանխարգելման և իրազեկման ծրագրի կառուցվածքը. միջոցառումները բխեցնել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում բացահայտված խնդիրներից ու գնահատված ռիսկերից, խորհրդատվությունների տրամադրումը, սեմինարների կազմակերպումը, նոր իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ միջոցառումները ներկայացնել առանձին բաժիններով, միջոցառումների համար մշակել ակնկալվող արդյունքներ, քանակապես գնահատելի և չափելի գնահատման ցուցիչներ, ակնկալվող արդյունքները տարանջատել լուծման խնդիրներից, իրազեկումը դարձնել ավելի հասցեական՝ կոնկրետ թիրախավորված սեգմենտներով և կատարման ժամկետներով:
40. ԱԱՏՄ ամենամյա գործունեության գնահատման հաշվետվություններում ապահովել ԱԱՏՄ կանխարգելման ու իրազեկման միջոցառումների, այդ թվում՝ դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպման, ձեռնարկների, բուլլետենների,

տեղեկանքների հրատարակման, բացատրական աշխատանքների իրականացման հստակ ու կոնկրետ արդյունքներ՝ մշակելով սեմինարների, դասընթացների, քննարկումների և դրանց մասնակիցների, թողարկված կամ հրապարակված ձեռնարկների, բուկլետների, հրապարակումների, իրավական ակտերի դրույթների վերաբերյալ իրականացված բացատրական աշխատանքների, շահառու (թիրախ) խմբերի քանակի վերաբերյալ միասնական վիճակագրական տվյալներ:

41. ԱԱՏՄ ամենամյա գործունեության «կանխարգելման և իրազեկման միջոցառումների ծրագրի» իրականացման ֆինանսավորման մասով, բացի միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակության միջոցներից, դիտարկել նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների ներգրավման հնարավորությունը՝ ԱԱՏՄ կանխարգելման և իրազեկման միջոցառումների ամենամյա ծրագիրը ներկայացնելով որպես բյուջետային ծրագիր և ապահովելով ԱԱՏՄ-ին վերապահված վերահսկողության ոլորտներում սահմանված քաղաքականության իրականացումը:

ԱԱՏՄ տեսուչների բարեկարգության մասով՝

42. Ուժը կորցրած ճանաչել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 2020 թվականի մարտի 16-ի «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատողների վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 328-Լ որոշումը: ԱԱՏՄ ծառայողների համար հիմք ընդունել ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության կողմից մշակված և ՀՀ փոխվարչապետի կողմից հաստատված վարքագծի կանոնագիրքը:
43. ԱԱՏՄ որակի կառավարման վարչությանը. վերանայել և լրամշակել «Տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման» հարցաթերթի միջոցով տեսուչների վարքագծի «բարեկրթության և հարգալիության», «անաչառության և անկողմնակալության» գնահատման հարցաշարը:
44. ԱԱՏՄ որակի կառավարման վարչությանը. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակի հետ համատեղ ապահովել տեսուչների կողմից շահերի բախման իրավիճակների վերաբերյալ գրավոր հայտարարությունների ձևաթղթերի, դրանց գրանցման ու հաշվառման գործընթացների մշակման ընթացակարգեր, տեսուչների վերահսկողական գործունեությամբ պայմանավորված՝ շահերի բախման (տեսուչի ուղղակի կամ անուղղակիորեն շահագրգռվածության) հնարավոր հանգամանքների (ռիսկային իրավիճակների կամ գործոնների) և տնտեսվարող սուբյեկտների հետ պոտենցիալ կամ հավանական փոխկապակցվածության ցանկերի ստեղծումը և պարբերաբար թարմացումը:

Նախաբան

ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ), աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության արդյունավետության մոնիտորինգի զեկույցը մշակված է «Արժանապատիվ աշխատանք հիմա՝» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնի (այսուհետ՝ ԹԻՀԿ), Հասարակական հետազոտությունների առաջատար խմբի, «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոնի կողմից՝ Կրթություն և համերաշխություն արհմիության հետ համատեղ:

Ուսումնասիրությունն իրականացվել է ԱԱՏՄ-ին աշխատանքային օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացման գործառնությունների վերապահման՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածի համար: Սույն զեկույցում ներկայացված արդյունքները համարվում են ելակետային (baseline), որի հիման վրա առաջիկա տարիներին կգնահատվի ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում արձանագրված առաջընթացը:

Ներածություն

2004 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված Աշխատանքային օրենսգրքի¹ (այսուհետ՝ Օրենսգիրք) կարգավորումներով ստեղծվել է աշխատանքային օրենսդրության կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացնող մարմին՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը: Նույն թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), որն ուժի մեջ է մտել 2005 թվականի դեկտեմբեր ամսից²: Կոնվենցիան աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման առնչությամբ գլխավոր միջազգային իրավական փաստաթուղթն է, որը սահմանում է պետության կարևոր պարտավորությունները, հատկապես՝ աշխատանքային իրավունքների նկատմամբ հսկողության և վերահսկողության առումով:

ՀՀ կառավարության կողմից 2009 թ. մեկնարկած տեսչական բարեփոխումների արդյունքում 2013 թվականին ՀՀ կառավարության N 857-Ն որոշմամբ³ ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը, միաձուլվելով ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ, վերակազմակերպվեց ՀՀ առողջապահական պետական տեսչության: Նորաստեղծ մարմինը, որը միաձուլված տեսչությունների իրավահաջորդն էր, պետք է շարունակեր ապահովել աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողությունն ու

¹ ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577>

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98210>

վերահսկողությունը: ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշմամբ⁴ ձևավորվեց ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը, որն իրականացնում էր վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառնություններ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցներ կիրառում առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառներում: Վերը նշված որոշմամբ՝ աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում չէր գործում պետական վերահսկողություն, և չկար որևէ պետական կառույց, որը կապահովեր աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքի պայմանների և պաշտպանության հետ կապված իրավական դրույթների կատարումը: Այնուհետև, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 7-րդ հոդվածի 10-րդ մասով ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը 2018 թվականի հունիսի 11-ին վերակազմավորվեց ՀՀ կառավարությանն առընթեր առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏԱ), որի կանոնադրությունը հաստատվեց ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ⁵: 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ԱԺ կողմից ընդունված «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով⁶, օրենսգրքի 33-րդ հոդվածով նոր լիազորություններ ամրագրվեցին ԱԱՏԱ-ին՝ վերջինիս վերապահելով «Գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ»: ԱԱՏԱ-ին վերապահված նոր լիազորությունները ուժի մեջ են մտել 2021 թ. հուլիսի 1-ից:

Սույն ուսումնասիրությամբ գնահատվել է աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏԱ գործունեության արդյունավետությունը 4 հիմնական բաղադրիչներով՝

1. ԱԱՏԱ աշխատանքային օրենսդրության ոլորտում տեսչության գործունեության օրենսդրական դաշտ,
2. ԱԱՏԱ գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատում,
3. Տնտեսվարող սուբյեկտներին խորհրդատվության տրամադրում և իրազեկում,
4. ԱԱՏԱ տեսուչների շահերի բախման և բարեվարքության պահանջների պահպանում:

Զեկույցի յուրաքանչյուր բաղադրիչի համար ամփոփված եզրակացությունների հիման վրա մշակվել են գործնական առաջարկություններ՝ ուղղված ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի, մասնավորապես՝ աշխատանքային

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=113099>

⁵ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170956>

⁶ ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577>

օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության օրենսդրական, կազմակերպչական և կառավարման խնդիրների լուծման ուղղությամբ:

ԱԱՏՄ կայացածության և արդյունավետ գործունեության ապահովման նպատակով առաջարկությունների շարքում առանձնացվել են ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության կարողությունների զարգացմանը միտված մեթոդական, մասնագիտական ուղեցույցներով, հրահանգներով, խորհրդատվական նյութերով, տեսչության ծառայողների մասնագիտական վերապատրաստման, այդ թվում՝ բարեվարքության կարիքների բացահայտմանը և իրականացմանը ուղղված միջոցառումները:

Սույն զեկույցին կից հավելվածները ներառում են.

Հավելված 1– Հարցաշար՝ ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի ԱՕԿԿ գործառույթների իրականացման մասով:

Հավելված 2 – Հարցաշար՝ ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի ԱՕԿԿ գործունեության կատարողականի գնահատման չափորոշիչների մասով:

Հավելված 3 – Հարցաշար՝ ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի տնտեսվարող սուբյեկտների իրազեկմանը և խորհրդատվության տրամադրմանը միտված միջոցառումների մասով:

Հավելված 4 – Հարցաշար՝ ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի ԱՕԿԿ ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման և մասնագիտական կարողությունների զարգացման մասով:

Հավելված 5 – Հարցաթերթ՝ Տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման :

Մեթոդաբանություն

Մոնիտորինգի նպատակն է՝ գնահատել աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության արդյունավետությունը, վերահսկողության գործիքակազմերի և մեխանիզմների կիրարկման կարողությունները, վեր հանել օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի բացերը և մշակել առաջարկություններ՝ միտված աշխատանքային իրավունքների պետական վերահսկողության մեխանիզմների և գործիքակազմերի բարելավմանը, ԱԱՏՄ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Մոնիտորինգի խնդիրներն են՝ գնահատել

- ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի օրենսդրական կարգավորումներն ու կիրառվող գործիքակազմերը, դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը և ԱՄԿ չափանիշներին,

- ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականը՝ համեմատելով սահմանված ծրագրի և փաստացի աշխատանքի արդյունքները,
- տնտեսվարող սուբյեկտներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման միջոցառումների իրականացման արդյունավետությունը,
- տեսուչների շահերի բախման և բարեվարքության պահանջների պահպանման գործում վերապահված գործառույթների իրականացման համապատասխանությունն օրենսդրական պահանջներին:

Ուսումնասիրության մեթոդները և տեղեկատվության հավաքագրման աղբյուրները

Ուսումնասիրությունն իրականացվել է փաստաթղթերի համեմատական վերլուծության մեթոդով (փաստաթղթերի դիտարկման որակական և քանակական մոտեցումներով): Հավաքագրվել է ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տեսչությանը վերապահված գործառույթների իրականացման և վերահսկման մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվություն՝ հիմք ընդունելով ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում օրենքով և ենթաօրենսդրական ակտերով վերապահված գործառույթների ու վերահսկողության մեխանիզմների իրականացման դրույթները: Մասնավորապես ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

Միջազգային իրավական կարգավորումներ և փորձ

- «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիա,
- աշխատանքի տեսչության գործունեության կարգավորման միջազգային փորձ (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Լեհաստան, Չինաստան, Հունաստան):

Իրավական ակտեր

- Օրենսդրական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրք, «Կառավարության կառուցվածքի և գործունեության կազմակերպման մասին» ՀՀ օրենք, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք և այլն,
- Ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշում՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի N 22 Ա հրաման՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի N 152-Ա հրաման՝ ՀՀ ԱԱՏՄ աշխատանքի վերահսկողության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2020 թ. ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի

տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 718-Ն որոշում և այլն,

- ԱԱՏՄ գործունեության 2021-2022 թթ. ծրագրեր, գործունեության և կատարողականի գնահատման հաշվետվություններ և այլն:

Պաշտոնական հարցումների պատասխաններ

- ԱԱՏՄ ԱՕԿԿ գործառույթների իրականացման, ԱԱՏՄ գործունեության արդյունավետության ու կատարողականի, տնտեսվարող սուբյեկտներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման, ինչպես նաև ԱՕԿԿ և տարածքային կենտրոնների ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման և մասնագիտական կարողությունների զարգացման վերաբերյալ:

ԱԱՏՄ կողմից ստացված պատասխանների բովանդակային վերլուծության և օրենսդրական կարգավորումներին համադրման մեթոդով բացահայտվել են ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության արդյունքներն ու բացերը:

Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեությունը գնահատելու նպատակով տեղեկատվության հավաքագրման առաջնային աղբյուր են հանդիսացել ԱԱՏՄ տարեկան գործունեության ծրագրերը և դրանց իրականացման հաշվետվությունները, կատարողականների գնահատման արդյունավետության, ինչպես նաև ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծության արդյունքները, տնտեսվարող սուբյեկտների իրազեկմանը և խորհրդատվության տրամադրմանը միտված միջոցառումների իրականացման վերաբերյալ ԱԱՏՄ կայքէջում հրապարակված տեղեկատվությունը:

Տեղեկատվության հավաքագրման գործընթացում տվյալների հավաստիության ստուգման նպատակով ստացված տեղեկատվությունը և եզրահանգումները համադրվել են նաև ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կատարողականի գնահատման մոնիտորինգի արդյունքների հետ:

Մոնիտորինգի արդյունքում հավաքագրված տվյալներն ամփոփվել են բովանդակային վերլուծության մեթոդով՝ դրանք համադրելով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ-ին վերապահված գործառույթների ու տեսչության կառավարման խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի միջոցառումների կատարման հետ:

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում կայացածության գնահատում

Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ՀՀ ԱԱՏՄ կայացածության (արդյունավետության) գնահատումը կատարվել է փորձագիտական գնահատման մեթոդով:

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության կայացածությունը գնահատվել է 3 մակարդակներում՝ «Գործում է լիարժեք», «Գործում է ոչ լիարժեք» և «Կայացման փուլում է»: Կայացածության յուրաքանչյուր փուլի համար սահմանվել են գնահատման տոկոսային միջակայքեր, համապատասխանաբար՝ «Գործում է լիարժեք» - [80-100%], «Գործում է ոչ լիարժեք» - [50-79%] և «Կայացման փուլում է» - [30-49%]: Ընդ որում մինչև 30 տոկոսային միջակայքն ամենացածր ցուցանիշն է և դիտարկվել է որպես սահմանային, որից հետո միայն հնարավոր է չափել կայացածության աստիճանը:

Գնահատումն իրականացվել է ներքոշարադրյալ 5 չափորոշիչներով՝

6. ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության ոլորտում գործունեության ապահովման օրենսդրական դաշտ և դրա համապատասխանությունը ԱՄԿ ստանդարտներին,
7. ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի համար նախանշված միջոցառումներ,
8. աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության կատարողականի և տեսուչների կատարողականի իրականացման աստիճան,
9. տնտեսվարողներին խորհրդատվության և իրազեկման ծրագրային աշխատանքներ,
10. տեսուչներին ներկայացվող բարեվարքության պահանջների պահապանման, այդ թվում՝ շահերի բախման իրավիճակների կառավարում:

Վերոնշյալ չափորոշիչներից յուրաքանչյուրը գնահատվել է հավասար տոկոսային բալերով՝ առավելագույնը $100/5=20$ տոկոսային կետով:

ՀՀ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության կայացածության մակարդակի գնահատման համար կիրառվել է գնահատման հետևյալ հաշվարկային բանաձևը՝

$$\sum \text{Կայացածություն} = \sum \text{օրենսդրական համապատասխանություն} + \sum \text{ամենամյա գործունեության ծրագիր} + \sum \text{կատարողականի գնահատում} + \sum \text{խորհրդատվություն և իրազեկում} + \sum \text{բարեվարքություն և շահերի բախում}:$$

Գնահատումը կատարվել է ԹԻՀԿ ծրագրային թիմի կողմից, որոնք անմիջականորեն ներգրավված են եղել ուսումնասիրության իրականացման և մոնիտորինգի զեկույցի պատրաստման գործում: Մասնավորապես, յուրաքանչյուր չափորոշիչի մասով գնահատված տոկոսային բալերի միջին թվաբանական հանրագումարը հաշվարկվել է $\sum_1 + \dots + \sum_N / N$, բանաձևով, որտեղ N-ը փորձագետների թիվն է:

Ընտրված փորձագետների կողմից, 5 չափորոշիչներով գնահատված տոկոսային բալերի միջին թվաբանական հանրագումարը, համադրելով աղյուսակ 1-ի (ՀՀ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության կայացածության մակարդակի գնահատման սանդղակ) գնահատման տոկոսային միջակայքի հետ՝ որոշվել է ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում կայացածության մակարդակը:

Աղյուսակ 1. ՀՀ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության կայացածության մակարդակի գնահատման սանդղակ

Կայացածության մակարդակ	Զափորոշիչի նկարագրություն	Գնահատման տոկոսային միջակայք
«Գործում է լիարժեք»	Երբ ԱԱՏՄ-ն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում իրականացնում է՝ • օրենսդրորեն իրեն վերապահված բոլոր գործառնությունները, • ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի համար նախանշված միջոցառումները, որոնք բխում են վերահսկողության ոլորտի խնդիրներից ու ռիսկերից, • ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում իրեն վերապահված գործունեության և տեսուչների կատարողականի գնահատում, • ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարողներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման հաստատված ծրագրի միջոցառումները, • տեսուչներին ներկայացվող շահերի բախման իրավիճակների պահանջների բացահայտումը՝ նախքան տեսչավորման գործընթացի մեկնարկը:	80-100
«Գործում է ոչ լիարժեք»	Երբ, ԱԱՏՄ-ն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում իրականացնում է՝ • օրենսդրորեն իրեն վերապահված գործառնությունների ավելի, քան կեսը, • ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրով նախանշված ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի միջոցառումների ավելի քան կեսը, որոնք բխում են վերահսկողության ոլորտի խնդիրներից ու ռիսկերից, • իր գործունեության և տեսուչների կատարողականի գնահատումը, ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի առնվազն կեսը ներառված են կատարողականի գնահատման գործընթացում,	50-79

Կայացածության մակարդակ	Չափորոշիչի նկարագրություն	Գնահատման տոկոսային միջակայք
	- ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարողներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման հաստատված ծրագրի միջոցառումների ավելի քան կեսը, - տեսուչներին ներկայացվող շահերի բախման իրավիճակների բացահայտում տեսչավորման գործընթացի ավարտին՝ դիմումների կամ բողոքների արդյունքում:	
«Կայացման փուլում է»	Երբ, ԱԱՏՄ-ն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում իրականացնում է՝ - օրենսդրորեն իրեն վերապահված գործառնությունների ոչ ավելի, քան կեսը, - ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի միջոցառումների ոչ ավելի, քան կեսը, որոնք բխում են վերահսկողության ոլորտի խնդիրներից ու ռիսկերից, - իր գործունեության և տեսուչների կատարողականի գնահատումը, աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտների կեսից քիչն է ներառված կատարողականի գնահատման գործընթացում, - ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարողներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման հաստատված ծրագրի միջոցառումների ոչ ավելի, քան կեսը, - տեսուչներին ներկայացվող՝ շահերի բախման իրավիճակների բացահայտումը, իսկ բացահայտման դեպքում դրանք կրում են էպիզոդիկ բնույթ, բացակայում են շահերի բախման բացահայտման և կառավարման գործընթացները:	30-49

ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԱՏՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԸ

1.1 ԱԱՏՍ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ՀՀ ներպետական օրենսդրությունը և կիրառվող գործիքակազմերը

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավունքների՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում պետական վերահսկողությունն իրականացնում է ԱԱՏՍ-ն: ԱԱՏՍ-ն ստեղծվել է «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի պահանջներին համապատասխան: Այն 2018 թվականի հունիսի 11-ին վերակազմավորված ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի իրավահաջորդն է: ԱԱՏՍ կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ: 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ԱԺ կողմից ընդունված «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով⁷, օրենսգրքի 33-րդ հոդվածով և ՀՀ Վարչապետի 2020 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ⁸՝ Նոր լիազորություններ ամրագրվեցին ԱԱՏՍ-ին՝ վերջինիս վերապահելով «Գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ»: ԱԱՏՍ շենքային և այլ տեխնիկական պայմանները համապատասխանեցնելու և նախապատրաստելու նպատակով վերոնշյալ դրույթները ուժի մեջ են մտել 2021 թվականի հուլիսի 1-ից:

ԱԱՏՍ նպատակը օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումն է:

ԱԱՏՍ խնդիրներն են՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման,

⁷ ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577>

⁸ ՀՀ Վարչապետի 2020 թվականի հուլիսի 3-ի N768-Լ՝ «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» որոշում.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143993>

բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

Աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումը աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությունն է:

ԱԱՏՄ գործունեության օրենսդրական կարգավորումներ

ԱԱՏՄ գործունեությունը կարգավորվում է ԱՄԿ Կոնվենցիայով, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ ԱԱՏՄ գործունեությունը կարգավորվում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, «Վարչարարության և վարչական հիմունքների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 2018 թ. հունիսի 11-ի, թիվ 755-Լ որոշմամբ հաստատված ԱԱՏՄ կանոնադրությամբ և այլն:

Համաձայն ԱԱՏՄ-ի կանոնադրության՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող և Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցներ է կիրառում առողջապահության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառներում հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Մասնավորապես աշխատանքային իրավունքի ոլորտում՝ ԱԱՏՄ-ին լիազորություն է վերապահված վերահսկողություն իրականացնելու

- աշխատանքային պայմանագրերի կնքման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման,
- աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողությունների պահպանման,
- օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման,
- օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման ենթակա գումարների ժամանակին վճարման,
- կոլեկտիվ պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ:

Աշխատանքի իրավունքի ոլորտում ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող պետական վերահսկողությունը բաժանվում է վերահսկող, կանխարգելիչ, իրազեկման գործառույթների:

Վերահսկող գործառույթները ներառում են ԱԱՏՄ կանոնադրության 11-րդ կետի 10-րդ ենթակետում, ինչպես նաև 12-րդ և 16-րդ ենթակետերում սահմանված հետևյալ լիազորությունները՝

«ա. աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների, այդ թվում՝ աշխատանքի անվտանգության կոլեկտիվ և անհատական պաշտպանիչ միջոցների առկայության, պահպանման և շահագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

դ. մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա ինամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

ե. աշխատանքային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով աշխատանքների ժամանակավորապես դադարեցումը՝ մինչև խախտումները վերացնելը,

ը. կազմակերպությունների լուծարման ընթացքում աշխատողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողության իրականացումը՝ իր լիազորությունների շրջանակներում,

թ. կոլեկտիվ պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

ժ. օրենքով սահմանված կարգով վերահսկողական գործառույթներ իրականացնելիս՝ գործատուից կամ նրա ներկայացուցչից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից աշխատողների իրավունքներին առնչվող անհրաժեշտ փաստաթղթեր, բացատրություններ, տեղեկանքներ, այլ տեղեկություններ պահանջելն ու ստանալը և փաստաթղթերի կրկնօրինակներ վերցնելը,

ժա. աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողությունների պահպանման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

ժբ. աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների հաշվառման և քննման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի պահպանման և օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման ենթակա գումարների ժամանակին վճարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

Ժգ. աշխատանքային օրենսդրությամբ սահմանված խտրականության արգելքների պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

12) աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը,

16) վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների, իր վերահսկողության բնագավառում գործող տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառնությունների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտները, տնտեսվարող սուբյեկտները»:

2. Կանխարգելման գործառնությունները ներառում են ԱՎՏՄ կանոնադրության 11-րդ կետի 10-րդ և 17-րդ ենթակետերով սահմանված հետևյալ լիազորությունները՝

«բ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառների ուսումնասիրումը, վերլուծումը և դրանց կանխարգելման նպատակով գործատուին միջնորդություններ և (կամ) առաջարկություններ ներկայացնելը,

Է. աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ լիազորված մարմին առաջարկության ներկայացումը,

17) իր լիազորությունների շրջանակում բացահայտված՝ օրենքով չարգելված տեղեկատվության փոխանակումն այլ տեսչական մարմինների հետ՝ վերահսկողական գործառնությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով»:

3. Իրազեկման գործառնությունները ներառում են ԱՎՏՄ կանոնադրության 11-րդ կետի 10-րդ ենթակետում, ինչպես նաև 13-րդ, 15-րդ ենթակետերում սահմանված հետևյալ լիազորությունները՝

«գ. գործատուներին, աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին՝ աշխատողների անվտանգության ապահովմանը և առողջության պահպանմանը, աշխատանքային հարաբերություններին առնչվող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության և (կամ) խորհրդատվության տրամադրումը,

գ. գործատուների, աշխատողների և նրանց ներկայացուցիչների համար աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման ուղղությամբ սեմինարների կազմակերպումը,

13) աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և

դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսվարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը,

15) տնտեսվարող սուբյեկտի գործունեությանն առնչվող, իր իրավասությանը վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում դրա մասին «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտների իրազեկման ապահովումը»:

Հարկ է նշել, որ ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված՝ վերահսկող, կանխարգելիչ և իրազեկման գործառույթներն ամբողջությամբ բխում և համապատասխանում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով տեսչական մարմինների գործունեությանը ներկայացվող պահանջներին:

ԱԱՏՄ վերահսկողության գործիքակազմեր

ԱԱՏՄ-ն աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ոլորտում իրեն վերապահված գործառույթներն իրականացնում է ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով:

Ստուգումներ

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողական գործառույթի իրականացման հիմնական գործիքը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով (այսուհետ՝ Ստուգումների մասին օրենք) սահմանված ստուգումների կազմակերպումն ու իրականացումն է: Ստուգումների մասին օրենքի 2.1. հոդվածի 2-րդ մասի⁹ պահանջներին համապատասխան՝ տեսչական մարմինների կողմից տնտեսվարող սուբյեկտի՝ աշխատանքային իրավունքի ոլորտում ստուգումներն իրականացվում են տնտեսվարող սուբյեկտի՝ աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափորոշիչների¹⁰ և ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատվում են ՀՀ կառավարության կողմից: Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափորոշիչների գնահատման՝ տնտեսվարող սուբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից մեկում՝

- բարձր ռիսկայնության,
- միջին ռիսկայնության,
- ցածր ռիսկայնության:

⁹ Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք.

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=164935>

¹⁰ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N 1948-Ն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157959>

Համաձայն, աշխատանքի իրավունքի ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանության՝ «Ռիսկի գնահատման համար իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների տվյալների բազայի ձևավորում և պարբերաբար թարմացում՝ ըստ ոլորտային և անհատական ռիսկայնության չափանիշների: Ռիսկը վերահսկողության ենթակա յուրաքանչյուր ոլորտում գնահատվում է բազայում ներառված նախորդ տարվա տեղեկատվության հիման վրա՝ հաջորդ տարվա ընթացքում ռիսկի վրա հիմնված ստուգում իրականացնելու նպատակով»¹¹: Վերջինս հիմք է հանդիսանում բացառապես տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնությունը որոշելու և ստուգումների տարեկան ծրագիրը կազմելու համար:

Հաշվի առնելով, որ ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը և ռիսկերի չափորոշիչները հաստատվել են 2021 թվականի նոյեմբերի 25-ին, իսկ աշխատանքային իրավունքի ոլորտում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը հաստատվել է ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 299-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 20-ին, հետևաբար, աշխատանքային իրավունքի ոլորտի ստուգաթերթը¹², որպես ստուգումների իրականացման գործիք, չի գործել և հիմք չի հանդիսացել 2021 թվականի ստուգումների ծրագրի կազմման համար:

ԱԱՏՄ-ն տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացնում է ստուգում նաև այն դեպքերում, երբ

- Հայաստանի Հանրապետության Վարչապետից ստացել է հանձնարարական,
- քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացել է դիմում,
- պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ գրավոր տեղեկատվություն¹³:

ԱԱՏՄ-ն տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգում է իրականացնում նաև այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը դիմում է ներկայացրել իր կազմակերպությունում ստուգում իրականացնելու վերաբերյալ կամ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտումներ կատարվելու փաստը բացահայտվել և հիմնավորվել է այլ տնտեսվարող սուբյեկտում անցկացված ստուգման ընթացքում և այլն:

¹¹ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N 1948-Ն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157959>

¹² ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 10-ի N 299-Ն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշում. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=160875>

¹³ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73114>

Դիմումներ և բողոքներ

ԱԱՏՄ կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-L՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգը սահմանելու մասին» որոշումը կարգավորում է դիմում-բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու գործընթացը:

ԱԱՏՄ-ն հանրությունից ընդունում և քննության է առնում տնտեսվարող սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքները: Բողոքները կարող են ներկայացվել առձեռն կամ փոստով (Էլեկտրոնային փոստով կամ պաշտոնական կայքէջում առցանց դիմում լրացնելով): Ստուգումների մասին օրենքի համաձայն՝ այն դիմումները, որոնցով հնարավոր չէ ճշտել դիմումատուի անձը, օրենքով նախատեսված փաստերի մասին տվյալներ չպարունակող դիմումները ստուգում անցկացնելու հիմք չեն կարող լինել: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարչական մարմին դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

- ա) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.
- բ) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).
- գ) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը.
- դ) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա).
- ե) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են).
- զ) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.
- է) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ստացված բողոքները հիմք չեն ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնելու համար՝ առանց հետագա դիտարկման: Դրանք հիմնականում հիմք են ծառայում համապատասխան տնտեսվարող սուբյեկտի ռիսկայնության գնահատականի փոփոխության համար: Ըստ անհրաժեշտության ստուգումներն անցկացվում են միայն այն դեպքում, երբ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ երբ նույն տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ: Բողոքի հիման վրա ստուգում իրականացնելու ընդհանուր կանոնը (ՀՀ կառավարության 18.06.2015 թ. թիվ 711-Ն որոշմամբ սահմանված) գործում է, եթե բողոքը պարունակում է տնտեսվարողի կողմից օրենսդրության խախտման մասին վկայող տեղեկատվություն, որի համաձայն վտանգվում կամ վնասվում է քաղաքացիների կյանքը, առողջությունը, վտանգվում կամ վնասվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերը: ԱԱՏՄ կառավարման խորհրդի 06.11.2019 թ. թիվ 14-L որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգում սահմանված են նաև հատուկ կանոններ առ այն, որ ստուգումն իրականացվում է, եթե անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի աստիճանը բարձր է կամ նույն տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ 60 օրվա ընթացքում ստացվել են 2 և ավելի բողոքներ:

Նշված իրավակարգավորումների պայմաններում քաղաքացիները գրկված են անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունքից, ինչը խոցելի է դարձնում վերջիններիս իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով ԱԱՏՄ անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու տեսանկյունից:

Աշխատանքային իրավունքի բնագավառում, ԱԱՏՄ-ի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, դիմում բողոքներին արագ արձագանքելու, հանրության հետ կապը ավելի սերտացնելու նպատակով 2021 թվականին գործարկվել է աշխատողներից անանուն բողոքների ստացման www.employeeprotect.am համակարգը: Սակայն հարկ է նշել, որ կայքը չի կարող արդյունավետ աշխատել, քանի որ առկա է օրենսդրական սահմանափակում անանուն բողոքներին ընթացք տալու վերաբերյալ: Այդ իսկ պատճառով մինչ օրս այդ հնարավորությունն ապահովված չէ ԱԱՏՄ-ի կողմից, որի մասին նշված է հենց էլեկտրոնային հարթակում. «Հարգելի հայտատուներ, «employeeprotect.am» էլեկտրոնային հարթակի գործարկման ներկայիս փուլում անանուն հայտեր չեն կարող ներկայացվել: Անանուն հայտեր ներկայացնելու հնարավորության առկայության պարագայում՝ հարթակում կտեղադրվի համապատասխան ծանոթություն»: ԹԻՅԿ-ի հարցման արդյունքները նույնպես վկայում են, որ անանուն դիմումներին ընթացք չի տրվում:

Քաղաքացիների կողմից բողոքները կարող են փոխանցվել նաև ԱԱՏՄ-ում գործող 81-07 թեժ գծի զանգերի միջոցով: ԱԱՏՄ-ն, 2021 թվականի տարեկան հաշվետվության համաձայն, թեժ գծով 2021 թվականին ստացվել է 4411 զանգ, 2020 թվականի համեմատ՝ 76,4 %-ով ավելի, նշված զանգերից 1306-ը վերաբերվել են աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտին: Թեժ գծով ստացված մասնագիտական պարզաբանումների վերաբերյալ հեռախոսազանգերն ուղղորդվում են ԱԱՏՄ համապատասխան վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ: ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության համաձայն՝ թեժ գծով բարձրացված բոլոր հարցերը ստացել են պատասխաններ: Հարկ է նշել, որ թեժ գծով բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ տրված պարզաբանումները ընդհանրացված և տեղադրված չեն ԱԱՏՄ-ի կայքում «Հարց ու պատասխան» ձևաչափով՝ որպես աշխատանքային իրավունքների իրազեկման կարևոր աղբյուր:

Տեղեկատվության փոխանակման համակարգ

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1606-Ն որոշմամբ¹⁴ ստուգում իրականացնող յուրաքանչյուր մարմին վարում է տվյալների բազա և դրանում ներառում է տեղեկատվություն՝ իր վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի մասին: Եթե բազայում առկա չէ տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ անհրաժեշտ

¹⁴ ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 20-ի N 1606-Ն՝ «Ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ իրենց տվյալների բազաներում առկա տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» որոշում. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=80192>

տեղեկությունը, ապա ստուգող մարմինը գրավոր հարցում է կատարում ստուգում իրականացնող այն մարմնից, որը տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, և ում վերահսկման ոլորտում են գործում տնտեսվարող սուբյեկտները:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ով վերահսկողություն իրականացնող մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ-ի և այլ վերահսկող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և վերահսկողության հետ կապված տեղեկատվությունը տնտեսվարող սուբյեկտներին և հանրությանը մեկ տեղում հասանելի դարձնելու նպատակով՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ենթակայության ներքո ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 678-Ն որոշմամբ¹⁵ պետք է ստեղծվեր էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (վերահսկողության միասնական էլեկտրոնային շտեմարան և տեղեկատվության փոխանակման համակարգ): Միասնական տեղեկատվական հարթակը թույլ է տալիս մեկ տեղում հավաքել յուրաքանչյուր տեսչական մարմնի կողմից նախորդ երեք տարիների ընթացքում անցկացրած ստուգումների կամ ուսումնասիրությունների, ինչպես նաև առաջիկա մեկ տարվա ընթացքում տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտի և վերահսկողության ենթակա օբյեկտների տվյալները: Նշված որոշման համաձայն՝ համակարգի ներսում տվյալների փոխանակումը պետք է իրականացվի շաբաթական կտրվածքով:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 731-Լ որոշմամբ¹⁶ գրասենյակի հիմնական խնդիրը «էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումն է», իսկ վերապահված գործառնություններից՝ «տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման և շարունակական կատարելագործման աշխատանքներին աջակցումը: Այդուհանդերձ, ԹԻՂԿ հեռախոսային հարցման արդյունքները ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակից և ԱԱՏՄ-ից վկայում են, որ ԱԱՏՄ և վերահսկողություն իրականացնող այլ պետական մարմինների միջև էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման, տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգ դեռևս չի ձևավորվել:

Աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակ

¹⁵ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 678-Ն՝ «Տեսչական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու կարգը և տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման միջոցառումների իրականացման քայլերի հաջորդականությունը սահմանելու մասին» որոշում.

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=115070>

¹⁶ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 731-Լ՝ «Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131794>

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշման¹⁷ հավելված 1-ով ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակին վերապահված 11-րդ միջոցառմամբ նախատեսված է «Աշխատողների իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ-ում ներդնել աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակ, որը պետական մարմինների համար պարտադիր կլինի 2023 թվականի հուլիսից, իսկ ոչ պետական մարմինների համար՝ 2025 թվականից: Նախանշված միջոցառման իրականացման պատասխանատու կատարողներ են ճանաչվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ԱԱՏՄ-ն: Ի կատարումն նշված նախաձեռնության ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի՝ «տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ» աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկման միջոցառման մասով, ԱԱՏՄ-ն մասնակցություն է ունեցել աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի ստեղծման նպատակով կազմակերպված աշխատաժողովին, որի ընթացքում քննարկվել են հարթակի նպատակի, հիմնական գործառնությունների, նշանակության և տեխնիկական առաջադրանքի մշակման հարցերը: Միաժամանակ, ԱԱՏՄ-ի կողմից մշակվել է աշխատանքային օրենսգրքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, ինչպես նաև աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխանող տիպային աշխատանքային պայմանագրերի, աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտերի տիպային օրինակելի ձևաթղթերը¹⁸:

ԱԱՏՄ ռեսուրսներ և կարողություններ

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում բնականոն գործունեության ապահովման կարևորագույն նախադրյալը՝ ԱԱՏՄ-ի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների առկայությունն է, դրանց հագեցվածությունը աշխատանքային համարժեք տարածքներով, նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցներով, բարձրորակ մասնագիտական կադրերով ապահովվածությունը¹⁹:

ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-L «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշմամբ ԱԱՏՄ հիմնական կամ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին է դասվել նաև «Աշխատանքի վերահսկողության վարչությունը»: Վերջինս ՀՀ Վարչապետի 2020 թվականի հոկտեմբերի 3-ի N 1121-L «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-L որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշմամբ վերանվանվել է «Աշխատանքային օրենսդրության վերահսկողության» վարչության: Վարչությունն ունի ներքին երկու կառուցվածքային ոչ

¹⁷ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L՝ «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշում, հավելված 1. https://www.arlis.am/Annexes/6/2021_N_1902hav.1.pdf

¹⁸ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն, հավելված 2, էջ 2-3. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.2.HavelvacN2.pdf>

¹⁹ ԱՄԿ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա, հոդված 11. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

ինքնուրույն բաժիններ՝ մասնագիտացված «Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» և «Աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության» գործառնություններով:

ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներն են՝ 1) Երևան քաղաքի տարածքային կենտրոնը, 2) Հյուսիսային տարածքային կենտրոնը (Գյումրի, Իջևան), 3) Արևմտյան տարածքային կենտրոնը (Էջմիածնում), 4) Արևելյան տարածքային կենտրոնը (Գավառ), 5) Հարավային տարածքային կենտրոն (Կապան), որոնք ապահովում են նաև աշխատանքային իրավունքի, այդ թվում՝ աշխատողների առողջության պահպանման ու անվտանգության և աշխատանքային օրենսդրության ոլորտներում վերահսկողությունը:

Նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցներով ապահովվածության տեսանկյունից ԱԱՏՄ-ի տրանսպորտային միջոցների, նյութատեխնիկական և գույքային հագեցվածությունը մինչև 2019 թվականը ԱԱՏՄ-ի կողմից գնահատվել է անբավարար: ԱԱՏՄ կանոնադրական գործունեությունն ապահովելու նպատակով հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և Երևան քաղաքի տարածքային ստորաբաժանումների աշխատանքը մեկ կենտրոնից համակարգված կազմակերպելու համար ԱԱՏՄ-ին ամրացվել է 1617,4 քառ. մ տարածք: Միաժամանակ, ԱԱՏՄ Հյուսիսային և Հարավային տարածքային կենտրոնների աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու նկատառումներով, լրացուցիչ աշխատանքային տարածքներ են հատկացվել Տավուշի մարզի Իջևան, Լոռու մարզի Վանաձոր և Սյունիքի մարզի Սիսիան քաղաքներում: ԱԱՏՄ-ին հատկացված պետական բյուջեի խնայողությունների հաշվին ավարտվում են մարզային տարածքային կենտրոններին հատկացված գրասենյակների վերանորոգման աշխատանքները: ԱԱՏՄ-ին տրամադրված աշխատանքային տարածքների վերանորոգման, դրանց կահավորման ու պատշաճ աշխատանքային պայմանների ապահովման տեսանկյունից, ԱԱՏՄ-ն միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ապահովում է նաև հատկացված տարածքների վերանորոգման աշխատանքները: Մասնավորապես, ԱԱՏՄ վարչական և Երևանի տարածքային կենտրոնի ԱԱՏՄ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի միջև 2021 թվականին ստորագրված հուշագրի շրջանակներում, ԱԱՏՄ-ի կենտրոնական ապարատին և Երևանի տարածքային կենտրոնին ամրակցված տարածքի համար նախագծանախահաշվային աշխատանքների իրականացումը կատարվելու է ծրագրի օժանդակությամբ, ինչպես նաև ֆինանսավորվելու է Էներգախնայող աշխատանքների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների 20%-ը²⁰: Այդուհանդերձ, ԱԱՏՄ հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն գործունեության ապահովման համար նյութատեխնիկական և գույքով ապահովման հիմնական պատասխանատուն ՀՀ պետական բյուջեն է, որի շրջանակներում ԱԱՏՄ կառավարման խորհրդի որոշմամբ, ԱԱՏՄ 2020 և 2021 թվականների բյուջետային տնտեսված միջոցների հաշվին՝ համապատասխանաբար 38 և 58,3 մլն. դրամ է հատկացվել համակարգչային տեխնիկա, գրասենյակային և այլ անհրաժեշտ վարչական գույքի ձեռքբերման համար: Ըստ այդմ, ընդհանուր առմամբ 2021 թվականին ձեռք է բերվել 90 համակարգիչ, 40 տպիչ սարք: Ծառայողական և սպասարկման նպատակով ԱԱՏՄ-ին է ամրակցվել 19 ծառայողական

²⁰ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագիր, էջ 10. https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf

ավտոմեքենա: Արդյունքում, ԱԱՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում նոր գործառույթների իրականացման տեսանկյունից՝ ԱԱՏՄ-ն կարիք ունի գնահատելու աշխատանքի իրավունքի վերահսկողության ոլորտում աշխատանքային տարածքներով, նյութատեխնիկական միջոցներով, վարչական գույքի և սարքավորումներով ապահովվածության մակարդակը:

Աշխատանքի իրավունքի ոլորտում վերահսկողության իրականացման համար մարդկային ռեսուրսներով ապահովման տեսանկյունից՝ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության և տարածքային կենտրոնների բնականոն գործունեության ապահովման նպատակով ՀՀ Վարչապետի 2020 թ. հուլիսի 16-ի N 808-Ա որոշմամբ ԱԱՏՄ աշխատողների թիվը գործող 280 հաստիքային միավորի փոխարեն սահմանվել է 340 հաստիքային միավոր՝ ավելանալով 60-ով²¹: ԹԻՀԿ-ի ԱԱՏՄ հարցման արդյունքները վկայում են, որ ՀՀ Վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի N 808-Ա որոշմամբ²² 2021 թվականի հուլիսի 1-ից ԱԱՏՄ-ին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով գործող հաստիքների թիվը 60-ով ավելացվել է աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության և տարածքային կենտրոնների մասով: Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնելու լիազորություններ ունեցող աշխատողների հաստիքների թիվը կազմել է 92, որից 2022 թվականի ապրիլի 1-ի դրությամբ համալրված է եղել ընդամենը 51-ը: Ընդհանուր առմամբ, ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում, վերահսկողություն իրականացնելու լիազորություններ ունեցող աշխատողների հաստիքների համալրումը կազմել է 55,4 %:

ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում, վերահսկողության որակի ապահովման կարևորագույն բաղադրիչը՝ տեսուչների մասնագիտական կարողությունների զարգացումը և վերապատրաստումների պարբերաբար իրականացումն ապահովվել է: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով տեսուչների մասնագիտական կարողությունները և դրանց շարունակական կատարելագործումը տեսչական մարմինների աշխատանքի հիմքն են: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը մասնագիտական կարողությունների ներքո դիտարկում է տեսչական մարմնի ծառայողների հիմնական ունակությունները, մասնավորապես՝ ձիսկերի կառավարումը, փոխհարաբերությունները ոլորտի տնտեսվարող սուբյեկտների և հանրության հետ, համապատասխանությունը նշանակված պաշտոններին և շփումները, ինչպես նաև տեսուչի իրավասության ոլորտի հետ կապված հատուկ մասնագիտական կարողությունները: ԱԱՏՄ նոր նշանակված ծառայողների համար պաշտոնավարման ամբողջ ընթացքում նախատեսված են նախնական դասընթացների, ինչպես նաև շարունակական վերապատրաստումների իրականացման պահանջ:

²¹ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144472>

²² ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա՝ «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168233>

Օրենսդրական վերոնշյալ պահանջների իրականացումն ապահովելու նպատակով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 10-րդ հոդվածով նախատեսվում է տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման բազմակողմանի, մանրամասն և նպատակաուղղված ռազմավարական տարեկան ծրագրի հաստատում՝ ԱԱՏՄ տեսչական մարմնի կառավարման խորհրդի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ՝ համագործակցելով համապատասխան ոլորտների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Մինչդեռ, 2018 թ. ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասով քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեությունը դադարեցվել է: Նույն օրենքի հոդված 47-ի իրավահաջորդության որոշ դրույթներով նախատեսվում է պահպանել «Վերապատրաստման, ատեստավորման (կատարողականի գնահատման) հարաբերությունների իրավական հետևանքները, ինչպես նաև արդեն իսկ նախատեսված և իրականացվող գործողությունների իրավական ուժը»: Այնուամենայնիվ, ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը քաղաքացիական ծառայության խորհրդի իրավահաջորդը չի:

ԱԱՏՄ ծառայողների վերապատրաստման ծրագրերի կազմման գործընթացը կանոնակարգված է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի 7-րդ մասի պահանջներով, համաձայն որի՝ համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ համաձայնեցման: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով տեսչական մարմինների անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական բնույթի գործառնություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմը: Արդյունքում առկա է օրենսդրական անհամապատասխանություն տեսչական մարմինների ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման, «Տեսչական մարմինների մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներով ԱԱՏՄ ծառայողների վերապատրաստման ծրագրերի մշակման ու հաստատման գործընթացների կազմակերպման մասով:

ԱԱՏՄ ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման և վերապատրաստման ծրագրերի կազմման գործընթացի վերապահումը ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը, ըստ էության չի ապահովում ԱԱՏՄ ծառայողների, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության վարչության տեսուչների մասնագիտական վերապատրաստումների իրականացումը, քանի որ դրանք պետք է հիմնվեն տեսուչների վերապատրաստման կարիքների բացահայտման և անհատական ծրագրերի մշակման, ինչպես նաև տեսչության վերահսկողության ոլորտում կատարվող փոփոխությունների ու բարեփոխումների արդյունքների վրա: Քաղաքացիական ծառայության վերապատրաստման դասընթացները, մասնավորապես՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ 2022 թ. վերապատրաստման ծրագիրը, նախատեսում է միայն «Աշխատանքային օրենսդրության հիմնախնդիրները ԱԱՏՄ վերահսկողության շրջանակներում» դասընթացի իրականացում, որն ավելի շուտ միտված է տեսուչների

գիտելիքների հարստացմանը: Այդ նպատակով, ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության ծառայողների վերապատրաստման խնդիրները ներառվել են նաև ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցման ու վերացման 2021 թ. գործողությունների ծրագրում²³: Մասնավորապես, ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցման ու վերացման 2021 թ. գործողությունների ծրագրի 4-րդ միջոցառմամբ նախատեսված էր ԱՄԿ-ի հետ համագործակցության իրականացում՝ օրենսդրության կատարելագործման, ԱՄԿ-ի ստանդարտների կիրառման ապահովման, աշխատանքի իրավունքի վերահսկողության, տեսուչների վերապատրաստումների ու փորձի փոխանակման ոլորտներում: Վերոնշյալ միջոցառման մասով ԱԱՏՄ գործունեության 2021 թ. գործողությունների ծրագրի իրականացման հաշվետվությամբ²⁴ լրացվել և ԱՄԿ-ին են տրամադրվել ԱԱՏՄ աշխատանքային տեսուչների մասով վերապատրաստման կարիքների գնահատման հարցաթերթերը: Նույն ծրագրի 8-րդ՝ ԱԱՏՄ տեսուչների՝ ըստ ոլորտների վերապատրաստումների իրականացում արտերկրում կամ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ՀՀ-ում, միջոցառման շրջանակներում Վորլդ Վիժն ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով պլանավորվել է աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսուչների համար մշակել և իրականացնել պարտադիր կամ հարկադիր ենթադրյալ աշխատանքի դեպքերի հայտնաբերման և գնահատման, ինչպես նաև ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման ու հզորացման թեմայով վերապատրաստումներ: ԱԱՏՄ-ի կողմից կազմվել և Վորլդ Վիժն ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին է ներկայացվել վերապատրաստման ենթակա աշխատակիցների ցուցակը: Վերապատրաստման մոդուլի մշակման աշխատանքները ընթացքի մեջ են: Միաժամանակ, ԱԱՏՄ ղեկավարի հրամանով հաստատվել է «Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները ՀՀ-ում» ուղեցույցը:

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տեսուչների կարողությունների զարգացման և վերապատրաստումների մասով ԹԻՀԿ հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ 2021 թվականին ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության 2 աշխատակից մասնակցել են ԱՄԿ կողմից կազմակերպված «Աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների ակադեմիա» թեմայով առցանց դասընթացին, որի շրջանակներում ներկայացվել են երեխաների, հարկադիր աշխատանքի, խտրականությունը դաշխատանքում, Covid 19-ի պայմաններում աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ ԱՄԿ փորձագետների վերլուծությունները և միջազգային փորձը: ԱՄԿ-ի կողմից կազմակերպված՝ աշխատանքի կառավարման, աշխատանքի տեսչության և աշխատանքային համապատասխանության մասին դասընթացին նույնպես մասնակցել է 2 տեսուչ: ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության և տարածքային կենտրոնների 40 տեսուչի համար ԱՄԿ-ի օժանդակությամբ 2022 թվականին իրականացվել է աշխատանքային

²³ ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցման ու վերացման 2021 թ. գործողությունների ծրագիր, հավելված 1. https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf

²⁴ ԱԱՏՄ 2021 թ. տարեկան հաշվետվություն, հավելված 2. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.2.HavelvacN2.pdf>

անվտանգության և առողջության պահպանման միջազգային սկզբունքների ու հիմունքների, աշխատավայրում ռիսկերի գնահատման և տեսչության կողմից վերահսկողության, գործիքակազմի, աշխատավարձի վճարման, հանգստի ժամանակի, աշխատաժամանակի թեմաներով վերապատրաստման դասընթացներ: Դասընթացներին մասնակցած տեսուչները ստացել են մասնակցության հավաստագրեր:

Եզրակացություններ

Այսպիսով, ԱԱՏՄ գործունեության՝ ներպետական օրենսդրության, կանոնադրական խնդիրների ու գործառույթների իրականացումը ապահովող նյութատեխնիկական, տրանսպորտային, վարչական գույքի ու սարքավորումների, ինչպես նաև մարդկային ռեսուրսներով ապահովվածության, տեսուչների մասնագիտական կարողությունների զարգացման ու վերապատրաստումների, ԱԱՏՄ վերահսկողության համապատասխան գործիքակազմերով ապահովման արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում՝

- ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված վերահսկողական, կանխարգելիչ և իրազեկման խմբի գործառույթներն ամբողջությամբ համապատասխանում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:
- Առկա է ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վարչության և տարածքային կենտրոնների հաստիքների համալրման խնդիր, ինչպես նաև նշված կառուցվածքային ստորաբաժանումները նյութատեխնիկական, տրանսպորտային միջոցներով, վարչական գույքով և սարքավորումներով ապահովվածության գնահատման անհրաժեշտություն:
- «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի՝ ԱԱՏՄ տեսուչների կարողությունների զարգացման և վերապատրաստման իրականացման օրենսդրական կարգավորումները «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման և իրականացման պահանջների հետ ներդաշնակեցման կարիք ունեն:
- ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողություն իրականացնող տեսուչների մասնագիտական վերապատրաստման դասընթացները հիմնականում կազմակերպվում են միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ և աջակցությամբ:
- ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից կազմակերպվող քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացները չունեն մասնագիտական կողմնորոշում և չեն ապահովում ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տեսուչների մասնագիտական կարողությունների զարգացումը:
- ԱԱՏՄ-ի կողմից, աշխատանքի իրավունքի ոլորտում, ռիսկերի վրա հիմնված ստուգաթերթերի արդյունքներով ստուգումներ չեն իրականացվում:
- ԱԱՏՄ և վերահսկողություն իրականացնող այլ պետական մարմինների միջև ելեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման,

տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգը դեռևս չի ձևավորվել և չի գործում:

- Տնտեսվարող սուբյեկտներից և աշխատողներից անանուն բողոքների ստացման ԱԱՏՄ-ի www.employeeprotect.am էլեկտրոնային հարթակը չի գործում և անանուն դիմումներին ընթացք չի տրվում, քանի որ առկա է այն գործարկելու օրենսդրական սահմանափակում:
- Աշխատողները չունեն անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք, ինչը խոչընդոտում է նրանց աշխատանքային իրավունքների պաշտպանությանը:
- ԱԱՏՄ-ն կարիք ունի իր գործունեության ապահովման նոր գործիքակազմերի, մասնավորապես՝ աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային հարթակի, ինչպես նաև նոր ստեղծվող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների հիմնադրման ու գործունեության կազմակերպման նախապատրաստական փուլերում ԱԱՏՄ-ին նախապես ծանուցման համակարգերի ներդրմանը:

Ելնելով վերոնշյալից՝ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում օրենսդրորեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ՀՀ ներպետական օրենսդրության պահանջների համապատասխանության և գործունեության գործիքակազմերով ապահովման տեսանկյունից ԹԻՀԿ կողմից գնահատվում է 14-տոկոսային բալային միավոր և համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի՝ ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչով գտնվում է «Գործում է ոչ լիարժեք» փուլում:

Առաջարկություններ

- 1.1.1 ԱԱՏՄ ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի N 152-Ա հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով՝ «Աշխատանքային օրենսդրության վերահսկողության» վարչության կանոնադրությունը համապատասխանեցնել ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ-ին վերապահված լիազորություններին և անվանափոխությանը: Վարչության վերանայված կանոնադրությունը հրապարակել ԱԱՏՄ պաշտոնական կայքէջում՝ <https://www.hlib.am/>:
- 1.1.2 Նախաձեռնել ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների՝ նյութատեխնիկական, տրանսպորտային միջոցներով, վարչական գույքով, սարքավորումներով ապահովվածության և կադրերով համալրման կարիքների գնահատման ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով ԱՄԿ կողմից սահմանված չափորոշիչները:
- 1.1.3 ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում, համագործակցելով ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության հետ, ապահովել թափուր հաստիքների համալրման գործընթացի կազմակերպումը:
- 1.1.4 Զննարկել ԱԱՏՄ տեսուչների մասնագիտական վերապատրաստման կարիքների գնահատման և վերապատրաստումների ծրագրի մշակման գործառույթները ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման ստորաբաժանումից ԱԱՏՄ-ին փոխանցելու հարցը:
- 1.1.5 Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ-ի և միջազգային կազմակերպությունների համագործակցության շրջանակներում ծրագրավորված և իրականացվող վերապատրաստման մոդուլներն ու դասընթացների ծրագրերը

համաձայնեցնել ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ և դրանք ներառել տեսուչների վերապատրաստման պարտադիր ծրագրերի և հաշվարկվող կրեդիտների գնահատականներում:

- 1.1.6 ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տեսուչների վերապատրաստման կարիքների գնահատման շրջանակներում ընդլայնել ԱԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ԱԱՏՄ ամենամյա միջոցառումների ծրագրում նախատեսելով աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության և տարածքային կենտրոնների տեսուչների կարիքներից բխող մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ նախանշված առարկայական արդյունքներով ու գնահատման ցուցիչներով:
- 1.1.7 ԱԱՏՄ-ի կողմից մշակել առաջարկություններ՝ տնտեսվարող սուբյեկտների ու աշխատողների կողմից անանուն բողոք-դիմումների ստացման www.employeeprotect.am համակարգում անանուն դիմումների ներկայացման, դրանց արձագանքման ընթացակարգի սահմանման, դիմում-բողոքում նվազագույնը ներառվող տեղեկատվության շրջանակի, ԱԱՏՄ-ի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա հետագա վարույթների կամ ստուգումների իրականացման գործընթացների վերաբերյալ:
- 1.1.8 «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասի 9-րդ կետի 2-րդ պարբերությունում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի ա կետում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ նախատեսելով անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու օրենսդրական հնարավորություն:
- 1.1.9 ԱԱՏՄ-ի կողմից նախապատրաստել և ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակ ներկայացնել առաջարկություններ՝ ԱԱՏՄ և վերահսկողություն իրականացնող այլ պետական մարմինների միջև էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման, տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ձևավորման տեխնիկական առաջադրանքի մշակման վերաբերյալ՝ դիտարկելով տեղեկատվության կառավարման միջազգային փորձը:

1.2 Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության համապատասխանությունը աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիայի պահանջներին

Միջազգային իրավական կարգավորումների տեսանկյունից, որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության միասնական պետական կառույց, ԱԱՏՄ-ի օրենսդրական գործունեության գնահատման համար նշանակալի դերակատարում ունի Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) Գլխավոր խորհրդաժողովի կողմից 1947 թվականին ընդունված «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) պահանջներին (ստանդարտներին) համապատասխանությունը:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները, այն է՝ «Աշխատանքային տեսչության գործառույթները պետք է. (ա) ապահովեն աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքի պայմանների և պաշտպանության հետ կապված իրավական դրույթների կատարումը, (բ) այդ դրույթների պահպանման առավել արդյունավետ միջոցների մասին գործատուներին և աշխատողներին տեխնիկական տեղեկատվություն և խորհուրդներ տրամադրելը, (գ) գործող իրավական դրույթներով հատուկ չկարգավորված թերությունների և չարաշահումների մասին իրավասու մարմինն տեղեկացնելը», լիովին արտացոլված են ԱԱՏՄ կանոնադրության 3-րդ գլխի 11-րդ մասի 10-րդ կետով²⁵ սահմանված ԱԱՏՄ գործառույթներում:

Այդուհանդերձ, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի գ) կետում սահմանված՝ «գործող իրավական դրույթներով հատուկ չկարգավորված թերությունների մասին իրավասու մարմինն տեղեկացնելու» վերաբերյալ իրավակարգավորումը, որը նախատեսված է նաև ԱԱՏՄ կանոնադրության 10-րդ կետի է) ենթակետով, իրականացվում է ոչ թե իրավասու մարմինն տեղեկացնելու՝ առաջարկություն ներկայացնելու եղանակով, այլ համապատասխան նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակման և վերջնական տարբերակը լիազոր մարմինն քննարկման տրամադրելու ձևաչափով: Միաժամանակ, ԱԱՏՄ-ն ոչ միայն իրականացնում է իր կողմից վերահսկողության արդյունքում արձանագրված բացերի ու խախտումների վերացման առաջարկությունները իրավական ակտերի նախագծի տեսքով իրավասու մարմինն ներկայացնելու գործառույթը, այլև դրանց մշակման գործընթացը պլանավորում է իր գործունեության ամենամյա ծրագրերում: Մասնավորապես, ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի հավելված 1-ում, որպես առանձին ոլորտ, ներկայացված է՝ «Օրենսդրական ակտեր» բաժինը²⁶, որով նախատեսվում է ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացնել աշխատանքային օրենսդրությունը կարգավորող օրենսդրական ակտերում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական ակտերի նախագծեր:

Համաձայն՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի 1.1. ենթակետի²⁷ պահանջների՝ «Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը հավանություն է տալիս տեսչական մարմնի կողմից ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին»: Համանման կարգավորում է նախատեսված նաև ԱԱՏՄ կանոնադրության 15-րդ կետի 2-րդ ենթակետով: Այդուհանդերձ, ԱԱՏՄ կանոնադրությամբ, տեսչական մարմինն վերապահված լիազորությունների շրջանակում բացակայում է տեսչության կողմից նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման գործառույթը:

Նորմատիվ իրավական ակտերի մշակման գործառույթի վերապահումը ԱԱՏՄ-ին և ընդհանրապես տեսչական մարմիններին՝ միաժամանակ հակասության մեջ է «Կառավարության կառուցվածքի և գործունեության կազմակերպման մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ով²⁸ նախարարին վերապահված լիազորությունների հետ, այն է՝ «Կառավարության քննարկմանն է

²⁵ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում.

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=154685>

²⁶ ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրեր, հավելված 1. <https://www.hlib.am/applications/>

²⁷ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=137062>

²⁸ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք.

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=170564>

ներկայացնում օրենքների և Կառավարության որոշումների նախագծեր», ինչպես նաև նույն օրենքի հավելվածով հաստատված և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ՀՀ առողջապահության նախարարություններին վերապահված՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության, աշխատողների առողջության և անվտանգության պահպանման ոլորտներում կառավարության քաղաքականության մշակման ու իրականացման գործառույթների հետ:

Ավելին, ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությամբ²⁹ նախարարության հիմնական գործառույթ է սահմանված «աշխատանքային օրենսդրության կատարելագործման, աշխատանքային հարաբերություններում սոցիալական գործընկերության զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը», որն իրականացվում է համապատասխան զարգացման ծրագրերի, օրենսդրական ակտերի, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման և կառավարություն ներկայացնելու միջոցով: Համանման գործառույթներով է օժտված նաև ՀՀ առողջապահության նախարարությունը՝ «...աշխատանքի վայրում առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման դիտարկումը, ինչպես նաև օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, Հայաստանի Հանրապետության նախարարությունների, հանրապետական գործադիր իշխանության և տարածքային կառավարման մարմինների կողմից մշակվող, իր գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկումն ու համապատասխան եզրակացություններ ներկայացնելը»³⁰:

Տեսչական մարմինները, այդ թվում՝ ԱԱՏՄ-ն, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով³¹, իրեն վերապահված վերահսկողության ոլորտներում իրականացնում է տվյալ ոլորտում քաղաքականություն մշակող ու իրականացնող լիազոր մարմինների՝ կոնկրետ դեպքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու առողջապահության նախարարությունների կողմից տարվող քաղաքականության, հաստատված ծրագրերի և օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն: Տեսչական մարմինները պետք է վերահսկողության արդյունքներով իրենց կառավարման խորհուրդների միջոցով համապատասխան նախարարություններին ներկայացնեն առաջարկություններ, այդ թվում՝ օրենսդրության մեջ փոփոխությունների և լրացումների իրականացման միջոցով: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ տեսչությունները, մասնավորապես ԱԱՏՄ-ն, պարտավոր են իրենց գործունեության ամենամյա ծրագրերում պլանավորել կոնկրետ օրենսդրական ակտերի նախագծերի մշակման պահանջ: Այս իմաստով, ԱԱՏՄ-ի կողմից 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերում նախանշված օրենսդրական մեծածավալ փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների (2021 թվականին 18 օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթների, իսկ 2022 թվականի համար ծրագրված 4 օրենսդրական փաթեթների) մշակումը ԱԱՏՄ-ի համար միջամտություն է քաղաքականության մշակման գործընթացին և միաժամանակ

²⁹ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 700-Լ՝ «ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման 3-րդ բաժնի 11-րդ կետի 1-ին ենթակետը.
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=123007>

³⁰ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 721-Լ «ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման 3-րդ բաժնի 11-րդ կետի 3-րդ և 15-րդ ենթակետերը,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=123151>

³¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=137062>

ռեսուրսների անարդյունավետ ծախս, այն պայմաններում, երբ տեսչությունը չի կարողանում համալրել իր աշխատակազմը համապատասխան մասնագիտական հմտություններով օժտված տեսուչներով³²:

Արդյունքում, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում³³, «տեսչական մարմինների կառավարման խորհուրդների կողմից տեսչական մարմին ներկայացրած նորմատիվ իրավական ակտերի նախագծերին հավանություն տալու» գործառույթը հակասության մեջ է համապատասխան ոլորտային քաղաքականություն մշակող և իրականացնող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ՀՀ առողջապահության նախարարություններին օրենքով վերապահված ոլորտներում քաղաքականության մշակման գործառույթի հետ, որը հանգեցնում է քաղաքականության մշակման գործառույթի կրկնորդմանը՝ ՀՀ պետական կառավարման լիազոր մարմինների՝ ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ու ՀՀ Վարչապետի ենթակայության գործող ԱԱՏՄ միջև:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ որոշմամբ³⁴ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության տեսլականում կիրառվող սկզբունքներից «Օպտիմալ» սկզբունքի ներքո նախատեսվում է ապահովել «Պետության գործառույթային շրջանակի համակարգվածության, լիակատար փոխգործելիության, ոչ արդիական գործառույթների ինքնազտման, կրկնորդումների ու չպահանջված գործառույթների բացառման» ընթացքը: Այս տեսանկյունից հանրային ոլորտի բարեփոխումների ռազմավարության «ինստիտուցիոնալ արդիականացում» հենասյուն բաժնում նախատեսվում է իրականացնել պետական համակարգի մարմինների ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ վերանայում և վերակազմակերպում, այդ թվում՝ ապահովելով մի շարք համընկնող գործառույթների օպտիմալացումը, կրկնորդող գործառույթների վերացումը:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածը պահանջում է, որ «տեսչական մարմինը գործի ՀՀ կառավարության կամ կենտրոնական իշխանության հսկողության և վերահսկողության ներքո այնքանով, որքանով դա համատեղելի է Կազմակերպության անդամի վարչական գործելակերպի հետ»: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը հանդիսանում է ՀՀ կառավարությանը ենթակա մարմին: Այս դեպքում՝ ԱԱՏՄ-ն ապահովում է Կառավարությանը օրենքով վերապահված առանձին ոլորտներում կառավարության քաղաքականության իրականացման վերահսկողությունը:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը նախատեսում է, որ իրավասու մարմինը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ խրախուսելու համար՝ «(ա) արդյունավետ համագործակցությունը տեսչության ծառայությունների և համանման գործունեություն իրականացնող կառավարական այլ ծառայությունների, ինչպես նաև պետական կամ մասնավոր հաստատ-

³²ԱԱՏՄ 2022 թ. գործունեության տարեկան ծրագիր, էջ 24, https://www.hlib.am/wp-content/uploads/2021/11/2%E2%80%A42022_Gorcuneutyan_Cragir-1.docx.pdf

³³ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=137062>

³⁴ ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ՝ «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» որոշում, էջեր 9 և 31. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>

տոությունների միջև»։ Կոնվենցիայի նշված պահանջի համատեքստում, ՀՀ Վարչապետի աշխատակազմում գործող տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կանոնադրությամբ վերջինիս ամրագրված են՝ (7) տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման ու շարունակական կատարելագործման աշխատանքներին աջակցումը, (9) տեսչական մարմինների գործունեության վերաբերյալ մեթոդական և խորհրդատվական աջակցության իրականացումը³⁵։ Նման պահանջ ամրագրված է նաև «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում, որում նշված է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ենթակայության ներքո ստեղծվում է էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (վերահսկողության միասնական էլեկտրոնային շտեմարան և տեղեկատվության փոխանակման համակարգ)՝ վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության ապահովման և վերահսկողության հետ կապված տեղեկատվությունը տնտեսվարող սուբյեկտներին և հանրությանը մեկ տեղում հասանելի դարձնելու նպատակով»³⁶։ Նույն հոդվածում ամրագրված է նաև, որ «էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»։ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 678-Ն որոշմամբ³⁷ հաստատվել է «Տեսչական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու կարգ»-ը, սակայն տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգ չի ձևավորվել։

Կոնվենցիայի 6-11-րդ հոդվածները կարգավորում են տեսչության անձնակազմին ներկայացվող պահանջները։ Մասնավորապես, Կոնվենցիայի հոդված 6-ը պահանջում է, որ տեսչության «...կարգավիճակը և ծառայության պայմանները երաշխավորեն նրանց զբաղեցրած պաշտոնների կայունությունը և անկախությունը՝ կառավարության փոփոխության դեպքում կամ ոչ պատշաճ արտաքին ազդեցությունից», իսկ հոդված 7-ը՝ «աշխատանքի տեսուչները հավաքագրվում են բացառապես իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ որակավորման հիման վրա՝ ազգային օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության հավաքագրման համար անհրաժեշտ պայմանների պահպանմամբ և համապատասխան կերպով պետք է պատրաստվեն իրենց պարտականությունների կատարման համար»։

³⁵ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 731-Լ՝ «Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=131794>

³⁶ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=137062>

³⁷ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 678-Ն՝ «Տեսչական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու և տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման միջոցառումների իրականացման քայլերի հաջորդականությունը սահմանելու մասին» որոշում. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=115070>

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի 4-րդ մասով՝ ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնները դասակարգված են վարչական պաշտոնների ցանկում, որոնք համարվում են «հանրային իշխանության մարմիններում նշանակովի պաշտոններ, որը զբաղեցնող պաշտոնատար անձը ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմինն վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար: Վարչական պաշտոն զբաղեցնող անձը կարող է փոփոխվել նաև քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքով»³⁸: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ տեսչական մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ ղեկավարի և նրանց տեղակալների պաշտոններին ներկայացվող պահանջներն ուղղակիորեն հակասության մեջ են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջի հետ, քանի որ, մասնավորապես, ԱԱՏՄ պետին և տեղակալներին կառավարության փոփոխության դեպքում չեն երաշխավորում կայունություն և անկախություն, ինչպես նաև չեն ապահովում պատշաճ պաշտպանվածություն արտաքին ազդեցությունից: Ինչ վերաբերում է ԱԱՏՄ աշխատակազմի մյուս ծառայողներին, ապա ԱԱՏՄ տեսուչները, համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի, քաղաքացիական ծառայողներ են, և նրանց հավաքագրումն ու կարերիային աճն իրականացվում է ըստ արժանիքների ու որակավորման պահանջների: ԱԱՏՄ անձնակազմում նեղ մասնագետների ներգրավման մասով Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված պահանջը, այն է՝ «յուրաքանչյուր անդամ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, որպեսզի պատշաճ որակավորում ունեցող տեխնիկական փորձագետները և մասնագետները, այդ թվում՝ բժշկության, մեխանիկայի, էլեկտրականության և քիմիայի ոլորտի մասնագետները, ազգային պայմաններին առավել համապատասխանող եղանակներով ներգրավվեն տեսչության աշխատանքներում՝ նպատակ ունենալով ապահովել աշխատանքի ժամանակ աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանությանը վերաբերող իրավական դրույթների կիրառումը, ինչպես նաև նպատակ ունենալով քննել աշխատանքի գործընթացների, մեթոդների և նյութերի ազդեցությունը աշխատողների առողջության և անվտանգության վրա», ամբողջությամբ համապատասխանում է հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի հոդված 10-ի պահանջներին, որով «կառավարության սահմանած կարգով և դեպքերում պետական մարմինները առանձին խնդիրների իրականացման համար կարող են ներգրավել փորձագետ»³⁹: ԹԻՅԿ կողմից ԱԱՏՄ հարցումների արդյունքները վկայում են, որ տնտեսվարող սուբյեկտների աշխատատեղում աղմուկի, ճառագայթման, վիբրացիայի և աշխատողի առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ գործոնների մակարդակը որոշելու անհրաժեշտության դեպքում ԱԱՏՄ-ն օրենքով սահմանված կարգով ներգրավում է փորձագետների, որոնք էլ տալիս են փորձագիտական եզրակացություն:

Տեսչական ծառայության պարտականությունների արդյունավետ իրականացման համար տեսուչների բավարար և անհրաժեշտ թվաքանակի սահմանման վերաբերյալ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պահանջում է հաշվի առնել՝ «(ա) այն պարտականությունների կարևորությունը, որոնք պետք է կատարեն տեսուչները և, մասնավորապես, (i) տեսուչների հսկողության տակ

³⁸Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք, Հոդված 6. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166838>

³⁹ Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք, Հոդված 10. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166838>

գտնվող ձեռնարկությունների թիվը, բնույթը, չափը և տեղը, (ii) այդ ձեռնարկություններում զբաղված աշխատողների թվաքանակը և կատեգորիաները, (iii) այն իրավական դրույթների ծավալը և բարդությունը, որոնց կիրառումը պետք է ապահովի, (բ) տեսուչների տրամադրության տակ գտնվող նյութական միջոցները, (գ) տեսչական այցելությունները արդյունավետ իրականացնելու համար գործնական պայմանները»: ՀՀ Վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի N 808-Ա որոշմամբ⁴⁰ կանոնակարգվում է տեսչական մարմինների, մասնավորապես ԱԱՏՄ-ին հատկացվող հաստիքների թվաքանակը. 2021 թվականի հուլիսի 1-ից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով գործող հաստիքների թիվն ավելացվել է 60-ով:

Տեսչական մարմինների տեսուչները քաղաքացիական ծառայողներ են, ուստի նրանց մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի հոդված 19-ով սահմանված պահանջներով՝ ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ⁴¹ սահմանված կարգին համապատասխան: ԱԱՏՄ ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացման և վերապատրաստումների խնդիրները դիտարկված են սույն մոնիտորինգի զեկույցի 1.1. բաժնում:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածը պահանջում է, որ «իրավասու մարմինը ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի աշխատանքի տեսուչներին տրամադրվեն՝ (ա) տեսչական ծառայությունների կարիքներին համապատասխան սարքավորված և բոլոր շահագրգիռ անձանց համար հասանելի տեղական գրասենյակներ, (բ) տրանսպորտի միջոցներ, որոնք անհրաժեշտ են նրանց պարտականությունների կատարման համար, եթե չկան համապատասխան հասարակական տրանսպորտի միջոցներ»: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը ամբողջությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների սոցիալական երաշխիքների շարքում նախատեսում է՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման համար անվտանգ, առողջության համար անվնաս և անհրաժեշտ աշխատանքային պայմանների, ծառայողական գործուղումների հետ կապված՝ տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տրանսպորտային միջոցի հատկացում կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածում⁴² ամրագրված է, որ «լիազորությունները հավաստող պատշաճ փաստաթղթեր ունեցող աշխատանքի տեսուչներն իրավունք ունեն՝ «(ա) առանց նախօրոք

⁴⁰ ՀՀ Վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի N 808-Ա՝ «ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168233>

⁴¹ ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն՝ «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» որոշում. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=149874>

⁴² «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

տեղեկացնելու՝ ցերեկվա և գիշերվա ցանկացած ժամի անարգել մուտք գործել տեսչական ստուգման ենթակա ցանկացած ձեռնարկություն, (բ) ցերեկային ժամերին մտնել բոլոր այն շինությունները, երբ բավարար հիմք կա դրանք տեսչական ստուգման ենթակա համարելու, (գ) իրականացնել ցանկացած ստուգում, հսկողություն կամ քննություն, որոնք կարող են անհրաժեշտ համարվել, որպեսզի տեսուչները հավաստիանան, որ իրավական դրույթները պահպանվում են: Տեսչական այցելության դեպքում տեսուչները գործատուին կամ նրա ներկայացուցչին տեղյակ են պահում իրենց ներկայության մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք գտնում են, որ նման ծանուցումը կվնասի իրենց պարտականությունների կատարմանը»:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա տեսչական մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ-ի կողմից վերոնշյալ իրավակարգավորման պահանջներն իրականացվում են «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» 2000 թվականի մայիսի 17-ին ընդունված ՀՀ օրենքով սահմանված կարգով⁴³: Այդուհանդերձ, «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումը սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ՝ ... առանց պայմանագրի կնքման աշխատող պահելու կամ աշխատանքային պայմանագրում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված պայմանները չներառելու դեպքերի բացահայտմանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների...»:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածի և «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի ստուգումների մասին տնտեսվարող սուբյեկտին նախապես տեղեկացնելու մասին դրույթի մասով օրենսդրական պահանջների համադրությունից պարզ է դառնում, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ առկա են սահմանափակումներ Կոնվենցիայի 12-րդ հոդվածում⁴⁴ նախատեսված իրավակարգավորումները ԱԱՏՄ տեսուչների կողմից լիարժեք կիրառելու մասով:

Համաձայն Կոնվենցիայի հոդված 13-ի պահանջների՝ «աշխատանքի տեսուչները լիազորված են միջոցներ ձեռնարկելու որևէ շինությունում, սարքավորման մեջ կամ աշխատանքային մեթոդում թերությունները վերացնելու նպատակով, որոնք, ըստ տեսուչների հիմնավորված կարծիքի, կարող են սպառնալ աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը: Որպեսզի աշխատանքի տեսուչները հնարավորություն ունենան ձեռնարկելու այդ միջոցները, դատական կամ վարչական մարմիններ բողոքարկելու պայմանով՝ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, նրանք իրավունք ունեն կարգադրելու կամ պահանջելու, որ տրվեն

⁴³ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք.

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=164935>

⁴⁴ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

կարգադրություններ՝ «(ա) շինություններում որոշակի ժամկետում այնպիսի փոփոխություններ կատարելու համար, որոնք անհրաժեշտ են աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության վերաբերյալ իրավական դրույթներին խիստ համապատասխանությունն ապահովելու համար, կամ (բ) աշխատողների առողջությանը և անվտանգությանը անմիջական սպառնալիքի դեպքում անհապաղ կատարման ենթակա միջոցներ ձեռնարկելու համար: Եթե հաստատված ընթացակարգը անհամատեղելի է Կազմակերպության անդամի վարչական կամ դատական պրակտիկայի հետ, տեսուչները իրավունք ունեն դիմելու իրավասու մարմին՝ կարգադրություններ տալու կամ անհապաղ կատարման ենթակա միջոցներ ձեռնարկելու համար»: Հարկ է նկատել, որ ԱՍՏՄ կանոնադրությամբ տեսչական մարմնի լիազորությունները սահմանող 3-րդ գլխի 11-րդ մասի 10-րդ կետում ԱՍՏՄ տեսուչները նման լիազորությամբ օժտված չեն:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը⁴⁵ նախատեսում է, որ «աշխատանքի տեսչությունը ծանուցվում է արտադրական պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի մասին ազգային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ձևով»: ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ⁴⁶ սահմանվել է, որ «...կարգով սահմանվում են նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (այսուհետ՝ տեսչություն) մարմինների գործառույթները մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) հաշվառման և ծառայողական քննության անցկացման վերաբերյալ...»: Նշված որոշման համաձայն՝ «սուր մասնագիտական հիվանդության (թունավորման) յուրաքանչյուր դեպքի մասին տվյալ հիվանդությունը հայտնաբերող (կասկածող) բժշկական կազմակերպությունը 6 ժամվա ընթացքում հեռախոսով կամ կապի այլ միջոցներով հաղորդում է տեսչության տարածքային կենտրոն և 24 ժամվա ընթացքում ուղարկում է ծանուցագիր»: Որոշմամբ սահմանված է նաև, որ «ծառայողական քննությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից ստեղծվող հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են տեսչության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչության, կազմակերպության արհեստակցական միության կողմից առաջարկված, գործատուի և անհրաժեշտության դեպքում՝ այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները»:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի⁴⁷ պահանջների համաձայն՝ «ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, աշխատանքի տեսուչներին՝ (ա) արգելվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնաբաժին ունենալ իրենց վերահսկողության ներքո գտնվող ձեռնարկությունում»: Նման արգելքի օրենսդրական կարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով՝ համաձայն որի՝

⁴⁵ Նույն տեղում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

⁴⁶ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23 N 458-Ն՝ «Մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) հաշվառման ու ծառայողական քննության կարգը, դժբախտ դեպքերի հաշվառման ու ծառայողական քննության կարգը, մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի ապրիլի 25-ի N 121 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=23502>

⁴⁷ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

«հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և ծառայողները չեն կարող, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում առևտրային կազմակերպությանը մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման»: Ընդ որում, հանրային ծառայողի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը, այդ թվում՝ առևտրային կազմակերպության մասնակից լինելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է: Այդուհանդերձ, ԱԱՏՄ-ի կողմից տեսուչների վերահսկողության ներքո գտնվող ձեռնարկությունում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնաբաժին ունենալու, հանգամանքների մասին և Կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանված արգելքի պահանջների կիրարկումն ապահովելու տեսանկյունից ԱԱՏՄ-ն չի տիրապետում նման տեղեկատվության, ինչպես նաև ստուգումների ընթացակարգերը չեն նախատեսում նման պահանջ: Արդյունքում, ԱԱՏՄ-ի ղեկավարը ստուգման կամ վարչական վարույթի գործընթացում տեսուչներին ներգրավելու ժամանակ չի դիտարկում սահմանված արգելքի պահանջները:

Կոնվենցիայի նույն հոդվածում⁴⁸ նախատեսված է նաև, որ աշխատանքի տեսուչները՝ «(բ) պարտավոր են, համապատասխան քրեական պատժի կամ կարգապահական միջոցների կիրառման սպառնալիքի տակ, նույնիսկ պաշտոնաթողությունից հետո, չիրապարակել արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթաց, որոնց նրանք կարող էին ծանոթանալ իրենց պարտականությունների կատարման ժամանակ, և (գ) պարտավոր են բացարձակորեն գաղտնի պահել բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների վերաբերյալ բողոքների աղբյուրը և գործատուին կամ նրա ներկայացուցչին չհաղորդել այն մասին, որ տեսչական այցելությունը կատարվել է այդպիսի բողոքի հիման վրա»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը⁴⁹ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում, ինչպես նաև ոչ ծառայողական նպատակներով օգտագործել ծառայողական տեղեկատվությունը: Կարևոր է նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նշված սահմանափակումները չպահպանելը հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց համար առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Այդուհանդերձ, վերոնշյալ սահմանափակումների կիրարկումն ապահովող օրենսդրական ակտերը դեռևս մշակված ու կիրառման մեջ չեն դրված, որի արդյունքում ԱԱՏՄ աշխատանքային տեսուչների կողմից նշված պահանջների պահպանումը մնում է խնդրահարույց: ԱԱՏՄ աշխատողների ու ծառայողների բարեվարքությանը ներկայացվող

⁴⁸ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

⁴⁹ Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 32. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=166838>

օրենսդրական պահանջների և իրավակիրառ պրակտիկայի արդյունքները մանրամասն ներկայացված են սույն մոնիտորինգի զեկույցի 4-րդ բաժնում:

Կոնվենցիայի 20-րդ և 21-րդ հոդվածները⁵⁰ պահանջում են, որպեսզի տեսչության կենտրոնական մարմինը «...հրապարակի տարեկան ընդհանուր զեկույց իրեն ենթակա տեսչական ծառայությունների գործունեության վերաբերյալ: Այդ զեկույցները պետք է հրապարակվեն ողջամիտ ժամկետներում, ամեն դեպքում ոչ ուշ, քան հաշվետու տարվա ավարտից հետո 12 ամսվա ընթացքում: Տարեկան զեկույցների օրինակները հրապարակումից հետո ողջամիտ ժամկետներում և, ամեն դեպքում, 3 ամսից ոչ ուշ, ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին», «...հրապարակվող ամենամյա զեկույցներում ընդգրկվեն հետևյալ և գործին վերաբերող մյուս բոլոր հարցերը այնքանով, որքանով դրանք գտնվում են տվյալ կենտրոնական մարմնի հսկողության տակ՝ (ա) աշխատանքի տեսչության գործունեությանը վերաբերող օրենքները և կանոնակարգերը, (բ) աշխատանքի տեսչության անձնակազմը, (գ) վիճակագրական տվյալներ տեսչության հսկողությանը ենթակա ձեռնարկությունների և դրանցում զբաղված աշխատողների թվաքանակի մասին, (դ) վիճակագրական տվյալներ տեսչական այցելությունների մասին, (ե) վիճակագրական տվյալներ կատարված խախտումների և կիրառված պատժամիջոցների մասին, (զ) վիճակագրական տվյալներ արտադրական պատահարների մասին, (է) վիճակագրական տվյալներ մասնագիտական հիվանդությունների մասին»:

Կոնվենցիայի հոդված 20-ի և 21-ի պահանջներն ուղղակիորեն ամրագրված են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ում, որի առաջին մասով սահմանված են տեսչական մարմինների կողմից տարեկան հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության Վարչապետին ներկայացման և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից քննարկման պահանջ: Հաշվետվությունները հրապարակվում են տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում: Տեսչական մարմինները նախորդ տարվա հաշվետվությունները ներկայացնում են մինչև ընթացիկ տարվա փետրվարի 5-ը⁵¹:

ԱԱՏՄ կայքէջում հրապարակված են ԱԱՏՄ-ի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը (hlib.am): Այդուհանդերձ, ԹԻՂԿ-ի կողմից հարցման արդյունքները վկայում են, որ ԱԱՏՄ-ի գործունեության տարեկան հաշվետվությունները (զեկույցները) Աշխատանքի միջազգային բյուրո չեն ներկայացվում: Այս համատեքստում ԱԱՏՄ-ի կողմից ապահովված չէ Կոնվենցիայի 20-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված պահանջը:

ԱԱՏՄ-ի պաշտոնական կայքէջում (hlib.am) հրապարակված ԱԱՏՄ-ի գործունեության տարեկան հաշվետվություններում⁵² ներառված տեղեկատվությունը բովանդակային առումով ամբողջովին համապատասխանում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի և Կոնվենցիայի 21-րդ հոդվածի պահանջներին:

⁵⁰ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24576>

⁵¹ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 15. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137062>

⁵² ԱԱՏՄ կայքէջ, հաշվետվություններ. <https://www.hlib.am/reports/>

ԱՄԿ աշխատանքային տեսչության Կոնվենցիայի իրականացման (N 81) հանձնարարականով⁵³ սահմանվում է, որ «(ա) Ցանկացած անձ, ով առաջարկում է բացել արդյունաբերական կամ առևտրային ձեռնարկություն կամ ստանձնել այդպիսի հիմնարկություն, կամ սկսել այդպիսի հաստատությունում իրավասու մարմնի կողմից սահմանված գործունեության դասի իրականացում, պետք է նախապես ծանուցի այդ մասին աշխատանքային իրավասու տեսչությանը ուղղակիորեն կամ նշանակված այլ մարմնի միջոցով, (բ) նոր ձեռնարկությունների, գործարանների կամ արտադրական գործընթացների պլանները կարող են ներկայացվել աշխատանքի համապատասխան տեսչական ծառայությանը՝ կարծիք հայտնելու համար, թե արդյոք նշված ծրագրերը դժվար կամ անհնարին կդարձնեն համապատասխանությունը արդյունաբերության վերաբերյալ օրենքներին և կանոնակարգերին, (գ) օրենքով նախատեսված ցանկացած բողոքարկման դեպքում, նոր հաստատությունների, գործարանների և արտադրական գործընթացների պլաններում աշխատողների առողջության և անվտանգության ապահովման նպատակով, պետք է իրականացնեն տվյալ գործով հաստատված ցանկացած փոփոխության կատարում»:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջների, ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված գործառույթների համադրման արդյունքները վկայում են, որ ԱՄԿ Կոնվենցիայի N 81 հանձնարարականի 1-ին բաժնում ամրագրված՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից արդյունաբերական կամ առևտրային ձեռնարկություն կամ նմանատիպ կազմակերպություն հիմնելու կամ այդպիսի հաստատությունում իրավասու մարմնի կողմից սահմանված գործունեության իրականացում սկսելու ժամանակ ԱԱՏՄ-ին նախապես ծանուցման ընթացակարգեր նախատեսված և ամրագրված չեն:

Եզրակացություններ

Այսպիսով, ԱՄԿ-ի «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքային տեսչության մասին» կոնվենցիայի պահանջներին ԱԱՏՄ գործունեության օրենսդրական կարգավորումների համապատասխանության տեսանկյունից՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, «Աշխատանքային օրենսգրքի», ինչպես նաև ԱԱՏՄ գործունեության կանոնադրական խնդիրներն ու գործառույթները կանոնակարգող օրենսդրական այլ ակտերի կարգավորումների համադրության արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում.

- «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված վերահսկողական, կանխարգելիչ և իրազեկման խմբի գործառույթները ամբողջությամբ բխում և համապատասխանում են ԱՄԿ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիայի տեսչական մարմինների գործունեությանը ներկայացվող պահանջներին (ստանդարտներին):
- ԱԱՏՄ-ն ապահովում է ՀՀ կառավարությանը աշխատանքային օրենսդրության ոլորտում օրենքով վերապահված քաղաքականության իրականացման վերահսկողությունը:

⁵³ R081 - Labour Inspection Recommendation, 1947 (No. 81), [Recommendation R081 - Labour Inspection Recommendation, 1947 \(No. 81\) \(ilo.int\)](#)

- Կոնվենցիայով տեսչական ծառայությունների կարիքներին համապատասխան սարքավորված և բոլոր շահագրգիռ անձանց համար հասանելի տեղական գրասենյակների, տրանսպորտի միջոցների տրամադրման օրենսդրական կարգավորումներն առկա են:
- «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի 7-րդ մասում տեսչական մարմինների կառավարման խորհուրդների կողմից տեսչական մարմնի ներկայացրած նորմատիվ իրավական ակտերի նախագծերին հավանություն տալու գործառնությունը հակասության մեջ է համապատասխան ոլորտային քաղաքականություն մշակող և իրականացնող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ՀՀ առողջապահության նախարարությանը «Կառավարության կառուցվածքի և գործունեության կազմակերպման մասին» ՀՀ օրենքով վերապահված ոլորտներում քաղաքականության մշակման գործառնությանի հետ, որը հանգեցնում է քաղաքականության մշակման գործառնությանի կրկնորդմանը:
- Կոնվենցիայով տեսչության անձնակազմին ներկայացվող «կառավարության փոփոխության դեպքում կայունության և անկախություն, ինչպես նաև արտաքին ազդեցությունից պաշտպանվածության ու երաշխավորության» պահանջները ուղղակիորեն հակասում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով տեսչական մարմինների, այդ թվում ԱԱՏՄ ղեկավարի և նրանց տեղակալների վարչական պաշտոնների համար սահմանված պայմաններին:
- Կոնվենցիայի հոդված 12-ի պահանջը՝ «ԱԱՏՄ տեսուչների կողմից առանց նախօրոք տեղեկացնելու՝ ցերեկվա և գիշերվա ցանկացած ժամին անարգել մուտք գործել տեսչական ստուգման ենթակա ցանկացած ձեռնարկություն», հակասության մեջ է «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ ստուգումների մասին տնտեսվարող սուբյեկտին գրավոր նախապես տեղեկացնելու դրույթի հետ:
- Կոնվենցիայի 15-րդ հոդվածով՝ «տեսուչների վերահսկողության ներքո գտնվող ձեռնարկությունում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնաբաժին ունենալու, արգելքի կիրարկումն ապահովելու տեսանկյունից ԱԱՏՄ ստուգումների ընթացակարգերը չեն նախատեսում նման պահանջ, իսկ ԱԱՏՄ ղեկավարությունը չի տիրապետում նման տեղեկատվության:
- «Հանրային ծառայության մասին», ինչպես նաև «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքները տեսուչների համար չեն սահմանում «(բ) պարտավոր են, համապատասխան քրեական պատժի կամ կարգապահական միջոցների կիրառման սպառնալիքի տակ, նույնիսկ պաշտոնաթողությունից հետո չիրապարակել արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթաց, որոնց նրանք կարող էին ծանոթանալ իրենց պարտականությունների կատարման ժամանակ, և (գ) պարտավոր են բացարձակորեն գաղտնի պահել բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների վերաբերյալ բողոքների աղբյուրը և գործատուին կամ նրա ներկայացուցչին չհաղորդել այն մասին, որ տեսչական այցելությունը կատարվել է այդպիսի բողոքի հիման վրա» արգելքները:
- Դեռևս մշակված չեն «հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին պաշտոնից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման

վերջին մեկ տարվա ընթացքում, ինչպես նաև ոչ ծառայողական նպատակներով օգտագործել ծառայողական տեղեկատվությունը» սահմանափակումների կիրառման կառուցակարգերը:

- Կոնվենցիայի հոդված 20-ով և 21-ով սահմանված տեսչական մարմինների կողմից ամենամյա գործունեության հաշվետվությունների և դրանցում ներառվող տեղեկատվության հրապարակման պահանջներն ուղղակիորեն ամրագրված են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ում: ԱԱՏՄ ամենամյա հաշվետվությունները հրապարակվում են տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում (hlib.am), այդուհանդերձ ԱԱՏՄ գործունեության տարեկան հաշվետվությունները (զեկույցները) Աշխատանքի միջազգային բյուրո չեն ներկայացվում:

Ելնելով վերոնշյալից՝ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում օրենսդրորեն վերապահված գործառնությունների իրականացումը՝ ԱՄԿ աշխատանքային տեսչությանը ներկայացվող պահանջների ապահովման տեսանկյունից ԹԻՀԿ կողմից գնահատվում է 14 տոկոսային բալային միավոր և համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի՝ ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչով գտնվում է «Գործում է ոչ լիարժեք» փուլում:

Առաջարկություններ

- 1.2.1. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել, որ ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ենթակա ոլորտներում նորմատիվ իրավական ակտերի տեսքով առաջարկությունների ներկայացման գործառնությունները չկրկնորդեն ՀՀ առողջապահության և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների կողմից նշված ոլորտներում քաղաքականության մշակման գործառնությունները:
- 1.2.2. ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրից դուրս բերել միջոցառումների օրենսդրական ակտերի բաժինը, դրանք չդարձնել ծրագրային, պլանավորված միջոցառումներ: ԱԱՏՄ-ի կողմից ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացվող՝ վերահսկողության ոլորտային խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ուղղված օրենսդրական առաջարկությունները ձևակերպել առանց նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ կոնկրետ ստուգումների արդյունքներով և հիմնավորումներով:
- 1.2.3. Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության «Մարդկային ռեսուրսների կառավարում և հանրային ծառայություն» հենասյուն բաժնում նախատեսվող «Արհեստավարժ ավագ գործադիր կորպուսի ձևավորում» միջոցառման⁵⁴ ներքո իրականացնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ այն հաշվով, որ

⁵⁴ ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ՝ «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» որոշում, կետ 36. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>

տեսչական մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ ղեկավարի և նրանց տեղակալների վարչական պաշտոնների համար ապահովվեն ԱՄԿ Կոնվենցիայով սահմանված «...նրանց զբաղեցրած պաշտոնների կայունությունը և անկախությունը կառավարության փոփոխության դեպքում կամ ոչ պատշաճ արտաքին ազդեցությունից պաշտպանվածությունը»:

- 1.2.4. Քննարկել «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ու լրացումների իրականացումը՝ ապահովելու ԱՄԿ Կոնվենցիայի «առանց նախօրոք տեղեկացնելու՝ ցերեկվա և գիշերվա ցանկացած ժամի անարգել մուտք գործել տեսչական ստուգման ենթակա ցանկացած ձեռնարկություն» դրույթները ԱԱՏՄ տեսուչների կողմից կիրառման նպատակահարմարության հարցը:
- 1.2.5. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու միջոցով՝ ապահովել Կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված՝ «պաշտոնաթողությունից հետո արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթացի մասին չիրապարակելու, գաղտնի պահելու բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների վերաբերյալ բողոքների աղբյուրը և գործատուին կամ նրա ներկայացուցչին չհաղորդել այն մասին, որ տեսչական այցելությունը կատարվել է այդպիսի բողոքի հիման վրա» արգելքների օրենսդրական սահմանումը:
- 1.2.6. ԱԱՏՄ ստուգումների ընթացակարգերում նախատեսել լրացումներ և փոփոխություններ՝ ապահովելով տեսուչի կողմից նախքան ստուգման գործընթացը իր կամ իր ընտանիքի անդամի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնաբաժին ունենալու վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը, ԱԱՏՄ-ում «տեսուչների (նրանց ընտանիքի անդամների) առևտրային կազմակերպություններում մասնակցության վերաբերյալ» ռեեստրի ստեղծումը, տեսուչների մասնագիտացումը ըստ վերահսկողության բնագավառի և մասնաբաժին ունեցող ընկերություններում ստուգումների իրականացման բացառումը:
- 1.2.7. ԱՄԿ Կոնվենցիայի պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով ապահովել ԱԱՏՄ համագործակցությունը Աշխատանքի միջազգային բյուրոյի հետ՝ ներկայացնելով ԱԱՏՄ պաշտոնական կայքէջում (hlib.am) հրապարակված տեսչական մարմնի գործունեության ամենամյա հաշվետվությունները (զեկույցները):
- 1.2.8. Քննարկել նոր ստեղծվող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների հիմնադրման ու գործունեության կազմակերպման նախապատրաստական փուլերում ԱԱՏՄ-ին նախապես ծանուցման նոր գործիքակազմերի ներդրման նպատակահարմարության հարցը՝ նախաձեռնելով միջազգային փորձի մանրամասն ուսումնասիրություններ:

ԳԼՈՒԽ 2. ԱԱՏՍ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2.1 ԱԱՏՍ գործունեության ծրագրով աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում վերապահված միջոցառումները

Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՍ գործունեության կազմակերպման, խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ով սահմանված է տեսչական մարմինների գործունեության տարեկան ծրագրերի մշակման և իրականացման պահանջ, այն է՝ «Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը՝ ընթացիկ տարում հաջորդ տարվա համար տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատվող փաստաթուղթ է, որն առնվազն ներառում է տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը»։ Վերոնշյալ օրենսդրական պահանջի համաձայն՝ ԱԱՏՍ-ն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում իր գործունեությունը պետք է իրականացնի միջոցառումների տարեկան ծրագրի մշակման միջոցով։ ԱԱՏՍ ամենամյա կամ տարեկան միջոցառումների ծրագիրը հաստատում է ԱԱՏՍ կառավարման խորհուրդը։ ԱԱՏՍ 2021 թ. գործունեության ծրագիրը հաստատվել է ԱԱՏՍ խորհրդի 2020 թ. նոյեմբերի 25-ի 18-Լ որոշմամբ։ ԱԱՏՍ կայքէջի «Տեսչական մարմին։ Ծրագրեր» բաժնում հրապարակված «ԱԱՏՍ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերը հաստատելու մասին» փաստաթղթի հավելվածներում ԱԱՏՍ կառավարման խորհրդի վերոնշյալ որոշման մասին գրառումները բացակայում են։

ԱԱՏՍ ամենամյա գործունեության ծրագիր

ԱԱՏՍ 2021 և 2022 թվականների գործունեության ամենամյա ծրագրերի «ԱԱՏՍ վերահսկողության ոլորտների առկա վիճակը» ենթավերնագրի ներքո նկարագրված են ԱԱՏՍ-ի կողմից իրականացված, այդ թվում՝ աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում, ստուգումների, դրանց արդյունքում հրապարակված հանձնագրերի, ռիսկի վրա հիմնված թեմատիկ ստուգումների քանակի, կազմված ստուգման ակտերի, դրանց հիման վրա տրված կարգադրագրերի և տեղեկանքների, սահմանված տուգանքների չափի վերաբերյալ տեղեկատվությունը։ Միաժամանակ ներկայացված է դիմում-բողոքների հիման վրա չպլանավորված վերահսկողության արդյունքում հարուցված վարույթների, վերահասցեագրված, վերադարձված և ներկայացված պարզաբանումների վերաբերյալ տվյալներ⁵⁵։ Այդուհանդերձ, ներկայացված տվյալները չեն բնութագրում ԱԱՏՍ-ի կողմից վերահսկվող ոլորտներում, մասնավորապես՝

⁵⁵ ԱԱՏՍ 2021 և 2022 թ. գործունեության տարեկան ծրագրերը, https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf և [2.2022_Gorcuneutyan_Cragir-1.docx.pdf \(hlib.am\)](https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2022_Gorcuneutyan_Cragir-1.docx.pdf), էջ 11-15 և 12-23:

աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տիրող իրավիճակի ընդհանրական պատկերը: Այն ավելի շուտ նկարագրում է ԱԱՏՄ-ի իրականացրած գործունեությունը աշխատանքային իրավունքի, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում իրականացված ստուգումների կամ քաղաքացիների կողմից աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ հայտնած բողոքների քանակների մասով, որոնք չեն բնութագրում իրավիճակը աշխատանքային իրավունքների ոլորտում: Նշված ցուցանիշներն ավելի շուտ նկարագրում են ԱԱՏՄ-ին կանոնադրությամբ վերապահված խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները և ԱԱՏՄ գործունեության ուղղությամբ իրականացրած ջանքերը: Մինչդեռ, ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում տիրող իրավիճակի բնութագիրը պետք է պարզվի նշված ոլորտներում համատեքստի, հարցումների կամ առանձին թեմատիկ ուսումնասիրությունների արդյունքներով՝ օգտագործելով նաև ոլորտում վարվող վիճակագրական տվյալները, սահմանելով գնահատման ցուցանիշներ և ցուցիչներ:

ԱԱՏՄ տարեկան գործունեության ծրագիրը միտված է ապահովելու ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների լուծմանն ու բացահայտված ռիսկերի չեզոքացումը: Այս տեսանկյունից, ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերը պետք է մշակվեն ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում, մասնավորապես՝ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում արձանագրված խնդիրների և բացահայտված ռիսկերի հիման վրա: Մինչդեռ, համաձայն ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի տեղեկատվության⁵⁶, ԱԱՏՄ 2021 և 2022 թթ. գործունեության ծրագրերի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա խնդիրներն ու բացահայտված ռիսկերը» վերնագրի ներքո, ծրագրերի 2-րդ բաժնում ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա խնդիրների ու ռիսկերի փոխարեն ամբողջությամբ ներկայացված է ԱԱՏՄ-ի աշխատակազմում առկա խնդիրներն ու դրանցով պայմանավորված կարողությունների բացերը՝ ԱԱՏՄ կադրային հագեցվածության և համալրման անհրաժեշտությունը, իսկ որպես ռիսկերի նվազեցման գործողություններ՝ ԱԱՏՄ հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման նպատակով համապատասխան աշխատանքային տարածքների հատկացման և դրանց վերանորոգման հարցերը:

ԱԱՏՄ 2021 թ. գործողությունների ծրագրի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր» բաժնում գործող իրավական ակտերում բացերի, տարընթերցումների ու իրարամերժ դրույթների բացառման մասով աշխատանքային իրավունքների՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում առանձնացվել են հետևյալ խնդիրներն ու ռիսկերը⁵⁷.

- Ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար ոչ ամբողջական պատասխանատվության միջոցների առկայությունը,
- շինարարական նորմատիվների բացակայությունը,

⁵⁶ ԱԱՏՄ 2021 և 2022 թ. գործունեության տարեկան ծրագրերը, https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf և https://www.hlib.am/wp-content/uploads/2021/11/2%E2%80%A42022_Gorcuneutyan_Cragir-1.docx.pdf, էջ 18 և 23

⁵⁷ ԱԱՏՄ 2021 թ. գործունեության ծրագիր, էջ 22. https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf

- մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննության իրականացման կարգի բացակայությունը,
- դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ տեսչական մարմին տեղեկատվություն փոխանցելու պարտավորություն սահմանող հստակ նորմերի բացակայությունը:

ԱԱՏՄ 2022 թվականի գործունեության ծրագրի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր» բաժնում աշխատանքային իրավունքների, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում, կոնկրետ խնդիրներ ու ռիսկեր չեն արձանագրվել: Արձանագրված բոլոր խնդիրները վերաբերում է ԱԱՏՄ կարողությունների զարգացմանը:

Համանման պատկեր է ներկայացված նաև ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի «ԱԱՏՄ ձեռքբերումներ համառոտ կամ ԱԱՏՄ ձեռքբերումների համեմատական ցուցանիշներ» բաժիններում, որտեղ նույնպես արձանագրված են նախորդ տարիների ընթացքում ԱԱՏՄ կարողությունների՝ մարդկային, նյութական, ենթակառուցվածքների զարգացմանը միտված միջոցառումների իրականացման արդյունքները, համագործակցությունը միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների հետ:

ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրի միջոցառումների ժամանակացույց

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը տեսչական մարմնի գործունեության ծրագրում պահանջում է ունենալ վերահսկողության ոլորտում առկա խնդիրների ու բացահայտված ռիսկերի նվազեցման ուղղված միջոցառումների ժամանակացույց: ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի «տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ» (հավելված 1) բաժնում 2021 թվականի համար պլանավորված 14 միջոցառումից աշխատանքային օրենսդրությանը ուղղակիորեն վերաբերելի են 10-ը, իսկ 2022 թվականի համապատասխան ծրագրում՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն ենթաբաժնում առանձնացված է 5 միջոցառում:

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի «տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ» (հավելված 1) բաժնում 14 միջոցառումների կատարողականի վերլուծությունը⁵⁸ ցույց է տալիս, որ 5-րդ միջոցառումը չի վերաբերում աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի խնդիրներին ու բացահայտված ռիսկերին, 1-ին, 9-րդ և 10-րդ միջոցառումներն իրենց բովանդակությամբ առավելապես վերաբերելի են ԱԱՏՄ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրին, 11-րդ և 12-րդ միջոցառումները աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում ստուգաթերթերի բացա-

⁵⁸ ԱԱՏՄ 2021 թ. գործունեության ծրագրի տարեկան հաշվետվություն, հավելված 2, <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.2.HavelvacN2.pdf>

կայության պայմաններում ուղղակիորեն չեն վերաբերում աշխատանքային օրենսդրության ռիսկերի նվազեցմանը կամ խնդիրների լուծմանը, 8-րդ միջոցառումը վերաբերում է ԱԱՏՄ աշխատակիցների վերապատրաստմանը արտերկրում, 4-րդ միջոցառումը վերաբերում է միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատմանը և այլ երկրների տեսչական մարմինների հետ փորձի փոխանակման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը, 13-րդ միջոցառումը՝ ԱԱՏՄ-ի մասով Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող ԹԱԻԵԶՍ ծրագրի մեկնարկմանն ու իրականացմանը: 6-րդ և 7-րդ միջոցառումները նվիրված են լայնաֆորմատ համագործակցությանը աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեություն իրականացնող ՀԿ-ների ու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ: 2-րդ և 3-րդ միջոցառումներն ուղղակիորեն պայմանավորված են աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկմամբ, ինչպես նաև կապված են աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխանող տիպային պայմանագրերի, անհատական իրավական ակտերի օրինակելի ձևաթղթերի կազմման ու ներդրման գործընթացների հետ, իսկ 14-րդ միջոցառումը՝ դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության ստացման հնարավորություններին⁵⁹:

ԱԱՏՄ 2022 թվականի գործունեության ծրագրի՝ «Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ» (հավելված 1) բաժնում, ի տարբերություն 2021 թվականի համանուն ծրագրի, միջոցառումները ներկայացված են ըստ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների, որտեղ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությանը վերապահված ոլորտում նախատեսված է 5 միջոցառումների իրականացում: Առաջին միջոցառմամբ նախատեսվում է աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ստուգաթերթերի մշակում, 2-րդ միջոցառումը նվիրված է ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության տեսուչների վերապատրաստումներին, 3-րդ միջոցառումը վերաբերում է ԱԱՏՄ տարածքային կենտրոնների աշխատակիցների համար աշխատանքային օրենսդրության և իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացման դասընթացների կազմակերպմանը, 4-րդ միջոցառումը՝ միջազգային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը, իսկ 5-րդ միջոցառումը՝ Հայաստանի ազգային ագրարային և տնտեսագիտական համալսարանների ուսանողների համար պրակտիկայի ու պրակտիկ դասընթացների կազմակերպմանն ու անցկացմանը:

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի «տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ» (հավելված 1) բաժնի 14 միջոցառումներից միայն 3-ն են ուղղակիորեն վերաբերելի աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի խնդիրներին. (2-րդ, 3-րդ և 14-րդ) աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկում, աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխանող տիպային պայմանագրերի, անհատական իրավական ակտերի օրինակելի ձևաթղթերի կազմում ու ներդրում, դժբախտ դեպքերի ու

⁵⁹ ԱԱՏՄ 2021 թ. գործունեության տարեկան ծրագիր, հավելված 1, էջ 25:
https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf և

մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության ստացում: Վերոնշյալ միջոցառումների կատարողականի գնահատման վերլուծությունը ցույց է տալիս, որ

- 2-րդ միջոցառման՝ աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկման մասով, ԱԱՏՄ-ն մասնակցություն է ունեցել էլեկտրոնային հարթակի ստեղծման նպատակով կազմակերպված աշխատաժողովին, որի ընթացքում քննարկվել են հարթակի նպատակի, հիմնական գործառնությունների, նշանակության և տեխնիկական առաջադրանքի մշակման հարցերը: Միաժամանակ մշակվել է աշխատանքային օրենսգրքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, համաձայն որի՝ աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակը պետական կառավարման մարմինների համար պարտադիր կլինի 2023 թվականի հուլիսից, իսկ ոչ պետականի համար՝ 2025 թվականից:
- 3-րդ միջոցառման մասով մշակվել է աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխանող տիպային աշխատանքային պայմանագրերի, աշխատանքի ընդունելության մասին անհատական իրավական ակտերի օրինակելի ձևաթղթերը:
- 14-րդ միջոցառման մասով՝ աշխատավայրում դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած աշխատողների վերաբերյալ ուստիկանությունից օպերատիվ տեղեկատվությունը ստացվում է, և ԱԱՏՄ տեսուչների կողմից ստուգումների ու վարույթների ընթացքում նշված տեղեկատվությունը ճշտվում է:

Ընդհանուր առմամբ, ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների տարեկան գործունեության ծրագրերի պլանավորված միջոցառումները մեծ մասամբ այս կամ այն կերպ առնչվում կամ վերաբերում են աշխատանքային իրավունքների, ներառյալ՝ աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման մասով ԱԱՏՄ-ին «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով և ԱԱՏՄ կանոնադրությամբ վերապահված լիազորությունների իրականացմանը: Այդուհանդերձ, դրանց ճնշող մեծամասնությունը վերաբերում է ԱԱՏՄ կարողությունների զարգացմանը, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցմանը: Միաժամանակ, վերոնշյալ միջոցառումները մեծ մասամբ չեն բխում ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում արձանագրված խնդիրներից և ռիսկերից:

Բացի այդ, նշված միջոցառումների ծրագրերում (հավելված 1) «Միջոցառումներ» սյունակում առկա 2 ենթապյունների՝ համարակալված (2 և 3) նշումով, ներկայացված միջոցառումներից պարզ չէ, թե որ ենթասյան ներքո է միջոցառումը ձևակերպված: Միջոցառումների ծրագրում «ակնկալվող արդյունքներ» սյունակում տրված ձևակերպումները չունեն սպասվող արդյունքների քանակական կամ որակական գնահատականներ և կատարման մակարդակի գնահատման տեսանկյունից խնդրահարույց են: ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի միջոցառումները ներկայացված չեն իրականացման կոնկրետ գործողությունների տեսքով, իսկ սահմանված ժամկետները կոնկրետ չեն: Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում արձանագրված խնդիրների կամ ռիսկերի նվազեցման կամ դրանց հակազդման գործողությունների բացակայությունը դժվարացնում է գնահատել միջոցառման իրականացման արդյունքները, ԱԱՏՄ աշխատանքային օրենս-

դրության վերահսկողության ոլորտում արձանագրված խնդիրների լուծման աստիճանը կամ ռիսկերի նվազեցման մակարդակը:

Եզրակացություններ

Այսպիսով, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ով սահմանված, ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության տարեկան միջոցառումների ծրագրի, դրա իրականացման կատարողականի արդյունքների, աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներին և բացահայտված ռիսկերի համադրության, ԹԻՂԿ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում.

- ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի հավելվածներում բացակայում են ԱԱՏՄ կառավարման խորհրդի կողմից նշված ծրագրերի հաստատման վերաբերյալ գրառումները:
- ԱԱՏՄ 2021 թ. գործունեության ծրագրի մշակման մասով բացակայում են դրա կազմման, կառուցվածքի, միջոցառումների ժամկետների, ակնկալվող արդյունքների ու գնահատման ցուցիչների սահմանման մեթոդական ուղեցույցներն ու ենթաօրենսդրական կարգավորումները:
- ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների առկա վիճակը» ենթավերնագրի ներքո ներկայացված տվյալները չեն բնութագրում աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տիրող իրավիճակի ընդհանրական պատկերը: Ներկայացված ցուցանիշներն ավելի շուտ նկարագրում են ԱԱՏՄ գործունեության ուղղությամբ իրականացված ջանքերը:
- ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա խնդիրներն ու բացահայտված ռիսկերը» վերնագրի ներքո ԱԱՏՄ վերահսկողության ոլորտային խնդիրների ու ռիսկերի փոխարեն ներկայացված են ԱԱՏՄ-ի աշխատակազմում առկա խնդիրները և դրանցով պայմանավորված կարողությունների բացերը՝ կադրային հագեցվածության և համալրման, կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման նպատակով համապատասխան աշխատանքային տարածքների հատկացման և դրանց վերանորոգման հարցերը:
- ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի «տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ» (հավելված 1) բաժնում 14 միջոցառումներից միայն 3-ն են (2-րդ, 3-րդ և 14-րդ) ուղղակիորեն վերաբերելի աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի խնդիրներին. աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկում, աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխանող տիպային պայմանագրերի, անհատական իրավական ակտերի օրինակելի ձևաթղթերի կազմում ու ներդրում, դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության ստացում: Վերոնշյալ միջոցառումները լիովին չեն բխում ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում արձանագրված խնդիրներից և ռիսկերից:

- ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրերի կառուցվածքում հստակ տարանջատված ու խմբավորված չեն ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում իրականացվող միջոցառումները: Հավելված 1-ի «Միջոցառումներ» սյունակում առկա 2 ենթասյուններում ներկայացված միջոցառումներից պարզ չէ, թե որ ենթասյան ներքո է միջոցառումը ձևակերպված:
- Միջոցառումների ծրագրի (հավելված 1) «ակնկալվող արդյունքներ» սյունակում տրված ձևակերպումները չունեն սպասվող արդյունքների քանակական կամ որակական գնահատականներ և կատարման մակարդակի գնահատման տեսանկյունից խնդրահարույց են:
- ԱԱՏՄ 2021 և 2022 թվականների գործունեության ծրագրերի միջոցառումները ներկայացված չեն իրականացման կոնկրետ գործողությունների տեսքով, միջոցառումների կատարման ժամկետները կոնկրետացված չեն:
- ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում արձանագրված խնդիրների կամ ռիսկերի նվազեցման կամ դրանց հակազդման գործողությունների բացակայությունը դժվարացնում է գնահատել միջոցառման իրականացման արդյունքները, արձանագրված խնդիրների լուծման աստիճանը կամ ռիսկերի նվազեցման մակարդակը:

Ելնելով վերոնշյալից՝ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաստատված ծրագրի աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի նախանշված միջոցառումների ծրագրի կատարողականի արդյունքները ԹԻՀԿ կողմից գնահատվում է 8 տոկոսային բալային միավոր և համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի՝ ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչով գտնվում է «Կայացման փուլում»:

Առաջարկություններ

- 2.1.1 ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակի կողմից մշակել տեսչական մարմինների գործունեության ամենամյա ծրագրի կազմման, դրա կառուցվածքի, միջոցառումների մշակման, կատարման ժամկետների, իրականացման գործողությունների, ակնկալվող արդյունքների ու դրանց գնահատման ցուցանիշների ու ցուցիչների սահմանման մեթոդական ցուցումներ կամ ուղեցույց:
- 2.1.2 ՀՀ Վարչապետի աշխատակազմի՝ տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակի կողմից կազմակերպել ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրերի կատարման հաշվետվությունների քննարկումներ՝ մշակելով ԱԱՏՄ գործունեության միջոցառումների ծրագրի կատարումը գնահատող մեթոդական ցուցումներ, քանակական և որակական ցուցիչներ:
- 2.1.3 ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների առկա վիճակը» ենթավերնագրի ներքո ներկայացնել ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տիրող իրավիճակի ընդհանրական պատկերը ըստ ոլորտների, ինչպես նաև ռիսկային գործոնների, կոնկրետ ոլորտներում համատեքստի (տարվող քաղաքականության, սոցիալական պայմանների, կիրառվող տեխնոլոգիաների և այլն)

թեմատիկ ուսումնասիրությունների, առանձին հարցումների արդյունքների, քաղաքացիների դիմում բողոքների և այլ վիճակագրական տվյալների հիման վրա:

- 2.1.4 ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա խնդիրներն ու բացահայտված ռիսկերը» բաժնում ներկայացնել ԱԱՏՄ վերահսկողության, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության ոլորտներում լուծման ենթակա առաջնահերթ խնդիրներն ու արձանագրված ռիսկերը: Բացահայտված խնդիրներն ու արձանագրված ռիսկերը պետք է հիմք հանդիսանան ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների մշակման և աղյուսակային ձևաչափով ներկայացման համար:
- 2.1.5 Վերանայել ԱԱՏՄ-ի ամենամյա գործունեության ծրագրի կառուցվածքը՝ միջոցառումները խմբավորելով ըստ ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության ոլորտային միջոցառումները բխեցնել կոնկրետ ոլորտում արձանագրված խնդիրներից ու գնահատված ռիսկերից:
- 2.1.6 ԱԱՏՄ ամենամյա գործունեության ծրագրի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների համար մշակել ակնկալվող արդյունքներ, քանակական և որակական չափելի ցուցանիշներ և գնահատման ցուցիչներ, միջոցառումները բխեցնել վերահսկողության կոնկրետ ոլորտում արձանագրված խնդիրներից ու ռիսկերից:
- 2.1.7 Վերանայել ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների աղյուսակային ձևաչափը՝ սահմանելով կոնկրետ վերահսկողության ոլորտային խնդիրներ կամ արձանագրված ռիսկեր, նշել դրանց չեզոքացման կամ նվազեցման միջոցառումները, դրանք ապահովող գործողությունները, միջոցառումներից ակնկալվող արդյունքները, գնահատման ցուցիչները, պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումները և կատարման ժամկետները: Միջոցառումների կատարման ժամկետները կոնկրետացնել՝ առանց երկարաժամկետ միջակայքերի:
- 2.1.8 ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ ԱԱՏՄ-ի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության, ինչպես նաև ԱԱՏՄ մյուս կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատակիցների համար մշակել և իրականացնել ռազմավարական և տարեկան պլանավորման, գործողությունների ընթացիկ վերահսկման, ինչպես նաև տվյալների հավաքագրման թեմաներով վերապատրաստման ծրագրեր:

2.2 ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության հաշվետվողականությունը և կատարողականի գնահատումը

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության հաշվետվողականության պահանջները սահմանված են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ով, իսկ գործունեության կատարողականի գնահատման արդյունքների բովանդակությունը՝ նույն օրենքի հոդված 11-ով:

Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչներն ու կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» որոշման⁶⁰ հավելվածով:

Համաձայն վերոնշյալ կարգի 2-րդ կետի պահանջների՝ կատարողականի գնահատումը տեսչական մարմնի գործառույթ է, որի արդյունքում հավաստվում է, որ տեսչական մարմնի խնդիրներն իրագործվել են, նպատակներն իրականացվել են արդյունավետ և պատշաճ, կամ վերհանվում են տեսչական մարմնի գործունեության ընթացքում թույլ տրված բացթողումներն ու դրանց պատճառները: Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը իրականացվում է վերոնշյալ կարգին համապատասխան՝ առաջնորդվելով բազմակողմանիության, ամբողջականության և անկողմնակալության սկզբունքներով: Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման բազմակողմանիության, ամբողջականության սկզբունքների տեսանկյունից գնահատումը ենթադրում է տեսչական մարմնի բոլոր գործառույթների իրականացման ընթացքի և դրանց արդյունքների, տեսչական մարմնի նպատակների իրականացմանն ուղղված գործունեության ապահովման միջոցառումների վերլուծության, միջոցառումներն առանձին-առանձին գնահատման և ամփոփման միջոցով ապահովել ամբողջ տեսչական մարմնի գործունեության արդյունավետության գնահատումը:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման անկողմնակալությունն ապահովվում է գործունեության արդյունավետության գնահատման գործընթացում շահերի բախումը բացառելու և անաչառ մոտեցում դրսևորելու միջոցով: Անկողմնակալության սկզբունքի տեսանկյունից ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատումը դիտարկված է սույն զեկույցի 4-րդ՝ «Ծառայողների բարեվարքության պահանջների պահպանումը և կարողությունների զարգացումը» վերնագրի ներքո:

Համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի պահանջների՝ տեսչական մարմինը պետք է ունենա գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանություն՝ որպես կատարողականի գնահատման անբաժանելի մաս: ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը հաստատված է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ⁶¹:

Ըստ այդմ, ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատումն իրականացվում է ԱԱՏՄ վերահսկողության յուրաքանչյուր ոլորտի, այդ թվում՝ «Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» և «Աշխատանքային իրավունքի» վերահսկո-

⁶⁰ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն՝ «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» որոշում, հավելված. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98695>

⁶¹ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանություն» որոշում. [KATAROXAKANIGNAHATUM.pdf \(hlib.am\)](https://www.kataroxakanignahatum.pdf)

ղության ոլորտների համար առանձին-առանձին՝ հիմնվելով գնահատման հետևյալ չափորոշիչների վրա՝

- 1) նպատակի չափորոշիչ,
- 2) գործընթացի չափորոշիչ,
- 3) արդյունքի չափորոշիչ:

Նպատակի չափորոշիչ

Համաձայն ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ նպատակի չափորոշիչով գնահատվում է ԱԱՏՄ-ի գործունեության հիմնական նպատակի, այն է՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովմանը» հասնելու մակարդակը: Նպատակի չափորոշիչը գնահատվում է հետևյալ 5 հիմնական չափանիշների միջոցով՝

- ԱԱՏՄ գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակ,
- ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայություն,
- ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ,
- խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ,
- Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակ:

Համաձայն վերոնշյալ մեթոդաբանության՝ նպատակի չափորոշիչով աշխատանքային իրավունքի ոլորտում, ԱԱՏՄ 2021 թվականի կատարողականը, հիմնական նպատակին հասնելու չափանիշով 2020 և 2021 թվականներին գնահատվել է 3 միավոր⁶²: ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ ԱԱՏՄ կանոնադրության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատվում է տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները հարաբերելով լրացված ստուգաթերթերով արձանագրված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշին: Նշված բանաձևով հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար պահանջվում է ունենալ աշխատանքի իրավունքների ոլորտում ռիսկերի գնահատման ստուգաթերթեր: Տեսնվարող սուբյեկտի՝ աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն

⁶² ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության կատարողականի գնահատում, հավելված 1.
<https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf>

որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1948-Ն որոշմամբ⁶³ հաստատված տնտեսվարող սուբյեկտի աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափորոշիչների հիման վրա: Վերջինս հիմք է հանդիսանում բացառապես տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնությունը որոշելու և ստուգումների տարեկան ծրագիրը կազմելու համար: Հաշվի առնելով, որ ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը և ռիսկերի չափանիշները հաստատվել են միայն 2021 թվականի նոյեմբերի 25-ին, հետևաբար աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության կատարողականը, ԱԱՏՄ հիմնական նպատակին հասնելու չափանիշով գնահատված 3 միավոր մակարդակը, հնարավոր չէր հաշվարկել ռիսկերի գնահատման մեթոդաբանության պահանջներին համապատասխան:

Միևնույն ժամանակ, աշխատանքի իրավունքի բնագավառում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար մեթոդաբանությամբ պահանջվում է հաշվարկել հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների՝ առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշը: Բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտներում 2020 թ. իրականացվել է ընդամենը 7 ստուգում, 2021 թ.՝ 18, համապատասխանաբար՝ ցուցանիշի փոփոխությունը կազմել է 5.3-ից 3.4: Հարկ է նշել, որ նշված քանակությամբ ստուգումների արդյունքները դեռևս թույլ չեն տալիս ԱԱՏՄ գործունեությունը աշխատանքային իրավունքի ոլորտում գնահատել որպես ռիսկերի նվազում, իսկ առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը՝ 2020 թ. 5.3-ից 2021 թ-ին՝ 3.4 միավորով⁶⁴:

ԹԻՀԿ հարցումների արդյունքները վկայում են, որ ԱԱՏՄ գործունեության կատարողականի մեթոդաբանությամբ, աշխատանքային իրավունքի ոլորտում նպատակային ցուցանիշ առհասարակ չի պլանավորվել: ԱԱՏՄ կարծիքով՝ աշխատանքային իրավունքի ոլորտում գործունեության արդյունքային ցուցանիշի պլանավորում, դրա աճի կամ նվազման գնահատում իրականացնելը դեռևս վաղ է, քանի որ տեսչական մարմինը գործում է կարճ ժամանակահատվածում: Միաժամանակ, 2020 թ. աշխատանքի իրավունքի ոլորտում իրականացվել է ընդամենը 19, իսկ 2021 թ.՝ 29 ստուգում, որոնց հիման վրա հնարավոր չի եղել գնահատել ցուցանիշի փոփոխությունը, երբ տվյալ ոլորտում վերահսկողության ենթակա տնտեսվարող սուբյեկտների թիվը շուրջ 200 000 է:

Վերոնշյալ հանգամանքների պայմաններում, ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության՝ աշխատանքային իրավունքի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների գնահատականը, նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակամիջոցում ունեցած արդյունքի

⁶³ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1948-Ն որոշումը. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157959>

⁶⁴ ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության կատարողականի գնահատում, հավելված 1. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf>

համեմատությամբ, նույնպես չի արտացոլում ռիսկերի փոփոխության մակարդակը և հնարավորություն չի տալիս պատկերացում կազմելու ռիսկերի նվազման կամ աճի մասին:

Նկատի ունենալով, որ մինչև 2021 թվականի հուլիսի 23-ը⁶⁵ ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված՝ «10) աշխատանքային իրավունքի, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում վերահսկողության» գործառույթի «10.1 «ը» - «ժ» պարբերություններով սահմանված լիազորությունների իրականացումը տեսչական մարմինն իրականացրել է ստացված գրավոր դիմումների առկայության դեպքում», իսկ աշխատանքի իրավունքի ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը և չափանիշները սահմանվել են 2021 թվականի նոյեմբերի 25-ին, հետևաբար աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում իրականացված 29 ստուգումների համար հիմք են հանդիսացել գրավոր դիմումները կամ այլ պետական մարմիններից ստացված տեղեկատվությունը:

Արդյունքում ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ թվարկած տարեկան գործունեության կատարողականի հիմնական նպատակին հասնելու և աշխատանքային իրավունքի ոլորտում առավել ռիսկային բնագավառներում ռիսկերի նվազեցման մակարդակի գնահատականները չեն բնութագրում ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ կանոնադրական խնդիրների իրականացման ապահովման մակարդակը:

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման նպատակային չափորոշիչով «Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական ու մարդկային ռեսուրսները» չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսանում ԱԱՏՄ համապատասխան բաժնում ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների լրացուցիչ հատկացումները: Գնահատման մեթոդաբանությամբ հաշվի է առնվում հատկացված լրացուցիչ միջոցների հիմնավորվածությունը և արդյունքը⁶⁶: ԹԻՅԿ հարցման արդյունքները վկայում են, որ նշված չափանիշով ֆինանսական գնահատական չի տրված ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման գործընթացներում ֆինանսական միջոցների մեծության վերաբերյալ, միայն նշված է, որ այն կազմում է ԱԱՏՄ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության աշխատակիցների վարձատրությունն ու պարգևատրումները: ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի հաշվետվությամբ որպես մարդկային ռեսուրսների գնահատական ներկայացված է համա-

⁶⁵ ՀՀ վարչապետի 2021 թվականի հուլիսի 23-ին թիվ 781-Լ՝ «Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154671>

⁶⁶ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանություն» որոշում. [KATAROXAKANIGNAHATUM.pdf](https://www.kataroxakanignahatum.pdf) (hlib.am)

պատասխան վարչության 9 հաստիքներից 6-ի ներգրավվածությունը՝ 3 հաստիքի թափուր լինելու հանգամանքներում: Նշված պայմաններում ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների լրացուցիչ հատկացումներ 2021 թվականին չեն իրականացվել, որի արդյունքում հիմնավորումներ չեն պահանջվել:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների օգտագործման չափանիշի մասով ԱԱՏՄ 2021 թվականի կատարողականի գնահատման հաշվետվությամբ ֆինանսական գնահատական տրված չէ, քանի որ Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցները իրականացվել են ԱԱՏՄ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների ուժերով և լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել: Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների օգտագործման գնահատումները մանրամասն դիտարկվել են սույն հաշվետվության «աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեությունը տնտեսվարող սուբյեկտների իրազեկման և Խորհրդատվության տրամադրման գործում» բաժնում:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված աշխատանքային իրավունքների ու օրենսդրության ոլորտում առաջարկությունների քանակի չափանիշով ԹԻՀԿ հարցումների արդյունքները վկայում են, որ ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության տվյալներով, ԱԱՏՄ-ի կողմից ՀՀ կառավարությանը և համապատասխան պետական կառավարման մարմիններին ներկայացվել է 14 առաջարկություն, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների կողմից մշակված Նորմատիվ իրավական ակտերի՝ շուրջ 20 նախագծերի վերաբերյալ կարծիքներ: Նշված իրավական ակտերի նախագծերի տեսքով առաջարկությունների ներկայացումը հանդիսացել է ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների առօրյա աշխատանքը, հետևաբար դրանց համար առանձին, լրացուցիչ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ չեն հատկացվել: ԱԱՏՄ-ն 2021 թվականին աշխատանքային իրավունքների ոլորտի օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանը և համապատասխան պետական մարմիններին առաջարկներ չի ներկայացրել:

ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությամբ նպատակին հասնելու մակարդակի գնահատման չափորոշիչով ՀՀ կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկները գնահատվում են դրանց քանակով, մինչդեռ ռիսկերի պլանավորման... Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ռեսուրսները՝ կոնկրետ վարչություններում ներգրավված անձանց քանակով կամ դրանց վարձատրության մակարդակով, իսկ ԱԱՏՄ գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը և առավել ռիսկային ոլորտներում փոփոխությունների առկայությունը՝ տոկոսային կամ ինդեքսային գնահատման միավորներով: Արդյունքում վերոնշյալ 5 չափանիշներով աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության

կատարողականի ամփոփ գնահատական ԱԱՏՄ կատարողականի գնահատման մեթոդաբանությունը չի նախատեսում: Մինչդեռ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 693-Ն որոշմամբ հաստատված տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին որոշման հավելվածի 5-րդ կետով նախատեսվում է տեսչական մարմնի կատարողականի գնահատման ամբողջականության սկզբունքի ներքո «ամփոփել այդ գնահատականը՝ ամբողջ տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունը գնահատելու միջոցով»:

Եզրակացություններ

Այսպիսով, ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման բազմակողմանիության և ամբողջականության սկզբունքների տեսանկյունից ԱԱՏՄ հիմնական նպատակին հասնելու չափորոշիչով գործունեության արդյունավետության գնահատումը ցույց է տալիս, որ՝

- Աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ գործունեության կատարողականի մեթոդաբանությամբ նպատակային ցուցանիշներ չեն պլանավորվել:
- Աշխատանքի իրավունքի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված փոքրաթիվ ստուգումների արդյունքները, այդ թվում՝ բարձր ռիսկայնությամբ, դեռևս թույլ չեն տալիս աշխատանքային իրավունքի ոլորտում դիտարկել ռիսկերի նվազում:
- Աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ կանոնադրությամբ սահմանված հիմնական նպատակին հասնելու 3 միավոր մակարդակը հնարավոր չէր հաշվարկել ռիսկերի գնահատման մեթոդաբանության պահանջներին համապատասխան, քանի որ ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի հիման վրա ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները հաստատվել են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1948-Ն որոշմամբ, որը ուժի մեջ է մտել 2021 թվականի նոյեմբերի 26-ից:
- ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության՝ աշխատանքային իրավունքի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների գնահատականը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ունեցած արդյունքի համեմատությամբ նույնպես չի արտացոլում ռիսկերի փոփոխության մակարդակը, հնարավորություն չի տալիս պատկերացում կազմելու ռիսկերի նվազեցման կամ աճի մասին:
- 2021 թվականին աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում կատարված 29 ստուգումներն իրականացվել են գրավոր դիմումների կամ այլ պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա: Արդյունքում՝ ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության կատարողականը՝ հիմնական նպատակին հասնելու գնահատականը չի բնութագրում ԱԱՏՄ աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ կանոնադրական խնդիրների իրականացման ապահովման և աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի նվազեցման մակարդակները:

- «Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական ու մարդկային ռեսուրսները», «Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները» չափորոշիչների մասով ֆինանսական գնահատականներ հաշվարկված և տրված չեն:
- ԱԱՏՄ-ն 2021 թվականին աշխատանքային իրավունքների ոլորտի օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանը և համապատասխան պետական մարմիններին օրենսդրական առաջարկներ չեն ներկայացրել:
- Տեսչական մարմնի՝ աշխատանքի իրավունքի ոլորտում գործունեության կատարողականի գնահատման բազմակողմանիության սկզբունքի կիրառման պահանջների ներքո հնարավոր չի եղել ամփոփել աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ գործունեության արդյունավետությունը:

Գործընթացի չափորոշիչ

ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման գործընթացի չափորոշիչը գնահատվում է հետևյալ 4 հիմնական չափանիշների միջոցով՝

- ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողություն,
- բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ ստուգումների քանակ,
- ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողություն,
- ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակին,
- ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տրամադրված տեղեկատվության որակի և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ:

Վերոնշյալ չափանիշներով ԱԱՏՄ աշխատանքի, առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում ստուգումների գործընթացի գնահատումը, ըստ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության և կատարողականի գնահատման չափանիշների, ունի հետևյալ պատկերը:

Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների⁶⁷ միջին տևողության չափանիշով գնահատելու համար մեթոդաբանությամբ պահանջվում է հաշվարկել հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չալանավորված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում բուն ստուգման գործընթացի միջին տևողությունը: Աշխատանքային իրավունքի ոլորտում 2021 թվականի համար հաշվարկվել է ստուգումների 8.3 օր տևողությունը՝ 5 վերստուգումների համար, որը ԱԱՏՄ 2021 թվականի ըստ անհրաժեշտության ստուգումների միջին ցուցանիշից ցածր է 5.5 օրով:

Աշխատանքի իրավունքի ոլորտում բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտներում ու ստուգման օբյեկտներում ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ ստուգումների քանակի չափանիշով գնահատման համար հաշվարկվել է աշխատանքի իրավունքի ոլորտում բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի հարաբերությունը տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և նույն ժամանակահատվածում իրականացված ստուգումների ընդհանուր քանակին: 2021 թվականին աշխատանքի իրավունքի ոլորտում իրականացված 29 ստուգումների պայմաններում բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների տեսակարար կշիռը կազմել է 62.1 %⁶⁸:

Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը չափանիշով՝ ԱԱՏՄ ստուգումների 2021 թվականի ծրագրով նախատեսված 29 ստուգումների պայմաններում ստուգումների միջին տևողությունը աշխատանքի իրավունքի ոլորտում կազմել է 13.3 օր, որը մեկ օրով գերազանցում է նախորդ՝ 2020 թվականի համանման ցուցանիշը:

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության «VII. Տեղեկություն իրականացված ստուգումների վերաբերյալ» բաժնում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» ոլորտում 2021 թվականին հրապարակված 43 հանձնարարագրերի, դրանց հիման վրա կազմած 41 տեղեկանքների, խախտումները վերացնելուն տրված 28 կարգադրագրերում⁶⁹ արձանագրված տվյալները հիմք են հանդիսանալու 2022 թվականի նույնաբովանդակ տվյալների համադրման և վերլուծության համար:

ԹԻՅԿ հարցման արդյունքները վկայում են, որ 2021 թվականի ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատումը աշխատանքի իրավունքի ոլորտում չի իրականացվել, քանի որ 2021 թվականի ընթացքում աշխատանքային իրավունքի ոլորտում ստուգումներ չեն իրականացվել: Այս հանգամանքը հուշում է, որ ԱԱՏՄ կատարողականի գնահատման հաշվետվության գործընթացի չափորոշիչներ բաժնում «Աշխատանքի իրավունք» ոլորտի ներքո պետք է հասկանալ «աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» ոլորտը, որի մասով իրականացված ստուգումների վերաբերյալ տվյալները

⁶⁷ Ըստ անհրաժեշտության ստուգումները դրանք վերստուգումներն են, որը աշխատանքի իրավունքի ոլորտում, համաձայն ԱԱՏՄ 2021 թվականի հաշվետվության, կազմել է 5 վերստուգում: ԱԱՏՄ 2021 թվականի հաշվետվություն, էջ 25. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

⁶⁸ ԱԱՏՄ 2021 թվականի կատարողականի գնահատման հաշվետվություն, էջ 5. [1.1HavelvacN1.pdf \(hlib.am\)](https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf)

⁶⁹ ԱԱՏՄ 2021 թվականի հաշվետվություն, էջ 27. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

ներկայացված են ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվությունում⁷⁰: Միաժամանակ, աշխատանքային իրավունքի բնագավառում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը հաստատվել է ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N299-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 20-ին: Հետևաբար, աշխատանքային իրավունքի ոլորտի ստուգաթերթը⁷¹ հիմք չի հանդիսացել 2021 թվականի ստուգումների ծրագրի կազմման համար: Բացի այդ, ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության մեջ «աշխատանքային իրավունք» ոլորտի եզրույթի տարաբնույթ կիրառման պայմաններում բացակայում է 2021 թվականի գործընթացի չափորոշիչով «աշխատանքային իրավունքի և օրենսդրության» ոլորտում տվյալների համադրության ապահովումը, որը հնարավորություն չի տալիս աշխատանքի իրավունքի գործընթացների կազմակերպման արդյունավետության տեսանկյունից գնահատելու ԱՍՏՄ գործունեությունը:

Հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային չափերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկերի կանխման նպատակով ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների, ինչպես նաև ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանի չափանիշով՝ ԱՍՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում գնահատումները ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության և կատարողականի հաշվետվություններում բացակայում են:

Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից չափանիշով ԱՍՏՄ աշխատանքների գնահատումը կատարվում է՝ ելնելով ԱՍՏՄ աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացված դիմում-բողոքների, լրացված իրազեկման թերթիկների և այլ արձագանքների վերլուծությունից (պաշտոնական կայքէջ, ֆեյսբուքյան էջ և այլն): ԱՍՏՄ 2021 թվականի կատարողականի գնահատման հաշվետվության⁷² տվյալներով՝ ԱՍՏՄ գործունեության գնահատման համար կիրառվել է միայն 126 հարցաթերթ, որոնց արդյունքներով տնտեսվարող սուբյեկտները ամենաբարձր գնահատել են ստուգող տեսուչների անաչառությունը և անկողմնակալությունը, իսկ առավել ցածր՝ ստուգաթերթերի արդյունավետությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը գնահատվել է միայն հարցաթերթերի միջոցով, մինչդեռ մեթոդաբանությունը պահանջում է գնահատումը

⁷⁰ ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն, էջ 24. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

⁷¹ ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 10-ի N 299-Ն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշումը. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=160875>

⁷² ԱՍՏՄ 2021 թվականի կատարողականի գնահատման հաշվետվություն, էջ 6-7. [1.1HavelvacN1.pdf \(hlib.am\)](https://www.hlib.am/1.1HavelvacN1.pdf)

իրականացնել նաև ստացված դիմում-բողոքների, լրացված իրազեկման թերթիկների և այլ արձագանքների վերլուծությունից (պաշտոնական կայքէջ, ֆեյսբուքյան էջ և այլն): ԱԱՏՄ տեսուչների անաչառության և արհեստավարժության գնահատումները մանրամասն դիտարկվել են սույն հաշվետվության «աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ ծառայողների բարեվարքության պահանջների պահպանումը և կարողությունների զարգացումը» բաժնում:

Եզրակացություններ

Այսպիսով, ԱԱՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում, ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման բազմակողմանիության և ամբողջականության սկզբունքների տեսանկյունից, ԱԱՏՄ գործունեության գործընթացների իրականացման չափորոշիչի գնահատումը ցույց է տալիս, որ՝

- ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվությունում ստուգումների գործընթացի կազմակերպման և պլանավորման փուլերում առկա է անհստակություն «աշխատանքի իրավունք» և «աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» ոլորտների միջև: Մասնավորապես, կատարողականի գնահատման հաշվետվությունում գործընթացի չափորոշիչը գնահատված է «Աշխատանքի իրավունք» ոլորտի մասով, մինչդեռ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվությունում կիրառվել է «աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» ոլորտ եզրույթը:
- Աշխատանքի իրավունքի ոլորտում գործընթացների գնահատման՝ հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնասի կամ ռիսկերի կանխման նպատակով ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների, ինչպես նաև ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանի չափանիշների մասով՝ բացակայում են ոլորտային գնահատումները:
- Աշխատանքի իրավունքի ոլորտում գործընթացների չափորոշիչի համար բացակայում են նպատակային մակարդակների ցուցանիշները՝ մասնավորապես «ըստ անհրաժեշտության» և «ծրագրավորված ստուգումների», ինչպես նաև «բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների ու օբյեկտների մոտ ստուգումների տևողության» չափանիշի նպատակային մակարդակները:
- Աշխատանքային իրավունքի ոլորտում ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության գործընթացների չափորոշիչի մասով, գործող մեթոդաբանության կիրառման պայմաններում, ամփոփ գնահատական ստանալ հնարավոր չէ:

Արդյունքի չափորոշիչ

ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման արդյունքային չափորոշիչը բնութագրում է տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքները:

Արդյունքի չափորոշիչը գնահատվում է հետևյալ 4 հիմնական չափանիշների միջոցով՝

- ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցություն,
- տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխություն,
- ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ,
- տեսչական մարմնի և տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակ և դրանց արդյունքներ:

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության և կատարողականի գնահատման հաշվետվությունների⁷³ տվյալների համադրումը ցույց է տալիս, որ աշխատանքի իրավունքի ոլորտում ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցության, ինչպես նաև ԱԱՏՄ վերահսկողության երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխության վերաբերյալ գնահատումներ չեն իրականացվել: Հաշվետվության մեջ միայն նշված է ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների ամփոփ տվյալները՝ առանց տարանջատելու վերահսկողության «աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» և «աշխատանքային օրենսդրության» ոլորտները: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն՝ «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» որոշման հավելվածի 15-րդ կետի պահանջների՝ «Արդյունքի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին», իսկ ԱԱՏՄ կանոնադրությամբ՝ աշխատանքային իրավունքի և օրենսդրության ոլորտում ԱԱՏՄ կոնկրետ լիազորությունները սահմանված են ՀՀ Վարչապետի 11 հունիսի 2018 թվականի N 755-Լ-ն որոշման հավելվածի 11-րդ մասի 10-րդ ենթակետում: Բացի այդ, աշխատանքի իրավունքի ոլորտում երեքից հինգ՝ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխության վերաբերյալ գնահատումները նախատեսվում է իրականացնել 2022 թվականից հետո, որը պայմանավորված է 2022 թվականի մարտի 10-ի N 299-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշմամբ աշխատանքային իրավունքի բնագավառում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը հաստատելու հանգամանքով:

Համաձայն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ԱԱՏՄ 2021 թվականի ընթացքում տեսչական մարմնի կողմից աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում, հարուցվել է 532 վարչական վարույթ, որից 255-ը՝ տեսչական մարմնի նախաձեռնությամբ, իսկ 277-ը՝ դիմումների հիման վրա: Ստացված 272 դիմում-բողոքներից 269-ը վերաբերել են աշխատանքային օրենսդրության խախտումներին, իսկ 3-ը՝ աշխատողների առողջության պահպանմանը և անվտանգության

⁷³ ԱԱՏՄ 2021 թվականի կատարողականի գնահատման հաշվետվություն, էջ 8. [1.1HavelvacN1.pdf \(hlib.am\)](#)

ապահովմանը: Այդ թվում՝ 146-ը վերաբերել է օրենքով սահմանված կարգով վերջնահաշվարկ չկատարելուն և օրենքով սահմանված ժամկետներում աշխատավարձը չվճարելուն, 52-ը՝ աշխատանքային պայմանագրերի լուծման կարգը չպահպանելուն, 71-ը՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների խախտումներին:

Ըստ առանձին ստուգման՝ հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները չափանիշի ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության⁷⁴ տվյալների՝ ԱԱՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում 2021 թվականին ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշները աճել են շուրջ 2 անգամ՝ 2020 թվականի 2.1-ից հասնելով 4.1-ի: Սա նշանակում է, որ մեկ ստուգման ծախսերը միջին հաշվով համապատասխանաբար կրկնապատկվել են: ԱԱՏՄ որակի վերահսկման վարչությունն այս երևույթը պայմանավորում է ստուգման ծավալի համեմատ ավելի մեծ թվով աշխատակիցների գործուղման և ստուգման չարդարացված տևողության, անսպասակ գործուղումների և գիշերակացի դեպքերով:

Տեսչական մարմնի և դրա աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները չափանիշը գնահատվում է՝ հաշվարկելով ստացված բողոքների քանակը իրականացված ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ: Համաձայն ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության՝ աշխատանքի իրավունքի ոլորտում տեսչական մարմնի և աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների թիվը 2021 թվականին կազմել է 42 դեպք, որից 21-ը՝ տեսչական մարմնին, իսկ 21-ը՝ դատարան: Եթե հիմք ընդունենք այն, որ 2021 թվականին ԱԱՏՄ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում իրականացված ստուգումների քանակը 43 է⁷⁵, ապա ստացված բողոքների քանակը իրականացված ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ կկազմի 1:0.97, որը բավականին բարձր ցուցանիշ է: Սա նշանակում է, որ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում իրականացված համարյա բոլոր ստուգումների արդյունքները բողոքարկվել են կամ տեսչական մարմնին, կամ դատարան: Իսկ եթե հիմք ընդունենք 2021 և 2020 թվականների համապատասխան տվյալների համադրությունը, ապա ստուգումների արդյունքների բողոքարկումները աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում աճել է 3.5 անգամ:

ԱԱՏՄ 2021 թ. գործունեության հաշվետվության «X. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին» բաժնի մասով ԹԻՅԿ հարցման արդյունքները վկայում են, որ 2021

⁷⁴ ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության կատարողականի գնահատում, հավելված 1, էջ 9. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf>

⁷⁵ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն, էջ 25, աղյուսակ 1. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

թվականին աշխատանքի իրավունքի ոլորտում ԱԱՏՄ ներկայացված 21 վարչական բողոքից՝ 1 բողոք վերադարձվել է՝ պարզ չի եղել բողոքի առարկան և պահանջը, 1 բողոք վերադարձվել է՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու հիմքով, 3 բողոք կարճվել է՝ ներկայացվել են առանց ստորագրության, 1 բողոք կարճվել է՝ դատական հայց ներկայացնելու հիմքով, 1 բողոք բավարարվել է և անվավեր է ճանաչվել կայացրած որոշումը, 2 բողոքի արդյունքում բողոքարկվող ակտը բեկանվել է, գործն ուղարկվել է նոր քննության, 2 բողոք մերժվել է: Դատական կարգով բողոքարկված 21 բողոքից՝ 1 բողոք մերժվել է, 3 բողոք դատարանի կողմից բավարարվել է, որոնց մասով ԱԱՏՄ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք, 17 բողոքի քննությունն ընթացքի մեջ է:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը պահանջում է ԱԱՏՄ «... պաշտոնական կայքէջում և հանրության համար հասանելի այլ միջոցներով հրապարակել իր և իր ծառայողների գործունեության կատարողականի գնահատման չափորոշիչները, կիրառման հիմնավորումները, դրանց նկատմամբ վերահսկողության ձևերը, ինչպես նաև բարելավման ուղիները»: ԹԻՀԿ հարցումների արդյունքները վկայում են, որ ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի աշխատակիցների (տեսուչների) գործունեության կատարողականի վերաբերյալ: ԱԱՏՄ պաշտոնական կայքէջի «Հաշվետվություններ» բաժնում, որտեղ տեղակայված են ԱԱՏՄ տարեկան, եռամսյակային հաշվետվությունները, այդ թվում՝ գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունները, բացակայում է տեղեկատվություն ԱԱՏՄ տեսուչների կատարողականի վերաբերյալ: ԱԱՏՄ կայքէջի նույն՝ «Հաշվետվություններ» բաժնի «այլ հաշվետվություններ» ենթաբաժնում⁷⁶ տեղադրված են ԱԱՏՄ առանձին թվով փորձագետների հաշվետվությունները, որոնց 2021 թվականին ներկայացրած հաշվետվությունները վերաբերում են 2021 թվականի հուլիս ամսին «Չվարթնոց» օդանավակայանի հսկիչ կետում ուղևորների թեստավորված լինելու և պատվաստման հավաստագրերի առկայության հանգամանքների ստուգմանը:

Եզրակացություններ

Այսպիսով, ԱԱՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման բազմակողմանիության և ամբողջականության սկզբունքների տեսանկյունից ԱԱՏՄ գործունեության արդյունքային չափորոշիչի իրականացման գնահատումը ցույց է տալիս, որ՝

- ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցության, ինչպես նաև ԱԱՏՄ վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի

⁷⁶ ԱԱՏՄ կայքէջ. <https://www.hlib.am/wp-content/uploads/2021/08/%D4%B1%D5%80%D5%A1%D5%AD%D5%BE%D5%A5%D6%80%D5%A4%D5%B5%D5%A1%D5%B6.pdf>

փոփոխության վերաբերյալ աշխատանքի իրավունքի ոլորտում գնահատումներ չեն իրականացվել:

- ԱԱՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում 2021 թվականին ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշները աճել են շուրջ 2 անգամ՝ 2020 թվականի 2.1-ից հասնելով 4.1-ի: Մեկ ստուգման ծախսերը միջին հաշվով կրկնապատկվել են, որը պայմանավորված է ստուգման ծավալի համեմատ ավելի մեծ թվով աշխատակիցների գործուղման և ստուգման չարդարացված տևողության, անսպասելի գործուղումների և գիշերակացի դեպքերի հետ:
- ԱԱՏՄ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ոլորտում ստուգումների արդյունքների բողոքարկումները 2021 և 2020 թվականների համեմատ աճել է 3.5 անգամ:
- ԱԱՏՄ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ոլորտում 2021 թվականի գործունեության «ստացված բողոքների քանակի և իրականացված ստուգումների ընդհանուր քանակի» համեմատությամբ հաշվարկված ցուցիչը կազմել է՝ 1:0.97, որը նշանակում է, որ ԱԱՏՄ-ի կողմից տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված համարյա բոլոր ստուգումների արդյունքները բողոքարկվել են կամ տեսչական մարմին, կամ դատարան:
- ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունը աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի աշխատակիցների (տեսուչների) գործունեության կատարողականի վերաբերյալ տեղեկատվություն չի պարունակում:

Ելնելով վերոնշյալից՝ ԱԱՏՄ 2021 թվականի աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեության և տեսուչների կատարողականի իրականացման աստիճանը, ինչպես նաև ռիսկերի վրա հիմնված ռիսկայնության չափորոշիչների կատարողականները՝ ԹԻՂԿ կողմից գնահատվում է 8 տոկոսային բալային միավոր և համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի՝ ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչներով գտնվում է «Կայացման փուլում»:

Առաջարկություններ

- 2.2.1 ԱԱՏՄ 2022 թվականի և հետագա տարիների հաշվետվություններում և ամենամյա գործունեության ծրագրերում տարանջատել «Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման» և «Աշխատանքային իրավունքի» վերահսկողության ոլորտների շրջանակները:
- 2.2.2 ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման համակարգում, աշխատանքի իրավունքի վերահսկողության ոլորտի համար սահմանել հիմնական արդյունքային նպատակին հասնելու ցուցանիշ, գնահատել դրա աճը կամ նվազումը:
- 2.2.3 ԱԱՏՄ 2022 և հետագա տարիների գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություններում՝ աշխատանքի իրավունքի ոլորտում գնահատման մեթոդաբանությանը համապատասխան ստուգաթերթի և ստուգումների պլանի հիման վրա իրականացնել ստուգումներ և հաշվարկել ռիսկերի գնահատման մակարդակները:

- 2.2.4 Ստուգաթերթերի և ստուգումների պլանի հիման վրա աշխատանքի իրավունքի ոլորտում կատարված ստուգումների արդյունքներով գնահատել աշխատանքային իրավունքի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների՝ գնահատականը համադրելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ:
- 2.2.5 Քննարկել ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանության մեջ հիմնական նպատակին հասնելու չափորոշիչի գնահատման բանաձևում փոփոխությունների և լրացումների իրականացման հարցը՝ այն հաշվով, որ բացի ստուգաթերթերի միջոցով ստացված կշիռների առավելագույն միավորների, հաշվի առնվեն նաև գրավոր դիմումների, անսնուն հաղորդումների էլեկտրոնային հարթակից, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերի գրանցման էլեկտրոնային հարթակից բացահայտված խախտումների և հաղորդումների տվյալների հիման վրա ստուգումների քանակը, որը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմել ռիսկերի նվազեցման նպատակային մակարդակի մասին:
- 2.2.6 ԱԱՏՄ 2022 և հետագա տարիների գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություններում «Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական ու մարդկային ռեսուրսները» չափանիշով հաշվարկել ֆինանսական գնահատականը նույնիսկ այն դեպքում, երբ լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն կատարվել: Այս ցուցանիշը հնարավորություն կտա ստանալու նպատակին հասնելու ամփոփ ցուցիչը:
- 2.2.7 ԱԱՏՄ 2022 և հետագա տարիների գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունում «ՀՀ կառավարությանը կամ համապատասխան մարմիններին աշխատանքային իրավունքի ոլորտում ներկայացված առաջարկությունների քանակի» վերաբերյալ չափանիշով գնահատել ներկայացված առաջարկությունների քանակը՝ դրանց մասով ստանալով գնահատման գործակից, հարաբերելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշի մեծության հետ:
- 2.2.8 ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակ առաջարկություն ներկայացնել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանության» մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ այն հաշվով, որ ԱԱՏՄ հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատման բանաձևում ապահովվի ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված «տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» որոշման հավելվածի 5-րդ կետով սահմանված տեսչական մարմնի հիմնական նպատակին հասնելու գործունեության արդյունավետության ամփոփ գնահատականը ստանալու համար:
- 2.2.9 ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման գործընթացի չափորոշիչների մասով, ԱԱՏՄ 2022 թվականի և հետագա տարիների հաշվետվություններում ապահովել աշխատանքի իրավունքի ոլորտում «Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին,

պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը, ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին» չափորոշիչով գնահատումները:

- 2.2.10 ԱԱՏՄ աշխատանքի իրավունքի ոլորտում գործընթացների չափորոշիչի մասով սահմանել ստուգումների նպատակային մակարդակների ցուցանիշներ, մասնավորապես՝ «ըստ անհրաժեշտության» և «ծրագրավորված» ստուգումների, ինչպես նաև բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների ու ստուգման օբյեկտների համար:
- 2.2.11 ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման արդյունքային չափորոշիչների մասով, ԱԱՏՄ 2022 և հետագա տարիների կատարողականի գնահատման հաշվետվություններում նախատեսել և հաշվարկել աշխատանքի իրավունքի ոլորտում 3-5 բարձր ռիսկայնության բնագավառներում իրավիճակի փոփոխության վերաբերյալ գնահատումներ:
- 2.2.12 ԱԱՏՄ 2023 թվականի և հետագա տարիների գործունեության ծրագրերում նախատեսել միջոցառումներ աշխատանքի իրավունքի ոլորտում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշի նվազեցման ուղղությամբ՝ այն հաշվով, որ 1 ստուգման համար նախատեսված ծախսերը վերադառնան տեսչության կողմից իրականացվող ստուգումների միջինին:
- 2.2.13 ԱԱՏՄ 2023 և հետագա տարիների գործունեության ծրագրերում նախատեսել միջոցառումներ աշխատանքի իրավունքի ոլորտում, ստուգման արդյունքներով տեսչական մարմնի և դրա աշխատակիցների դեմ բերված դիմում բողոքների հարաբերակցությունը կրկնակի կրճատելու ուղղությամբ, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների իրազեկման, ստուգման արդյունքների նախնական քննարկումների և պարզաբանումների ներկայացման, տեսուչների վերապատրաստման, ստուգման եզրակացությունների որակի բարձրացման միջոցով:
- 2.2.14 ԱԱՏՄ գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություններում ներառել և ԱԱՏՄ կայքէջում հրապարակել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության և տարածքային կենտրոնների տեսուչների կատարողականի գնահատման չափորոշիչների գնահատականները:

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԱՏՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

3.1 ԱԱՏՍ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների ծրագիրը, դրա իրագործման արդյունավետությունը

ԱԱՏՍ գործունեության վերահսկման ոլորտում հնարավոր ռիսկերի նվազեցման, խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ով սահմանված է կանխարգելիչ գործունեության իրականացման պահանջ, որն ԱԱՏՍ պետք է իրականացնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի մշակման միջոցով: ԱԱՏՍ կանխարգելիչ և իրազեկման ծրագիրը հաստատում է ԱԱՏՍ Կառավարման խորհուրդը: ԱԱՏՍ 2021 թ. գործունեության ծրագիրը հաստատվել է ԱԱՏՍ խորհրդի 2020 թ. նոյեմբերի 25-ի 18-Լ որոշմամբ⁷⁷: ԱԱՏՍ կայքէջի «Տեսչական մարմին: Ծրագրեր» բաժնում հրապարակված «ԱԱՏՍ 2021 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին» հավելվածներում ԱԱՏՍ Կառավարման խորհրդի վերոնշյալ որոշման մասին գրառումը բացակայում է:

ԱԱՏՍ գործունեության կանխարգելման և իրազեկման ծրագիր

ԱԱՏՍ գործունեության կանխարգելման և իրազեկման ծրագիրը միտված է ապահովելու ԱԱՏՍ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների լուծումն ու բացահայտված ռիսկերի չեզոքացումը: Այս տեսանկյունից, ԱԱՏՍ 2021 թվականի գործունեության կանխարգելման և իրազեկման ծրագիրը պետք է կառուցվեր ԱԱՏՍ վերահսկողության ոլորտներում արձանագրված խնդիրների և բացահայտված ռիսկերի հիման վրա: Համաձայն ԱԱՏՍ 2021 թ. գործունեության ծրագրի 2-րդ բաժնի (2.1-2.5 կետեր) տեղեկատվության, ԱԱՏՍ վերահսկողության ոլորտներում արձանագրված խնդիրները և բացահայտված ռիսկերը հիմնականում վերաբերում են ԱԱՏՍ կադրային հագեցվածությանը և համալրմանը, իսկ ռիսկերի նվազեցման գործողությունները՝ ԱԱՏՍ հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման նպատակով համապատասխան աշխատանքային տարածքների հատկացմանը և դրանց վերանորոգման հարցերին:

Ստուգումների և դրանց իրականացման գործընթացում հիմնական խնդիրներ են դիտվել կիրառվող ստուգաթերթերի մասով տնտեսվարողների իրազեկումը, տեսուչների կողմից պատշաճ վարչարարության իրականացման համար նյութատեխնիկական հագեցվածության ապահովման հարցերը, ԱԱՏՍ-ի կողմից համապատասխան բազաների վարման, տեղեկատվության հավաքագրման, ռիսկերի հաշվարկման և ստուգումների իրականացման էլեկտրոնային ծրագրի ապահովման խնդիրները: Խնդիրների շարքում առանձնացվել է նաև

⁷⁷ ԱԱՏՍ 2021 թ. գործունեության ծրագիրը հաստատելու մասին ԱԱՏՍ Կառավարման խորհրդի որոշում.
https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf

գործող իրավական ակտերում բացերի, տարընթերցումների ու իրարամերժ դրույթների բացառումը:

ԱԱՏՄ 2021 թ. գործունեության ծրագրի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր» բաժնում՝ 2.1-2.5 կետերում ներկայացված խնդիրներն ու ռիսկերը ուղղակիորեն չեն բնութագրում ԱԱՏՄ-ի կողմից վերահսկվող ոլորտներում առկա խնդիրներն ու ռիսկերը: Դրանք ավելի շուտ վերաբերում են ԱԱՏՄ-ի տեխնիկական, նյութական, օրենսդրական կարգավորումներում առկա խնդիրներին:

Մինչդեռ, ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի հավելված 2-ում հաստատված են ԱԱՏՄ 2021 թ. կանխարգելման և իրազեկման միջոցառումների ծրագրում աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտին ուղղակիորեն վերաբերելի 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ միջոցառումները, որոնք համապատասխանաբար նպատակաուղղված են.

- 2021 թվականի հուլիսից աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման ուղղությամբ ԱԱՏՄ գործառնությունների ընդլայնման վերաբերյալ իրազեկմանը,
- աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների ապահովման նպատակով գործատուների (ներկայացուցիչների) և աշխատողների (ներկայացուցիչների) համար սեմինարների և խորհրդատվությունների իրականացմանը,
- աշխատող երեխաների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման մասին իրազեկման և աշխատող երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավվման կանխարգելմանը,
- համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով տարածվող աշխատանքի տեղավորման կեղծ առաջարկների չեզոքացմանը, անվտանգ միգրացիայի ապահովմանը և թրաֆիքինգի վտանգի նվազեցմանն ուղղված հանրային իրազեկմանը:

ԱԱՏՄ գործունեության կանխարգելման և իրազեկման ծրագրի միջոցառումներ

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրով նախանշված միջոցառումները համահունչ են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի պահանջներին և բխում են ԱԱՏՄ Կանոնադրության⁷⁸ 10-րդ կետի «գ» և «զ» ենթակետերով սահմանված աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ոլորտներից և գործառնություններից:

Այդուհանդերձ, ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում 2021 թվականի կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրով նախանշված վերոնշյալ միջոցառումները, համադրելով ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի

⁷⁸ ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում, կետ 10.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154685>

աշխատանքային օրենսդրության, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների ապահովման ոլորտում արձանագրված խնդիրներին և բացահայտված ռիսկերին, կարող ենք արձանագրել, որ դրանք չեն բխում ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրով սահմանված խնդիրներից ու բացահայտված ռիսկերից և միտված չեն դրանց լուծմանը:

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում 2021 թվականի կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրով (հավելված 2) նախանշված 7, 8, 10 միջոցառումների կատարողականների գնահատումների վերլուծությունը և համադրումը միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքների հետ, ցույց է տալիս, որ 2021 թվականի հուլիսից աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման ուղղությամբ ԱԱՏՄ գործառնությունների ընդլայնման վերաբերյալ իրազեկման միջոցառման ակնկալվող արդյունքներ են պլանավորվել «Հաղորդագրություն», «Ասուլիս» և «Տեսանյութ» պատրաստելու միջոցով՝ նպատակ ունենալով «ԱԱՏՄ նոր գործառնությունների մասին հանրության և տնտեսվարողների իրազեկման բարձրացումը»: Մինչդեռ, ԱԱՏՄ կառավարման խորհրդի 2022 թվականի հունվարի 25-ի N 03-L «ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվությունը հաստատելու մասին»⁷⁹ որոշման հավելված 2-ի կատարողականի սյունակում նշված են «ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Երևանի քաղաքապետարանի հետ «2021 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ պետական վերահսկողություն» թեմայով սեմինար-խորհրդատվությունների կազմակերպում» գործողությունները: Միաժամանակ, որպես նշված միջոցառման կատարում ներկայացված է նաև «Շաբաթական պարբերականությամբ ԱԱՏՄ-ում, այդ թվում՝ տարածքային կենտրոններում իրականացվել են սեմինար-խորհրդատվություններ՝ աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ պետական վերահսկողության թեմայով գործողությունները»:

ԹԻՀԿ-ի մշակված հարցաշարին ԱԱՏՄ պատասխանների արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում 2021 թվականի կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրով նախանշված 7-րդ միջոցառման կատարողականի համադրումը պլանավորված արդյունքներին՝ ԱԱՏՄ-ի գործառնությունների ընդլայնման մասով, 2021 թ.-ին ասուլիսներ չեն կազմակերպվել, այլ «Սահմանված ժամկետում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարը հարցազրույց է տվել 2 լրատվականի», իսկ պատրաստված հաղորդագրությունների և տեսանյութերի քանակի մասով տրվել են ընդհանրական պատասխաններ՝ առանց նշելու կոնկրետ պատրաստված հաղորդագրությունների ու տեսանյութերի քանակի և դրանց տարածման մասին տվյալներ: Նշված պատասխանները փաստում են, որ կանխարգելման ու իրազեկման ծրագրի 7-րդ միջոցառման կատարողականի գործողությունները միտված չեն եղել ծրագրով սահմանված արդյունքների ստացմանը: Մասնավորապես, որպես կատարողական ներկայացված սեմինար-խորհրդատվությունները, ըստ էության նախատեսված չեն եղել և տպավորություն է ստեղծվում, որ նշված գործողությունները հարմարեցված են կոնկրետ 7-րդ միջոցառման իրականացմանը:

⁷⁹ ԱԱՏՄ կառավարման խորհրդի 2022 թվականի հունվարի 25-ի N03-L՝ «ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» որոշում, հավելված 2. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.2.HavelvacN2.pdf>

Միաժամանակ, ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի կանխարգելման և իրազեկման վերոնշյալ միջոցառումը չունի հասցեականություն, միտված չէ կոնկրետ տնտեսվարող սուբյեկտների խմբին, չի բխում աշխատանքային օրենսդրության ոլորտային խախտումներից կամ բացահայտված ռիսկերից: Նշված 7-րդ միջոցառումը չունի նաև քանակապես գնահատելի ցուցիչներ և ակնկալվող կոնկրետ արդյունքը բնութագրող ցուցանիշ, որով հնարավոր կլիներ գնահատելու, թե ի՞նչ չափով է բարձրացել կամ նվազել ԱԱՏՄ նոր գործառնությունների մասին հանրության և տնտեսվարողների իրազեկման մակարդակը:

Համանման պատկեր է նաև ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում 2021 թվականի կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրով նախանշված 8-րդ միջոցառման կատարման մասով: Այստեղ ակնկալվող արդյունք էր պլանավորվել «Հաստատված պարբերականությամբ ԱԱՏՄ և տարածքային կենտրոնների կողմից սեմինարների իրականացումը», իսկ խնդիրների լուծման մասով՝ «աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների ապահովման նպատակով գործատուների և աշխատողների իրազեկվածության մակարդակի բարձրացում, աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելում, ԱԱՏՄ-ի կողմից տնտեսվարողների իրազեկվածության բարձրացում» արդյունքները: Նշված արդյունքների ապահովման նպատակով որպես կատարողական ներկայացված են Արդյունաբերողների ու գործարարների միության հետ համատեղ անցկացրած «2021 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ պետական վերահսկողություն» թեմայով սեմինար-խորհրդատվությունները, որոնք իրականացվել են նաև 7-րդ միջոցառման ներքո, ինչպես նաև Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) դափնիճում գործատուների համար կազմակերպված իրազեկման սեմինարը: Բացի այդ, նշված է նաև ՀԱԳՄ-ի հետ համատեղ մշակված և հրապարակված «Աշխատանքային իրավունք, կարմիր գծեր, որոնք չպետք է հատի գործատուն» ձեռնարկի, Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների համար իրազեկման սեմինար-խորհրդատվության կազմակերպումը, «Արժանապատիվ աշխատանք հիմա» ծրագրի շրջանակներում. «ԱԱՏՄ-ի դերը աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքների ապահովման/վերահսկողության բնագավառում» թեմայով ֆոկլուս խմբային քննարկումները և 2 հարցազրույցները:

Նշված միջոցառումների կատարման վերաբերյալ ԹԻՅԿ հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ՀԱԳՄ-ի հետ համատեղ 2021 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին կազմակերպված 3 սեմինարներին մասնակցել են ավելի քան 60 տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներ: ՀԱԳՄ-ի հետ պատրաստած «Աշխատանքային իրավունք, կարմիր գծեր, որոնք չպետք է հատի գործատուն» ձեռնարկը տպագրվել է 500 օրինակ տպաքանակով, որից 200-ը տրվել է ԱԱՏՄ-ին՝ իրազեկումների ընթացքում գործատուներին տրամադրելու նպատակով, իսկ 300-ը՝ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությանը: Ավելի քան 60 ձեռնարկ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը տրամադրել է սեմինարների մասնակիցներին, իսկ 150-ը՝ բաժանվել է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության անդամներին: Ազգային գրադարանում կազմակերպված սեմինարին մասնակցել են գրադարանի ավելի քան 150 աշխատակից, իսկ «Արժանապատիվ աշխատանք հիմա» ծրագրի շրջանակներում ֆոկլուս խմբային քննարկումներում ներգրավվել են գործա-

տունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակիցների թիվը, ըստ ԹԻՅԿ ներկայացուցչի տվյալների, կազմել է 14 մասնակից:

Այդուհանդերձ, Նշված տվյալները Նույնպես ամբողջական պատկերացում չեն տալիս 8-րդ միջոցառումը ակնկալվող արդյունքների կատարման մասին, քանի որ միջոցառման ակնկալվող արդյունքները ձևակերպված են շատ ընդհանրական, առանց քանակական գնահատումների ու հստակ չափորոշիչների: Այստեղ Նույնպես բացակայում են կոնկրետ սեմինարների ու խորհրդատվությունների թիրախ խմբերը, խորհրդատվության ենթակա հարցերի շրջանակը և կիրառվող կանխարգելման միջոցների արդյունքները:

ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում 2021 թվականի կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրով նախանշված 10-րդ միջոցառման կատարման մասով՝ աշխատող երեխաների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման մասին իրազեկման և աշխատող երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման կանխարգելման վերաբերյալ սեմինար-քննարկումից ակնկալվող արդյունքներն են՝ «իրազեկման նյութի պատրաստումը և հրապարակումը, սեմինարի անցկացումը»: Որպես խնդրի լուծում դիտվում է «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերից բխող իրազեկում՝ որպես խնդրի կանխարգելիչ քայլ ԱԱՏՄ-ի կողմից» արդյունքը: Նշված արդյունքների ապահովման նպատակով, որպես կատարողական, ներկայացված են «Մինչև 18 տարեկան անձանց աշխատանքում ներգրավվելու առանձնահատկությունների վերաբերյալ Արարատի և Արմավիրի մարզերի մի շարք համայնքներում իրազեկման և խորհրդատվական աշխատանքների» իրականացումը: Մինչդեռ ծրագրի 10-րդ կետի միջոցառումը պահանջում էր իրականացնել սեմինար-քննարկում:

Նշված միջոցառումների կատարման վերաբերյալ ԹԻՅԿ հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ մասնակիցների շրջանակի վերաբերյալ տեղեկատվության տվյալների չափապանման պայմաններում բացակայում է Արարատի և Արմավիրի մարզերում սեմինար-քննարկումների իրականացման ժամկետների, ներգրավված համայնքների, կազմակերպությունների կամ շահառուների խմբերի քանակի մասով տեղեկատվությունը: Պահպանված միակ տեղեկատվությունն այն է, որ ամփոփ միջոցառումը կազմակերպվել է 2021 թ. հուլիսին: Միջոցառման վերաբերյալ կոնկրետ տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատելու դրա իրականացման մակարդակը: Այն ավելի շուտ կարող է գնահատվել որպես չկատարված:

Եզրակացություններ

Այսպիսով, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ով սահմանված կանխարգելիչ գործունեության պահանջների, ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կանխարգելիչ և իրազեկման տարեկան միջոցառումների ծրագրի, դրա իրականացման կատարողականի արդյունքների, աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներին և բացահայտված ռիսկերին համադրության ԹԻՅԿ հարցման արդյունքները ցույց

են տալիս, որ ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի կանխարգելման և իրազեկման ծրագրի (հավելված 2) 7, 8, 10 միջոցառումները`

- Չեն բխում ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի «աշխատանքային օրենսդրության, այդ թվում` աշխատանքային իրավունքների ապահովման ոլորտում արձանագրված խնդիրներից և բացահայտված ռիսկերից և միտված չեն դրանց լուծմանը:
- Չունեն հասցեականություն, միտված չեն կոնկրետ տնտեսվարող սուբյեկտների խմբին, կոնկրետ ռիսկերի կանխարգելմանը կամ ռիսկերի բացահայտմանը կամ չեն բխում ի հայտ բերված կամ բացահայտված` աշխատանքային օրենսդրության ոլորտային խախտումներից:
- Նշված միջոցառումները չունեն նաև քանակապես գնահատելի ցուցիչներ և ակնկալվող կոնկրետ արդյունքը բնութագրող ցուցանիշ, որով հնարավոր կլինե՞ր գնահատել, թե ի՞նչ չափով է բարձրացել կամ նվազել հանրության և տնտեսվարողների իրազեկման մակարդակը:
- Միջոցառումների ակնկալվող արդյունքները ձևակերպված են շատ ընդհանրական, առանց քանակական գնահատումների ու հստակ չափորոշիչների:
- Միջոցառումների կատարողականի սյունակում բացակայում են կոնկրետ միջոցառման թիրախ խմբերի, մասնակիցների շրջանակի, իրականացման ժամկետների, ներգրավված համայնքների, կազմակերպությունների կամ շահառուների խմբերի քանակի, կանխարգելման ու իրազեկման միջոցառումների արդյունքների մասին տեղեկատվությունը:

Առաջարկություններ

- 3.1.1 ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակի կողմից տեսչական մարմինների համար մշակել կանխարգելման և իրազեկման ծրագրի կազմման մեթոդական ցուցումներ կամ ուղեցույց:
- 3.1.2 ՀՀ Վարչապետի աշխատակազմի` տեսչական մարմինների գործունեության համակարգման գրասենյակի կողմից կազմակերպել ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրերի կատարման հաշվետվությունների քննարկումներ` մշակելով ԱԱՏՄ կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրի կատարումը գնահատող մեթոդական ցուցումներ և քանակական և որակական ցուցիչներ:
- 3.1.3 Վերանայել տեսչական մարմինների, մասնավորապես` ԱԱՏՄ-ի կանխարգելման և իրազեկման ծրագրի կառուցվածքը` միջոցառումները բխեցնել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողություն ոլորտում բացահայտված խնդիրներից ու գնահատված ռիսկերից:
- 3.1.4 Կանխարգելման և իրազեկման միջոցառումների համար մշակել ակնկալվող արդյունքներ, քանակապես գնահատելի և չափելի գնահատման ցուցիչներ, իրազեկումը դարձնել ավելի հասցեական` կոնկրետ աշխատանքային իրավունքների ու օրենսդրության վերահսկողության ոլորտում թիրախավորված սեգմենտներով, վերանայել կանխարգելման և իրազեկման միջոցառումների ծրագրի աղյուսակային

ձևաչափը՝ տարանջատել ակնկալվող արդյունքները լուծման խնդիրներից: Կատարման ժամկետները կոնկրետացնել՝ առանց երկարաժամկետ միջակայքերի:

- 3.1.5 ԱԱՏՄ կանխարգելման և իրազեկման միջոցառումների ծրագրի կառուցվածքը համապատասխանեցնել «Տեսչական մարմինների մասին» և ԱԱՏՄ կանոնադրությունից բխող կանխարգելման ու իրազեկման գործիքակազմերի պահանջներին: Մասնավորապես, խորհրդատվությունների տրամադրումը, սեմինարների կազմակերպումը, նոր իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ միջոցառումները ներկայացնել առանձին բաժիններով:
- 3.1.6 ԱԱՏՄ կանխարգելման ու իրազեկման միջոցառումների ծրագրի պլանավորման փուլում ապահովել համագործակցությունը դոնոր, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ նախանշված տեխնիկական աջակցության և իրազեկմանը միտված միջոցառումների ու ծրագրերի պլանավորման և իրականացման գործում:
- 3.1.7 ԱԱՏՄ-ի՝ դոնոր, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում զարգացնել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում հաղորդակցման կարողությունները՝ մշակելով ԱԱՏՄ հաղորդակցման ռազմավարություն և գործողությունների ծրագիր:
- 3.1.8 ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի հետ համատեղ ԱԱՏՄ-ի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի, ԱԱՏՄ տարածքային կենտրոնների աշխատակիցների համար սահմանել կանխարգելման և իրազեկման ծրագրերի մշակման, դրանց իրականացման կոմպետենցիաների պահանջներ, մշակել և իրականացնել հաղորդակցական կոմպետենցիաներին տիրապետմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր:

3.2 Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացումը

Տնտեսվարող սուբյեկտների ու քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացման միջոցառումների իրականացման նպատակով «Տեսչական մարմինների մասին» օրենքի հոդված 13-ը սահմանում է իրազեկվածության միջոցառումների իրականացման մի շարք գործիքակազմերի կիրառման պահանջ: Մասնավորապես, դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ձեռնարկների թողարկում, բուկլետների, տեղեկանքների հրատարակում, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվության փոխանցում: ԱԱՏՄ կանոնադրության տեսչական մարմինն վերապահված լիազորությունների 11-րդ կետի 10-րդ ենթակետի «գ» կետով սահմանված է նաև «գործատուների, աշխատողների և նրանց ներկայացուցիչների համար աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկմանն ուղղված սեմինարների կազմակերպման պահանջ, որը ԱԱՏՄ իրազեկման միջոցառումների բաղադրիչ է:

Դասընթացներ, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ձեռնարկների, բուկլետների, տեղեկանքների հրատարակում

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության «IV բաժնի տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրազեկման կատարման վերաբերյալ տեղեկատվություն» բաժնում ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում իրականացված դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ձեռնարկների թողարկում, բուկլետների, տեղեկանքների հրատարակում, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվության փոխանցում գործիքակազմերով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը փաստում է, որ աշխատանքի վերահսկողության ոլորտում իրականացվել են 70 իրազեկման աշխատանքներ⁸⁰:

ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում «Տեսչական մարմինների մասին» օրենքի հոդված 13-ի և ԱԱՏՄ կանոնադրության 11-րդ կետի 10-րդ ենթակետի «գ» կետի պահանջների կատարման վերաբերյալ ԹԻՂԿ հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ-ն չունի միասնական վիճակագրական տվյալներ՝ իրազեկման աշխատանքների կամ միջոցառումների, շահառու խմբերի, իրականացված դասընթացների մասնակիցների և քննարկումների քանակի վերաբերյալ: Ինչպես ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվությունում, այնպես էլ ԹԻՂԿ հարցաշարի պատասխաններում ԱԱՏՄ-ի կողմից աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, միջոցառումների մասով ներկայացված կատարողականը զերծ է կոնկրետությունից, այն շարադրված է ընդհանրական ձևակերպումներով, որոնք չունեն հստակ ու կոնկրետ արդյունքներ: Մասնավորապես, «Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն ԱԱՏՄ-ի կողմից 2021 թ. ընթացքում աշխատանքային իրավունքների ոլորտում իրականացրած իրազեկման միջոցառումների մասին, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների ո՞ր խմբերի համար է իրականացվել» հարցին տրվել է «Աշխատանքային իրավունքների ոլորտում իրականացրած իրազեկման միջոցառումներին մասնակցել են գործատուները և նրանց ներկայացուցիչները, արհմիությունների ներկայացուցիչներ, աշխատողներ» պատասխանը, իսկ «Քանի՞ դասընթաց է իրականացվել և ի՞նչ թեմաներով, խնդրում ենք նշել մասնակիցների քանակը» հարցին՝ «Տեսչական մարմնի կողմից 2021 թվականին 33 աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների վերաբերյալ պարբերաբար սեմինար-քննարկումներ են իրականացվել Տեսչական մարմնի կենտրոնական ապարատում: Սեմինարների ընթացքում անդրադարձ է կատարվել տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներին՝ աշխատանքային պայմանագրերի կնքման և լուծման կարգին, աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողություններին, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկմանն ու վճարմանը, ամենամյա

⁸⁰ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն էջ 10 <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

արձակուրդների տրամադրման, ինչպես նաև՝ վերջնահաշվարկի կատարման կարգին» անորոշ պատասխանը:

ԱԱՏՄ-ի կողմից 2021 թվականին աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում կազմակերպված սեմինարների քանակի և թեմաների հարցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը փաստում է, որ իրականացված 70 սեմինար-դասընթաց- քննարկումները վերաբերել են «2021 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ պետական վերահսկողությունը» և Աշխատանքային օրենսդրության վերաբերյալ այլ թեմաներին: Մինչդեռ, ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության «V Խորհրդատվական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն» բաժնում⁸¹ նշված է, որ աշխատանքային իրավունքների՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում կազմակերպվել են սեմինարներ «աշխատանքային իրավունքների պաշտպանության հիմնահարցերը Հայաստանում և լուսաբանման առանձնահատկությունները», «Հայաստանում աշխատանքային իրավունքների վերահսկման էլեկտրոնային հարթակի ստեղծման», ինչպես նաև «2021 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ պետական վերահսկողությունը» թեմաներով: Մասնակիցների վերաբերյալ փաստացի տվյալներ չեն պահպանվել⁸²: Համաձայն ԱԱՏՄ-ի կողմից 2021 թվականի գործունեության հաշվետվության և ԹԻՀԿ պատասխանների արդյունքների՝ 2021 թվականին ԱԱՏՄ-ի կողմից աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում իրականացված իրազեկման 70 աշխատանքներն ամբողջությամբ նվիրված են եղել սեմինարների, դասընթացների և քննարկումների կազմակերպմանը: Մինչդեռ, ինչպես նշվեց վերևում, դասընթացների և առանձին քննարկումների վերաբերյալ կոնկրետ թեմատիկ միջոցառումներ առանձնացված չեն կամ չեն իրականացվել:

Աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ ԱԱՏՄ-ի կողմից 2021 թվականին տպագրված ձեռնարկների, բուկլետների և տեղեկանքների վերաբերյալ ԹԻՀԿ-ին տրամադրված տեղեկատվությունը փաստում է, որ աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ տպագրվել է շուրջ 2 000 բուկլետ, իսկ «Աշխատանքային իրավունք, կարմիր գծեր, որոնք չպետք է հատի գործատուն» ձեռնարկը տպագրվել է 500 օրինակ տպաքանակով:

Բացատրական աշխատանքներ և խորհրդատվության մատուցում

«Տեսչական մարմինների մասին» օրենքի հոդված 13-ը սահմանում է տնտեսվարող սուբյեկտներին իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, կոնկրետ հարցերով խորհրդատվության մատուցման պահանջ: Համանման կարգավորում է ներառված նաև ԱԱՏՄ կանոնադրության 13-րդ և 11-րդ կետի 10-րդ ենթակետի «գ» կետում, որոնցով ԱԱՏՄ-ին է վերապահվել գործատուներին, աշխա-

⁸¹ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն էջ 12 <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

⁸² Նշված սեմինարները ներառված են ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների վերահսկման ոլորտում 2021 թվականի կանխարգելման և իրազեկման միջոցառումների ծրագրի հավելված 2-ի 7-րդ և 8-րդ միջոցառումների կատարման ներքո:

տողներին և նրանց ներկայացուցիչներին աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման, ինչպես նաև ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, աշխատանքային հարաբերություններին առնչվող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության և (կամ) խորհրդատվության տրամադրման լիազորությունները:

Համաձայն ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության՝ «Վ. խորհրդատվական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն» բաժնի⁸³ տվյալների՝ աշխատանքային իրավունքների, ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում, տեսչական մարմնի կողմից իրականացվել են 1383 խորհրդատվական աշխատանքներ: Նշված խորհրդատվական աշխատանքներից 77-ը՝ տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված խորհրդատվությունն է աշխատողների աշխատավարձի, հավելավճարների վճարման, աշխատաժամանակի և այլնի վերաբերյալ, 1306-ը՝ «թեժ գծով» ստացված հեռախոսազանգերի հարցերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումները:

ԹԻՀԿ հարցումների արդյունքներով ԱԱՏՄ-ի կողմից 2021 թ. աշխատանքային իրավունքների, աշխատանքային օրենսդրության իրավական ակտերի դրույթների վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման քանակի վերաբերյալ տվյալները բացակայում են: Նշվում է, որ աշխատանքային օրենսդրության, իրավական ակտերի դրույթների վերաբերյալ բացատրությունների տեսքով իրազեկում իրականացվել է սեմինարների մասնակիցների համար, ինչպես նաև մասնագետների կողմից տարվել է բացատրական աշխատանքներ: Աշխատանքային օրենսգրքի կամ աշխատանքային հարաբերությունների առաձեռն հրատապ համարվող հարցերը դուրս են բերվել հիմնականում «թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարին ստացված զանգերի միջոցով⁸⁴: Այդուհանդերձ, ներկայացված տվյալները ընդհանրական են, կրկնում են ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ լիազորությունները, չունեն կոնկրետ քանակական գնահատումներ, հաշվետվությունում բացակայում են «բացատրություն» ստացած տնտեսվարող սուբյեկտների խմբերի ու քանակի վերաբերյալ տվյալները:

ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության հավելված 1-ի «1.4 խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները» բաժնում աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում 2021 թ. համար նշված է իրականացված իրազեկման 6990 միջոցառում⁸⁵: ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների ոլորտում խորհրդատվության տրամադրման իրազեկման գործիքի կիրարկման վերաբերյալ ԹԻՀԿ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ իրազեկման 5615 միջոցառումն ուղեկցել են կատարված ստուգայցերին:

⁸³ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն էջ 12. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

⁸⁴ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն էջ 13. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

⁸⁵ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություն, հավելված 1, էջ 3. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf>

Մինչդեռ, ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվության «VI. Տեղեկատվություն տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումների, դրանց նպատակների ու ստացված արդյունքների վերաբերյալ» բաժնի՝ աշխատանքային իրավունքների, ներառյալ՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում տեսչական մարմնի կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումների մասում նշված է 16532 ստուգայցերի քանակ: Աշխատանքային իրավունքների, ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում, ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության և կատարողականի գնահատման (հավելված 1) երկու հաշվետվություններում ստուգայցերի տարբեր քանակները կարիք ունեն ճշգրտման, քանի որ դրանով է պայմանավորված նաև տրամադրված խորհրդատվությունների, ինչպես նաև մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների ֆինանսական գնահատականը:

ԱՍՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության հավելված 1-ի «1.4 խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները» բաժնում բացակայում է աշխատանքի իրավունքների վերահսկողության ոլորտում խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների ֆինանսական գնահատականը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների պահանջվող քանակը: Հաշվետվությամբ արձանագրված է, որ «խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումները իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների ուժերով: Միաժամանակ, խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար տեսչական մարմնի կողմից լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել»⁸⁶: Սա նշանակում է, որ ԱՍՏՄ 2021 թվականին աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում իրականացված կանխարգելման և իրազեկման միջոցառումներից սեմինարների, ձեռնարկների, տպագրական այլ նյութերի աշխատանքներից ոչ մեկը չի իրականացվել ԱՍՏՄ-ի միջոցներով: Միակ աղբյուրը մնում են դոնոր կամ միջազգային կազմակերպությունների կողմից աշխատանքային իրավունքի ոլորտում իրականացվող ծրագրերը, որոնք էլ հիմք են հանդիսացել ԱՍՏՄ 2021 թվականի աշխատանքային իրավունքի վերահսկողության ոլորտում կանխարգելման ու իրազեկման ծրագրի կատարողականի ապահովման համար:

Նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ իրազեկում

ԱՍՏՄ աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում կանխարգելման ու իրազեկման գործընթացում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ԱՍՏՄ կանոնադրության 15-րդ կետով սահմանվել է «տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև

⁸⁶ ԱՍՏՄ 2021 թվականի գործունեության կատարողականի գնահատման հաշվետվություն, հավելված 1, էջ 4:
<https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf>

դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ» իր վերահսկողության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին իր պաշտոնական կայքէջի և զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև հանդիպումների կազմակերպման միջոցով իրազեկման պարտականություն:

ԹԻՅԿ հարցումների արդյունքներով ԱԱՏՄ-ի կողմից 2021 թ. աշխատանքային իրավունքի օրենսդրության ոլորտում նոր իրավական ակտերի ընդունման կամ ուղեցույցների հրապարակման, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում իր պաշտոնական կայքէջի և զանգվածային լրատվության, ինչպես նաև հանդիպումների կազմակերպման միջոցով ԱԱՏՄ իրականացրել է 6 իրավական ակտերի վերաբերյալ իրազեկում՝ հրապարակելով ԱԱՏՄ կայքէջում⁸⁷: Հրապարակվել է «Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները Հայաստանի Հանրապետությունում»⁸⁸ ուղեցույցը: Այդուհանդերձ, նոր ընդունված իրավական 6 ակտերի կամ հրապարակված մեկ ուղեցույցի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների հետ «իրազեկման հանդիպում-քննարկումների» մասին վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում դժվար է հավաստիանալ նման հանդիպում-քննարկումների կազմակերպման, անվճար ձեռնարկների կամ թերթիկների տպագրման և տնտեսվարող սուբյեկտներին տրամադրման տվյալների արժանահավատության մեջ:

ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությանն առնչվող նոր ընդունված իրավական ակտերի, ուղեցույցների վերաբերյալ իրազեկումն իրականացվում է տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում դրանք հրապարակելու միջոցով: Պաշտոնական կայքէջի կամ զանգվածային լրատվության միջոցով հրապարակվող հայտարարության մեջ նշվում են համապատասխան իրավական ակտի լրիվ անվանումը և դրա պաշտոնական հրապարակման տարին, ամիսը, ամսաթիվը, տեղեկագրի անվանումն ու համարը, ինչպես նաև ակտի բովանդակությունն ու կիրառման վերաբերյալ մեկնաբանություններ: Նշված իրազեկումը տեսչական մարմինը պարտավոր է իրականացնել ոչ ուշ, քան այդ ակտերի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

ԱԱՏՄ կայքէջի <https://www.hlib.am/> ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեսչական մարմնի՝ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտներին իր պաշտոնական կայքէջի միջոցով իրազեկման «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները հիմնականում իրականացվում և պահպանվում են:

⁸⁷ <https://cutt.ly/FHy0AtA>, <https://cutt.ly/oHy2KSw>, <https://cutt.ly/uHy9wK3>, <https://cutt.ly/qHy9YNH>, <https://cutt.ly/aHy8bIH>, <https://cutt.ly/8Hy4E7u>

⁸⁸ https://www.hlib.am/legal_acts/

ԱԱՏՄ կայքէջով իրազեկում

ԱԱՏՄ կայքէջը տնտեսվարող սուբյեկտներին և լայն հանրությանը աշխատանքային իրավունքների և օրենսդրական նոր կարգավորումների, իրազեկման առանձին գործիքակազմերով տեղեկատվության հասանելիության և մատչելիության տեսանկյունից դեռևս կարիք ունի կատարելագործման: Մասնավորապես, ԱԱՏՄ կայքէջում հրապարակվող աշխատանքային իրավունքի և օրենսդրության ոլորտում ընդունված նոր իրավական ակտերի հայտարարությունների վերաբերյալ հաղորդումները տեղադրվում են նորություններ բաժնում, որտեղ որոնումը շատ դժվար է, իսկ նոր տեղեկատվության տեղադրման պայմաններում իրազեկման ենթակա նյութը կորցնում է ամենօրյա դիտման հնարավորությունը: Բացի այդ, ԱԱՏՄ կայքէջի «Տեղեկատվություն» բաժնում առկա է «Հայտարարություններ» ենթաբաժինը <https://www.hlib.am/announcements/>, որում տեղադրված են ԱԱՏՄ թափուր հաստիքների համալրման մրցույթի փուլը հաղթած թեկնածուների վերաբերյալ տվյալները, այն դեպքում, երբ նույն բաժնի «Աշխատատեղեր» ենթաբաժնում առկա է «Թափուր պաշտոնի մասին հայտարարություններ» դաշտը: Մինչդեռ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ը պահանջում է նոր իրավական ակտերի վերաբերյալ իրազեկումը իրականացնել տեսչական մարմնի կայքէջում հայտարարությունների միջոցով:

ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում իրազեկման գործիքակազմերով հրապարակված նյութերը տարրալուծված են կայքի տարբեր բաժիններում: Այսպես, նոր ընդունված իրավական ակտերն ու ուղեցույցները հրապարակված են ԱԱՏՄ կայքէջի «Օրենսդրություն» բաժնի «իրավական ակտեր» ենթաբաժնում <https://www.hlib.am/legal Acts/>: Դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպման վերաբերյալ մամուլի հրապարակումները տեղադրվում են ԱԱՏՄ կայքէջի «Տեղեկատվություն» բաժնի «Մամուլի հրապարակումներ» ենթաբաժնում <https://www.hlib.am/press releases/>: Ձեռնարկների, բուկլետների, տեղեկանքների հրապարակման համար կոնկրետ բաժին առանձնացված չէ: Կայքէջի «Տեղեկատվություն» բաժնի «տեսանյութեր» ենթաբաժնում տեսանյութերը բացակայում են:

ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի «կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների» 9-րդ միջոցառմամբ նպատակադրված էր հանրության ու տնտեսվարող սուբյեկտների շրջանում բարձրացնել ԱԱՏՄ-ի ճանաչելիությունը: Որպես ԱԱՏՄ ճանաչելիության աստիճանի գնահատման մակարդակ ներկայացված է ԱԱՏՄ պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում ԱԱՏՄ գործունեությունը լուսաբանող տեսանյութերի և հարցազրույցների հրապարակումը:

Համաձայն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ԱԱՏՄ-ի կողմից 2021 թվականին պատրաստվել են 7 համատեղ տեսահոլովակներ, ՉԼՄ-ներին տրվել է 14 հարցազրույց, որոնք թողարկվել են տեսանյութերի տեսքով և համարվել են լուսաբանող, սակայն, հաշվի առնելով պաշտոնական կայքէջի տեխնիկական սահմանափակումները, հրապարակումների հղումները կայքէջում չեն կցվել: Դրա փոխարեն, ԱԱՏՄ գործունեության վերաբերյալ բոլոր տեսանյութերը տեղադրվում են ԱԱՏՄ ֆեյսբուքյան էջում՝ <https://www.facebook.com/hlib.am/videos>:

Հանրային իրազեկման կազմակերպման, ինչպես նաև ԱԱՏՄ հեղինակության բարձրացման տեսանկյունից ԱԱՏՄ չի տիրապետում կայքէջի հանրային հասանելիությանը և օգտատերերի քանակին, ինչպես նաև կայքէջից ներբեռնումների և դիտումների քանակին: ԱԱՏՄ կայքէջը նման տվյալներ ստանալու հնարավորություն չի ընձեռում:

Աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված 77 խորհրդատվության և «թեժ գծով» ստացված 1306 հեռախոսազանգերին տրված պարզաբանումների արդյունքները ԱԱՏՄ կայքէջում արտացոլված չեն: Մինչդեռ, ԱԱՏՄ կայքէջի «Հաճախ տվող հարցեր» բաժնում աշխատանքային իրավունքների ու օրենսդրության ոլորտից պարզաբանված է ընդամենը մեկ հարց՝ «Ո՞ր դեպքում և ինչպե՞ս պետք է իրականացվի աշխատավարձի վերջնահաշվարկը», այն դեպքում, երբ ԱԱՏՄ 2021 թվականի հաշվետվության «VIII. Տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրական խախտումները կամ շեղումները, որոնք վեր է հանել տեսչական մարմինը, ինչպես նաև դրանց պատճառներն ու տարածվածությունը»⁸⁹ գլխի աշխատանքային իրավունքների՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում բացահայտված հիմնական խախտումների վերաբերյալ պարզաբանումները հարց ու պատասխան ձևաչափով արձանագրված չեն կայքէջի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում:

ԱԱՏՄ կայքէջի «Տեսչական մարմին» բաժնի «Ծրագրեր» ենթաբաժնում ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրերը, «Տեղեկատվություն» բաժնի «Հաշվետվություն» ենթաբաժնում ԱԱՏՄ գործունեության ամենամյա և եռամսյակային հաշվետվությունները, ինչպես նաև «Կառավարման խորհուրդ» բաժնի՝ խորհրդի արձանագրություններն ու որոշումները տեղադրված են PDF ձևաչափով, որոնք մեքենայական ընթերցման ու «Բաց տվյալների» ձևաչափով չեն: Նման պայմաններում ներկայացված տեղեկատվությունը պիտանի է միայն ընթերցման համար, կիրառելի չէ Նյութերի հավաքագրման, տվյալների համադրման, վերլուծությունների ու հետազոտությունների իրականացման և օգտագործման համար:

Եզրակացություններ

Այսպիսով, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ով սահմանված՝ տնտեսվարող սուբյեկտների ու քաղաքացիների իրազեկման բարձրացման գործիքակազմերի կիրառման պահանջների, ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կանխարգելիչ և իրազեկման ծրագրի իրականացման հաշվետվությունների, ԹԻՂՀ հարցման արդյունքների ու ԱԱՏՄ պաշտոնեական կայքէջի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ու քաղաքացիների իրազեկման բարձրացման գործում՝

⁸⁹ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության հաշվետվություն, էջ 36. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/Hashvetvutyun-7.pdf>

- ԱԱՏՄ 2021 թ. իրականացված դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպման միջոցառումների կատարողականը գերծ է կոնկրետությունից, այն շարադրված է ընդհանրական ձևակերպումներով: Բացակայում են իրազեկման աշխատանքների կամ միջոցառումների իրականացման հստակ ու կոնկրետ արդյունքների՝ շահառու խմբերի, իրականացված դասընթացների, քննարկումների և դրանց մասնակիցների քանակի, իրավական ակտերի դրույթների վերաբերյալ իրականացված բացատրական աշխատանքների բովանդակության, թիրախ խմբերի և դրանց քանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները:
- ԱԱՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունում բացակայում է աշխատանքի իրավունքների վերահսկողության ոլորտում խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների, ֆինանսական միջոցների, ինչպես նաև պահանջվող մարդկային ռեսուրսների գնահատականները:
- Նոր իրավական ակտերի ընդունման կամ ուղեցույցների հրապարակման, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում ԱԱՏՄ պաշտոնական կայքէջի և զանգվածային լրատվության, ինչպես նաև բացակայում են հանդիպումների կազմակերպման միջոցով տնտեսվարող սուբյեկտների հետ «իրազեկման հանդիպում-քննարկումների» մասին վիճակագրական տվյալները:
- ԱԱՏՄ կայքէջում հրապարակվող նոր իրավական ակտերի, հայտարարությունների վերաբերյալ հաղորդումները տեղադրվում են կայքէջի «Նորություններ» բաժնում, որտեղ որոնումը սահմանափակ է, իսկ նոր նորությունների տեղադրման պայմաններում իրազեկման ենթակա նյութը կորցնում է ամենօրյա դիտման հնարավորությունը:
- ԱԱՏՄ կայքէջում ձեռնարկների, բուկլետների, տեղեկանքների հրատարակման համար կոնկրետ դաշտ առանձնացված չէ:
- Կայքէջի «Տեղեկատվություն» բաժնի «տեսանյութեր» ենթաբաժնում տեխնիկական սահմանափակումների պատճառով տեսանյութերի հրապարակումների հղումները չեն կցվում:
- Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների իրազեկման կազմակերպման, ինչպես նաև ԱԱՏՄ հեղինակության բարձրացման տեսանկյունից, ԱԱՏՄ կայքէջը հնարավորություն չի ընձեռում տվյալներ ստանալու կայքէջից օգտվողների շրջանակի, քանակի վերաբերյալ:
- Տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված 77 խորհրդատվության և «թեժ գծով» ստացված 1306 հեռախոսազանգերին տրված պարզաբանումների արդյունքները, ինչպես նաև աշխատանքային իրավունքների՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում 2021 թվականին բացահայտված հիմնական խախտումների վերաբերյալ պարզաբանումները, հարց ու պատասխան ձևաչափով, արձանագրված չեն ԱԱՏՄ կայքէջի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում: Նույն բաժնում հաճախ տրված հարցերը թեմատիկ խմբավորված չեն:
- ԱԱՏՄ գործունեության կանխարգելման ու իրազեկման ամենամյա ծրագրի և դրա իրականացման հաշվետվությունները, կառավարման խորհրդի արձանագրություններն ու որոշումները կայքէջում տեղադրված են PDF ձևաչափով, որոնք մեթենայական ընթերցելի ու «Բաց տվյալների» ձևաչափով չեն: Նման պայմաններում ներկայացված տեղեկատվությունը պիտանի է միայն ընթերցման համար, կիրառելի չէ նյութերի

հավաքագրման, տվյալների համադրման, վերլուծությունների, հետազոտությունների իրականացման և օգտագործման համար:

Ելնելով վերոնշյալից՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում ԱԱՏՄ գործունեությունը տնտեսվարողներին խորհրդատվության տրամադրման և իրազեկման հաստատված ծրագրի իրականացման կատարողականի տեսանկյունից ԹԻՉԿ կողմից գնահատվում է 8 տոկոսային բալային միավոր և, համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի, ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչով գտնվում է «Կայացման փուլում»:

Առաջարկություններ

- 3.2.1 ԱԱՏՄ ամենամյա գործունեության գնահատման հաշվետվություններում ապահովել ԱԱՏՄ կանխարգելման ու իրազեկման միջոցառումների, այդ թվում՝ դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպման, ձեռնարկների, բուկլետների, տեղեկանքների հրատարակման, բացատրական աշխատանքների իրականացման հստակ ու կոնկրետ արդյունքներ՝ մշակելով սեմինարների, դասընթացների, քննարկումների և դրանց մասնակիցների, թողարկված կամ հրապարակված ձեռնարկների, բուկլետների, հրապարակումների, իրավական ակտերի դրույթների վերաբերյալ իրականացված բացատրական աշխատանքների, շահառու (թիրախ) խմբերի քանակի վերաբերյալ միասնական վիճակագրական տվյալներ:
- 3.2.2 ԱԱՏՄ ամենամյա գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունում ապահովել աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման ֆինանսական միջոցների, ինչպես նաև մարդկային ռեսուրսների պահանջվող գնահատականները:
- 3.2.3 ԱԱՏՄ ամենամյա գործունեության՝ «Կանխարգելման և իրազեկման միջոցառումների ծրագրի» իրականացման ֆինանսավորման մասով, միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակության միջոցներից բացի ներգրավել նաև ՀՀ պետական բյուջեից միջոցների ստացման հնարավորությունը՝ ԱԱՏՄ կանխարգելման և իրազեկման միջոցառումների ամենամյա ծրագիրը ներկայացնելով որպես բյուջետային ծրագիր, ապահովելով ԱԱՏՄ-ին վերապահված վերահսկողության ոլորտներում սահմանված քաղաքականության իրականացումը:
- 3.2.4 ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի հետ համատեղ ԱԱՏՄ-ի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի, ԱԱՏՄ տարածքային կենտրոնների աշխատակիցների համար մշակել և իրականացնել տնտեսվարող սուբյեկտներին ու քաղաքացիներին իրազեկման գործիքակազմերի տիրապետման, դրանց կիրառման, թիրախ խմբերի սահմանման, կարողությունների զարգացման վերապատրաստման նպատակային ծրագրեր:

- 3.2.5 Արդիականացնել և թարմացնել ԱԱՏՄ կայքէջը՝ պարզեցնելով կայքէջում որոնման հնարավորությունները, բարելավելով տեխնիկական հզորությունը:
- Ապահովել կայքէջում տեսանյութերի, հոլովակների, բուկլետների, ձեռնարկների և այլ նյութերի տեղադրման տեխնիկական հնարավորությունները:
 - Կայքէջում տեղադրվող նյութերը, այդ թվում՝ ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրերը, դրանց իրականացման հաշվետվությունները, հանրության կամ քաղաքացիների համար հասանելի դարձնել առցանց, ամբողջովին մեքենայալնթեռնելի ձևաչափով (JSON, XML, RDF, CSV):
 - Կայքէջի «Իրազեկման», «Հարց ու պատասխան» բաժիններում տեղադրված նյութերից օգտվողների գրանցման, ինչպես նաև ԱԱՏՄ կայքէջի օգտատերերի հաշվառման գործիքների ներդրում:
- 3.2.6 Փոփոխության ենթարկել ԱԱՏՄ կայքէջի կառուցվածքը՝
- Ստեղծել «Իրազեկում» բաժին, որտեղ կտեղադրվեն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված իրազեկման բոլոր գործիքակազմերով պահանջվող նյութերը՝ ըստ առանձին ենթաբաժինների: Իրազեկում բաժնում առանձնացնել նոր իրավական ակտերի հայտարարությունների ենթաբաժին:
 - «Հարց ու պատասխան» բաժնի նյութերը խմբավորել ըստ թեմաների և համալրել աշխատանքային իրավունքների և օրենսդրության վերահսկողության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված խորհրդատվության, «թեժ գծով» ստացված հեռախոսազանգերին տրված պարզաբանումների, տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրական խախտումներից ձևավորված հարցերով ու պատասխաններով:

ԳԼՈՒԽ 4. ԱՍՏՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

4.1 Տեսուչների բարեվարքության պահանջները

ԱՍՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործունեության գնահատման գործում կարևորագույն դերակատարում ունի ԱՍՏՄ տեսուչների բարեվարքության պահանջների պահպանումը: ԱՍՏՄ տեսուչները, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության վարչության ծառայողները քաղաքացիական ծառայողներ են, որոնց «բարեվարքության համակարգի իրավակարգավորումներից բխող հարաբերությունները պարտադիր են և կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»⁹⁰: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության համակարգը ներառում է «վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և շահերի բախման»⁹¹ պահանջների ամբողջություն:

Վարքագծի կանոններ

«Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը⁹²: Նկատի ունենալով, որ հանրային ծառայողի վարքագծի կանոնները պետք է սահմանվեն վարքագծի տիպային կանոնների⁹³ հիման վրա՝ կանոնադրաբար, քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների մշակման օրենսդրական պահանջը դեռևս կատարված չէ:

ԱՍՏՄ-ն, կարևորելով տեսուչների կողմից ստուգումների իրականացման գործընթացը, տեսչական ստուգումների գործընթացը կանոնակարգող խոչընդոտների ու կանխատեսվող խնդիրների շարքում արձանագրել է նաև «Տեսուչների վարքագծի կանոնների սահմանման» խնդիրը⁹⁴: Համաձայն ԹԻՀԿ-ի կողմից ներկայացված հարցմանն ԱՍՏՄ պատասխանների՝ «Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 328-Լ որոշմամբ հաստատվել են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատողների

⁹⁰ Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 3.,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120807>

⁹¹ Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 21. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120832>

⁹² Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 28. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120832>

⁹³ Կոռուպցիայի կանախարգելման հանձնաժողովը հաստատել է «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները»: Կոռուպցիայի կանախարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 01-Ն՝ «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» որոշում.

<http://cpcarmenia.am/files/legislation/759.pdf>

⁹⁴ ԱՍՏՄ, 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիր, էջ 20. https://www.hlib.am/wp-content/uploads/2020/12/2021_tarekan_cragir_AATM.pdf

վարքագծի կանոնները»⁹⁵: Բնականաբար, ԱՍՏՄ ղեկավարի տեղակալի կողմից հաստատված տեսչական մարմնի աշխատողների վարքագծի կանոնները չեն կարող տարածվել ԱՍՏՄ-ում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նկատմամբ, քանի որ հակասում են հանրային ծառայության մասին օրենքի և քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների սահմանման պահանջներին: Բացի այդ, վարքագծի նշված կանոնները բովանդակային իմաստով պետք է բխեն հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հաստատված՝ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններից: Վերջիններս հաստատվել են միայն 2022 թ. հունիսի 17-ին: Այդուհանդերձ, համաձայն ԹԻՅԿ հարցման արդյունքների, ԱՍՏՄ-ի կողմից հաստատված տեսուչների վարքագծի կանոնները գործնականում չեն կիրառվում:

ԱՍՏՄ-ի՝ որակի ապահովման վարչությունը, «Տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման» (Հավելված 5) հարցաթերթի⁹⁶ միջոցով գնահատում է նաև տեսուչների վարքագծի «բարեկրթության և հարգալիության», ինչպես նաև նրանց «անաչառության և անկողմնակալության» պահանջները՝ տեսուչի կողմից ստուգման ենթակա տնտեսվարող սուբյեկտների մոտ կազմակերպելով հարցում: Հարցումը իրականացվում է անմիջապես տեսուչների միջոցով, որոնք, նախքան ստուգման եզրակացություն կայացնելը, ստուգման ենթակա տնտեսվարող սուբյեկտներին փակ ծրարով տրամադրում են հարցաշարը և ստանում են նրա կողմից լրացված պատասխանները:

2021 թ. ընթացքում ստուգման ենթարկված տնտեսվարող սուբյեկտների կողմից լրացված հարցաթերթի պատասխանները վկայում են, որ տեսուչների «բարեկրթության և հարգալիության», ինչպես նաև նրանց «անաչառության և անկողմնակալության» վերաբերյալ արձանագրվել են համապատասխանաբար 9.9 և 9.8 բարձր բալային միավորներ⁹⁷: Այդուհանդերձ, ԿԿՀ-ի կողմից հանրային ծառայողների «բարեկրթության և հարգալիության», ինչպես նաև նրանց «անաչառության և անկողմնակալության» վարքագծի սկզբունքների միասնական մեկնաբանությունների, ինչպես նաև նշված վարքագծի սկզբունքների մասով տնտեսվարողներից տեսուչի գործունեության վերաբերյալ ուղղակի հարցադրումների ու դրանց բալային գնահատման չափորոշիչների բացակայության պայմաններում, ստացված պատասխանները լիովին չեն կարող բնութագրել տեսուչների կողմից վարքագծի կանոնների պահպանման մակարդակը: Միաժամանակ, ցուցաբերված նախաձեռնությունը լավ օրինակ է տեսչական ստուգումների գործընթացում տեսուչների վարքագծի կանոնների պահպանման համար: Այն կարիք ունի կատարելագործման՝ հարցաշարում ներառվող՝ տեսուչի կողմից վարքագծի կանոնների պահպանումը գնահատելու համար ձևակերպված հարցերի և պատասխանների ընդլայնման ու վերաշարադրման միջոցով:

⁹⁵ ԱՍՏՄ աշխատողների վարքագծի կանոնները ԱՍՏՄ կայքում հրապարակված չեն

⁹⁶ Հաշվետվությանը կից հարցաշարը

⁹⁷ ՀՀ ԱՍՏՄ կառավարման խորհրդի կողմից 2022 թ. հունվարի 25-ի թիվ 03-Լ որոշմամբ հաստատված ԱՍՏՄ 2021 թ. տարեկան հաշվետվություն, հավելված 1-ի 2.5 բաժին, էջ 6-7. <https://www.hlib.am/wp-content/uploads/2022/02/1.1HavelvacN1.pdf>

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական ծառայողների, այդ թվում՝ տեսչական մարմինների տեսուչների կողմից վերահսկողության գործառնությունների իրականացումը զուգակցվում է կոռուպցիոն բարձր ռիսկերի, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների մոտ անմիջական ստուգումների իրականացման, անձնական շփումների, օրենսդրորեն հայեցողական որոշ գործոնների ի հայտ գալու հավանականությամբ: Այս տեսանկյունից ԹԻՅԿ-ի կողմից 2022 թ. իրականացված «Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում» հետազոտությամբ⁹⁸ առաջարկվել է քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքների համալրման, կատարողականի գնահատման և վերապատրաստման գործընթացներում նախատեսել թեկնածուի բարեվարքության գնահատման չափորոշիչներ՝ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների գնահատման ձևերում ներառելով բարեվարքությանը վերաբերելի ցուցիչներ, սահմանել թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար թեստավորման առաջադրանքների և հարցաշարի կիրառման պահանջ, իսկ հարցազրույցի փուլում թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար՝ իրավիճակային խնդիրների կիրառման պահանջ:

ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների մշակումը և դրանից բխող ընթացակարգերի սահմանումը գործնականում մեթոդական օժանդակություն կհանդիսանան ԱԱՏՄ տեսչության համար՝ կիրառելու տեսուչների բարեվարքության ստուգման նոր գործիքակազմեր՝ բարեվարքության հարցաշարերի, իրավիճակային խնդիրների կազմման, տեսուչների կատարողականի գնահատման և վերապատրաստման գործընթացներում բարեվարքության պահանջների կատարման մակարդակները գնահատելու համար:

Տեսուչներին ներկայացվող անհամատեղելիության պահանջներ և սահմանափակումներ

«Հանրային ծառայության մասին» օրենքի հոդված 29-ով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և ծառայողների բարեվարքության՝ ծառայողական պարտականություններով պայմանավորված նվերների ընդունման արգելքը: Նշված արգելքն ամբողջությամբ տարածվում է ԱԱՏՄ քաղաքացիական ծառայող տեսուչների վրա: Նվերների ընդունման արգելքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը Ազգային ժողով է ներկայացրել օրենսդրական նախաձեռնություն⁹⁹, որով նախատեսվում է հստակեցնել նվեր հասկացության շրջանակը, նվազեցնել հանրային ծառայողների կողմից ծառայողական պարտականություններով պայմանավորված նվերներ ընդունելու շեմը, սահմանել նվերների էլեկտրոնային միասնական ռեեստրի, նվերների հաշվառման ու հանձնման գործընթացները մշակող ու ռեեստրի վարման պատասխանատու մարմին (Կոռուպցիայի կանխարգելման

⁹⁸ ԹԻՅԿ, Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում» հետազոտություն, 2022 թ. <https://transparency.am/hy/publication/276>

⁹⁹ «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=67681>: Դիտվել է 12.09.2022 թ.

հանձնաժողով), համապատասխան պետական և ՏԻՄ մարմիններում նվերների ռեեստրի վարման պատասխանատու ճանաչել բարեվարքության հարցերով կազմակերպչին:

Ելնելով վերոնշյալից՝ ԱԱՏՄ տեսուչների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարմամբ պայմանավորված, նվերներ ընդունելու մասին հայտարարությունների և ստացված նվերների հաշվառման, ինչպես նաև տեսուչի կողմից պաշտոնեական պարտականություններով պայմանավորված՝ իր կողմից վերահսկվող տնտեսվարողների կողմից ստացված նվերների հանձնումը պետությանը կամ նվիրատուին մերժումը՝ նվերի ստացման մասին համապատասխան հայտարարությամբ հանդես գալու վերաբերյալ կամ նվերների ընդունման արգելքի կամ սահմանափակման օրենսդրական կարգավորումները դեռևս ամբողջականացված չեն և միայն օրենսդրական փոփոխությունների ընդունման արդյունքում հնարավոր կլինի ԱԱՏՄ-ի կողմից կազմակերպել տեսուչների ու այլ հանրային պաշտոնյաների կողմից նշված արգելքի պահպանման պահանջների կատարումը:

ԱԱՏՄ տեսուչների կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքի 31 և 32 հոդվածներով սահմանված են հանրային ծառայողներին, այդ թվում՝ քաղաքացիական ծառայող հանդիսացող ԱԱՏՄ տեսուչներին ներկայացվող անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումներ: ԱԱՏՄ տեսուչներին ներկայացվում են հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառնություններում ներգրավվելու, այլ վճարովի աշխատանք իրականացնելու (բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի) անհամատեղելիության պահանջներ:

ԹԻՉԿ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ԱԱՏՄ-ն հնարավորություն ունի հետևելու և հսկողություն սահմանելու միայն տեսուչների կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների իրականացման նկատմամբ, որը կանոնակարգված է տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային ներքին կարգապահական կանոններ» N 9-Լ հրամանով: Համաձայն վերջինիս պահանջների՝ տեսչական մարմնի աշխատողը կարող է բացակայել աշխատանքի վայրից աշխատանքային ժամերին ծառայողական նպատակներով, ինչպես նաև գիտական, մանկավարժական, ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու դեպքում: Տեսչական մարմնի աշխատողը աշխատանքային ժամերին գիտական, մանկավարժական, ստեղծագործական գործունեությամբ կարող է զբաղվել միայն ղեկավարի համաձայնությամբ՝ նախօրոք ներկայացնելով համապատասխան հաստատության տնօրենի կողմից տրված և հաստատված տեղեկանք: Այս դեպքում աշխատողը պարտավոր է ներկայացնել իր դասավանդելու ժամերի գրաֆիկը՝ հաստատված ուսումնական հաստատության կողմից և համաձայնեցված իր անմիջական ղեկավարի հետ: 2021 թ. ԱԱՏՄ 4 աշխատակիցներ իրականացրել են այլ վճարովի՝ գիտական, կրթական ստեղծագործական աշխատանք:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 32-ով սահմանված են հանրային ծառայողներին ներկայացվող ներքոշարադրյալ այլ սահմանափակումները՝

- տեսուչի համատեղ աշխատանքը մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ, երբ նրանց աշխատանքը գտնվում է անմիջական ենթակայության կամ վերահսկողության ներքո,
- տեսուչի կողմից տեսչությունում որպես երրորդ անձի ներկայացուցիչ հանդես գալը այն տնտեսվարողների անունից, որտեղ ինքն ունի բաժնեմաս կամ որոնք գտնվում են տեսուչի վերահսկողության ներքո,
- տեսուչի կողմից վերահսկողության իրականացումը այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որտեղ ինքը կամ իր ընտանիքի անդամը ունի բաժնեմաս,
- տեսուչի կողմից վերահսկվող տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի վերաբերյալ, երբ դրանք չեն կրում համընդհանուր բնույթ,
- տեսուչի մասնակցությունը կամ անդամակցությունը կուսակցություններին, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումներին, որոնք վերահսկվում են տեսուչի կողմից,
- տեսուչի կողմից այլ պաշտոնատար անձանց կամ ծառայողների գույքի հավատարմագրային կառավարիչ հանդես գալու կամ տեսուչին սեփականության իրավունքով պատկանող գույքը իր կողմից վերահսկվող տնտեսվարող սուբյեկտներին հավատարմագրային կառավարման հանձնելը,
- տեսուչի պաշտոնաթողությունից հետո աշխատանքի տեղափոխումը այն տնտեսվարող սուբյեկտի մոտ, որը վերջին մեկ տարվա ընթացքում վերահսկվել է տվյալ տեսուչի կողմից:

Նկատի ունենալով, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի պահանջներին համապատասխան, քաղաքացիական ծառայողների պաշտոնների զգալի մասը¹⁰⁰ ընդգրկված չէ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման համակարգում, ապա քաղաքացիական ծառայողների, այդ թվում՝ ԱԱՏՄ տեսուչների անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման միակ գործիքը հանդիսանում է քաղաքացիական ծառայության էլեկտրոնային հարթակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակում ընթացակարգային առանձնահատկությունները սահմանված են ՀՀ

¹⁰⁰ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ով հայտարարագրման պարտականություն ունեն տեսչական մարմնի ղեկավարը և տեղակալները, որոնք, հանդիսանալով պետական վարչական պաշտոն զբաղեցնողներ, ներկայացնում են գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր: Իսկ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք և քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք ներկայացնում են միայն գույքի, եկամուտների, և ծախսերի հայտարարագիր: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124296>

Փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն որոշմամբ¹⁰¹: Նախքան նշված որոշումը գործում էր ՀՀ փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշումը¹⁰², որով կանոնակարգված էին քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման համար պահանջվող տվյալները, անձնական գործի և թերթիկի լրացման ձևաթղթերը, քաղաքացիական ծառայողներին ներկայացվող սահմանափակումների վերաբերյալ հայտարարության ձևերը:

Քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման թղթային տարբերակում ներառված տեղեկատվությունը հնարավորություն էր տալիս միայն, ապավինելով քաղաքացիական ծառայողի ազնվությանը, արձանագրել նրան ներկայացվող անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ տեսակների առկայության վերաբերյալ փաստեր, այն էլ՝ միայն պաշտոնի ստանձնման պահին: Մինչդեռ, ԱԱՏՄ քաղաքացիական ծառայող հանդիսացող տեսուչների գործունեության ռիսկայնությամբ պայմանավորված, անհրաժեշտ է նրանց կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պայմանների պահպանման մեջ հավաստիանալ տեսչավորման ողջ գործընթացում:

ՀՀ փոխվարչապետի նույն որոշմամբ նախատեսվում է անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակի համակցում ՀՀ պետական կառավարման որոշ տեղեկատվական բազաների հետ՝ պահանջվող տվյալների ներբեռնման և առկա տվյալների արժանահավատության ստուգման հնարավորությամբ:

Այդուհանդերձ, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան՝ «Տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառնություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը»¹⁰³:

ԹԻՀԿ հեռախոսային հարցումները ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության ղեկավարի հետ, ցույց տվեց, որ վարչությունը ՀՀ կառավարությանը ենթակա յուրաքանչյուր տեսչությանը վերաբերելի անձնակազմի կառավարման գործառնությունները վերաբաշխել է վարչության առանձին աշխատակիցների միջև: Միաժամանակ, նույն աշխատակիցներին է վերապահվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 46-ով տեսչությունների բարեվարժության հարցերով կազմակերպիչների գործառնությունները:

¹⁰¹ՀՀ Փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128832>

¹⁰² ՀՀ փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն՝ «Մինչև «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմումը ոչ էլեկտրոնային եղանակով քաղաքացիական ծառայության գրասենյակին վերապահված գործընթացների կազմակերպման և գործառնությունների իրականացման կարգը սահմանելու մասին» որոշում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124296>

¹⁰³ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 5. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137062>

Արդյունքում, ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանումը աշխատակիցների ոչ բավարար քանակի, ինչպես նաև կադրային գործի վարման ահռելի մեծ ծավալի պայմաններում հնարավորություն չի ունենում ապահովելու տեսչական մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ տեսուչների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահանջների պահպանման, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապահված գործառույթների լիարժեք իրականացումը:

Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս ԹԻՂԿ ուսումնասիրության արդյունքները,¹⁰⁴ ԱԱՏՄ-ի կողմից տեսուչների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պայմանների պահպանման մասով, ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության կողմից քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակի միջոցով, քաղաքացիական ծառայողների անձնական գործերում համապատասխան տվյալների համալրման արդյունքում կարող են բացահայտվել տեսուչին ներկայացվող անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները:

Այսպիսով, ԱԱՏՄ-ն ներկայումս իրավասու չէ տեսչության, մասնավորապես՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության տեսուչների կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պայմանների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու և հավաստիանալու տեսուչների գործունեության բարեվարքության պահանջների պահպանման գործում:

Շահերի բախման կարգավորումներ

Հանրային ծառայողների շահերի բախման կարգավորումներն ամբողջականացված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ում, որտեղ տրված են շահերի բախման սահմանումը, տեսակները, դրանց կառավարման գործիքակազմերը: Այդուհանդերձ, «Հանրային ծառայության մասին և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթով¹⁰⁵ առաջարկվում է վերանայել շահերի բախման սահմանումը՝ այն համապատասխանեցնելով միջազգային կառույցների կողմից ընդունված չափորոշիչներին ու մեկնաբանություններին¹⁰⁶, տրվում է շահերի բախման կառավարման նոր գործիքակազմերի կիրառման պահանջ՝ ընդլայնելով փոխկապակցված անձանց շրջանակը:

Հաշվի առնելով տեսչական մարմինների կողմից վերահսկողական գործառույթներով պայմանավորված կոռուպցիոն բարձր ռիսկերի հավանականությունը, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների հնարավոր ի հայտ գալը՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ով տեսուչների համար սահմանվել են շահերի բախման իրավիճակների արգելքներ, որոնք

¹⁰⁴ ԹԻՂԿ, «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում», 2022 թ., էջ 93-98. <https://transparency.am/hy/publication/256>

¹⁰⁵ «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին». <https://www.e-draft.am/projects/4314/about>

¹⁰⁶ OECD, “Managing Conflict of Interest in the Public Sector. A TOOLKIT”, 2007, p. 97, https://read.oecdilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector_9789264018242-en#page33 կամ CoE «Recommendation No. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials». Appendix to Recommendation No. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application, <https://rm.coe.int/16805e2e52>

ուղղակիորեն պայմանավորում են տեսուչի և տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունները տեսչավորման գործընթացում: Մասնավորապես, այդ պահանջները հանգեցնում են տեսչական մարմնի ծառայողին արգելելով իրականացնել իր լիազորությունները և մասնակցել դիմումների քննարկմանը, երբ՝

«1) տեսչական մարմնի ծառայողի շահերը հակասում կամ համընկնում են վերահսկվող կամ դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտի շահերին.

2) տեսչական մարմնի և (կամ) ստուգման խմբի անդամը և վերահսկվող կամ դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխկապակցված անձինք են.

3) առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով՝ տվյալ պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության վերաբերյալ.

4) առկա են շահերի բախման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքեր»:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ում շահերի բախումը սահմանվում է որպես «սույն օրենքով սահմանված դեպքեր, երբ տեսչական մարմնում ծառայողի շահերը կարող են հիմք դառնալ իր ծառայողական գործառնություններն իրականացնելիս անկողմնակալության սկզբունքը խախտելու համար»: Նույն օրենքում անկողմնակալության սկզբունքը բնորոշվում է հետևյալ կերպ. «Անկողմնակալության սկզբունք՝ տեսչական մարմնի ծառայողներն իրենց գործառնություններն իրականացնում են օբյեկտիվ և անկողմնակալ: Արգելվում է տեսչական մարմնի ծառայողի գործառնությունների իրականացումը սույն օրենքով նախատեսված շահերի բախման առկայության դեպքում»: Շահերի բախման այս սահմանումը իր բնորոշմամբ շատ նեղ է և հակասության մեջ է մտնում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ ու փոփոխություններ¹⁰⁷ նախատեսող օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող, միջազգային կառույցների կողմից ընդունված շահերի բախման նոր սահմանմանը, չափորոշիչներին ու կիրառվող եզրույթին:

Իրավիճակային շահերի բախման կառավարման տեսանկյունից «Հանրային ծառայության մասին» օրենքի հոդված 33-ի 5-րդ մասով կարգավորված է իրավիճակային շահերի բախման բացահայտման հայտարարությունների գործիքի կիրառման պայմանները, որի հիմնական պատասխանատու է ճանաչված կոնկրետ պաշտոն զբաղեցնող անձը: Իր լիազորությունների իրականացման, որոշումների կայացման իրավիճակում պաշտոն զբաղեցնող անձը «պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց: Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե

¹⁰⁷ «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին». <https://www.e-draft.am/projects/4314/about>

վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը ստանալը՝ անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց»:

ԹԻՅԿ հարցման պատասխանները վկայում են, որ ԱԱՏՄ-ի տեսուչների կողմից իրավիճակային շահերի բախման հանգամանքների արձանագրման և գրավոր հայտարարությունների ձևաթղթերը մշակված չեն: ԱԱՏՄ-ի կողմից մշակված չեն նաև տեսուչների գործունեությամբ պայմանավորված շահերի բախման (տեսուչի ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածության) հնարավոր հանգամանքների (ռիսկային իրավիճակների կամ գործոնների) և տնտեսվարող սուբյեկտների հետ պոտենցիալ կամ հավանական փոխկապակցվածության ցանկերը: ԱԱՏՄ ղեկավարությունը, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերը, ստուգման կարգադրագրեր կամ հանձնարարագրեր կազմելիս նախօրոք չեն հավաստիանում տեսուչների կողմից վերահսկվող կամ դիմում ներկայացնող տնտեսվարող սուբյեկտների «շահերի համընկնման կամ հակասելու հանգամանքներին»:

Եզրակացություններ

Այսպիսով, «Տեսչական մարմինների մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում բարեվարքության օրենսդրական պահանջների, ԱԱՏՄ տեսուչների բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված ԹԻՅԿ հարցումների արդյունքների համադրումը ցույց է տալիս, որ

- 2022 թ. հունիսին ԿԿՀ-ի կողմից հաստատված «Հանրային ծառայողների տիպային կանոնների» հաստատման պայմաններում, ԱԱՏՄ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 2020 թվականի մարտի 16-ի թիվ 328-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ ծառայողների վարքագծի կանոնները կարիք ունեն վերանայման:
- ԱԱՏՄ-ում 2021 թ. քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների խախտումների դեպքեր չեն արձանագրվել և Էթիկայի հանձնաժողովներ չեն ձևավորվել:
- ԱԱՏՄ տեսուչների բարեվարքության գնահատման նպատակով որակի ապահովման վարչության կողմից կազմակերպված՝ «Տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման» հարցման շրջանակում տեսուչների «բարեկրթության և հարգալիության», «անաչառության և անկողմնակալության» վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների կողմից գնահատումը լավ նախաձեռնություն է: Այն կարիք ունի օրենսդրական մակարդակում զարգացման ու կատարելագործման, մասնավորապես տեսուչների՝ որպես քաղաքացիական ծառայողների, բարեվարքության ստուգման նոր գործիքակազմերի ներդրման միջոցով:
- Նվերների ընդունման արգելքի օրենսդրական կարգավորումները գործնականում կիրառելու պայմանների բացակայության պարագայում, ԱԱՏՄ-ի կողմից չի իրականացվում տեսուչների պաշտոնական պարտականությունների կատարմամբ պայմանավորված նվերներ ընդունելու մասին հայտարարությունների և ստացված նվերների

հաշվառման, ինչպես նաև տեսուչի կողմից վերահսկվող տնտեսվարողների կողմից ստացած նվերների հանձնումը պետությանը կամ նվիրատուին, օրենսդրական պահանջը:

- Օրենսդրորեն ԱԱՏՄ անձնակազմի կառավարման և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների վերապահումը ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը՝ ինստիտուցիոնալ առումով հնարավորություն չի ընձեռում ԱԱՏՄ-ին՝ ապահովելու տեսուչների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պայմանների պահպանման, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների խախտումների բացահայտման համար: Իր հերթին, ՀՀ Վարչապետի կադրերի և անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատակիցները կադրային գործի վարման առեւտրի մեծ ծավալի պայմաններում, ֆիզիկապես հնարավորություն չունեն ապահովելու տեսչական մարմինների, այդ թվում՝ ԱԱՏՄ տեսուչների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պայմանների պահպանման, ինչպես նաև տեսչության բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապահված լիազորությունների լիարժեք իրականացումը:
- «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով ԱԱՏՄ տեսուչների շահերի բախման սահմանում և շահերի բախման իրավիճակների համար նախատեսված արգելքները համահունչ չեն հանրային ծառայության մասին օրենքում շահերի բախման սահմանմանը, մասնավորապես շահերի բախման միջազգային ստանդարտներին ու չափորոշիչներին:
- Օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում ԱԱՏՄ-ի կողմից գործնականում չեն կիրառվում տեսուչների իրավիճակային շահերի բախման հանգամանքների արձանագրման և գրավոր հայտարարությունների գործիքները: Մշակված չեն տեսուչների գործունեությամբ պայմանավորված շահերի բախման (տեսուչի ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածության) հնարավոր հանգամանքների (ռիսկային իրավիճակների կամ գործոնների) և տնտեսվարող սուբյեկտների հետ պոտենցիալ կամ հավանական փոխկապակցվածության ցանկերը: ԱԱՏՄ ղեկավարությունը, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերը, ստուգման կարգադրագրեր կամ հանձնարարագրեր կազմելիս նախօրոք չեն հավաստիանում տեսուչների կողմից վերահսկվող կամ դիմում ներկայացնող տնտեսվարող սուբյեկտների շահերի համընկնման կամ հակասելու հանգամանքներին:

Այսպիսով, ԱԱՏՄ գործունեությունը աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում տեսչության ծառայողների բարեվարքության պահանջների՝ վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման տեսանկյունից ԹԻՂԿ կողմից գնահատվում է 8 տոկոսային բալային միավոր և համաձայն սույն զեկույցի մեթոդաբանությամբ սահմանված գնահատման սանդղակի՝ ԱԱՏՄ-ն նշված չափորոշիչով գտնվում է «Կայացման փուլում»:

Առաջարկություններ

- 4.1.1 Ուժը կորցրած ճանաչել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 2020 թվականի մարտի 16-ի «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատող-

ների վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 328-L որոշումը: ԱԱՏՄ տեսչության ծառայողների համար հիմք ընդունել ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության կողմից մշակվող և ՀՀ փոխվարչապետի կողմից հաստատվելիք վարքագծի կանոնագիրքը:

- 4.1.2 ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից նախապատրաստել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝ ապահովելով քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքների համալրման, կատարողականի գնահատման, վերապատրաստման գործընթացներում թեկնածուի բարեվարքության գնահատման չափորոշիչներ: Մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների գնահատման ձևերում ներառելով բարեվարքությանը վերաբերելի ցուցիչներ՝ սահմանել թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար թեստավորման առաջադրանքների և հարցաշարի կիրառման պահանջ, իսկ հարցազրույցի փուլում թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար՝ իրավիճակային խնդիրների կիրառման պահանջ:
- 4.1.3 ԱԱՏՄ որակի կառավարման վարչությանը տեխնիկական օժանդակության տրամադրման շրջանակներում լրամշակել «Տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման» հարցաթերթի միջոցով տեսուչների վարքագծի «բարեկրթության և հարգալիության», «անաչառության և անկողմնակալության» գնահատման հարցաշարը:
- 4.1.4 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ ապահովելու ՀՀ Վարչապետի աշխատակազմի կադրերի ու անձնակազմի կառավարման ստորաբաժանումից տեսչական մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառնությունների փոխանցումը տեսչական մարմինների որակի ապահովման վարչությանը՝ վարչության պետին լիազորելով տեսչության բարեվարքության հարցերով կազմակերպիչ գործառնությունները:
- 4.1.5 ԱԱՏՄ տեսուչների անհմատելիության պահանջների ու այլ սահմանափակումների պայմանների խախտումների բացահայտման նպատակով տեսչական մարմինների որակի ապահովման վարչություններին ապահովել հասանելիություն ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշմամբ սահմանված քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգին, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման որոշ մարմինների տեղեկատվական բազաներին՝ պահանջվող տվյալների ներբեռնման և առկա տվյալների արժանահավատության ստուգման հնարավորությամբ:
- 4.1.6 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում շահերի բախման դրույթները համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանվելիք շահերի բախման նոր սահմանման պահանջներին:
- 4.1.7 «Տեսչական մարմինների մասին» օրենքում լրացումների և փոփոխությունների կատարել՝ ապահովելով տեսչական մարմիններում վերահսկողական գործառնությունների առանձնահատկություններով պայմանավորված շահերի բախման իրավիճակների նոր սահմանափակումներ, մասնավորապես, տեսչությունում տեսուչի կողմից իր կամ իր

ընտանիքի անդամի մասնակցությամբ ընկերությունների ու կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության իրականացումը և տեսուչի կողմից վերահսկվող տնտեսվարող սուբյեկտների հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքման արգելք, երբ դրանք չեն կրում համընդհանուր բնույթ:

4.1.8 ԱԱՏՄ-ին տեխնիկական օժանդակության տրամադրման շրջանակներում ապահովել տեսուչների կողմից շահերի բախման իրավիճակների վերաբերյալ գրավոր հայտարարությունների ձևաթղթերի, դրանց գրանցման ու հաշվառման գործընթացների մշակման ընթացակարգեր, տեսուչների վերահսկողական գործունեությամբ պայմանավորված՝ շահերի բախման (տեսուչի ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածության) հնարավոր հանգամանքների (ռիսկային իրավիճակների կամ գործոնների) և տնտեսվարող սուբյեկտների հետ պոտենցիալ կամ հավանական փոխկապակցվածության ցանկերի ստեղծումը և պարբերաբար թարմացումը:

4.1.9 Օրենդորդը են սահմանել, որ ԱԱՏՄ ղեկավարությունը, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերը, ստուգման կարգադրագրեր կամ հանձնարարագրեր կազմելիս, պարտավոր են նախօրոք հավաստիանալ տեսուչների կողմից վերահսկվող կամ ստուգայց կատարվող կամ դիմումների քննարկման ժամանակ տնտեսվարող սուբյեկտների շահերի համընկնման կամ հակասելու հանգամանքներին:

Հավելված 1 – Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վարչության գործառույթների իրականացման մասով

«Աշխատանքի տեսչության մասին» 1947 թվականի կոնվենցիայի մասով

1.1 «Աշխատանքի տեսչության մասին» 1947 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 9-րդ հոդվածում առանձին կարգավորում է տրված Տեսչության անձնակազմում նեղ մասնագետների ներգրավման հարցին, որի վերաբերյալ մասնավորապես նշվում է, որ յուրաքանչյուր անդամ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, որպեսզի պատշաճ որակավորում ունեցող տեխնիկական փորձագետները և մասնագետները, այդ թվում՝ բժշկության, մեխանիկայի, էլեկտրականության և քիմիայի ոլորտի մասնագետները, ազգային պայմաններին առավել համապատասխանող եղանակներով ներգրավվեն տեսչության աշխատանքներում՝ նպատակ ունենալով ապահովել աշխատանքի ժամանակ աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանությանը վերաբերող իրավական դրույթների կիրառումը, ինչպես նաև նպատակ ունենալով քննել աշխատանքի գործընթացների, մեթոդների և նյութերի ազդեցությունը աշխատողների առողջության և անվտանգության վրա:

- Որքանով են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային տեսչության գործառույթների իրականացման համար տեսուչների թվաքանակը, նեղ մասնագիտական փորձագետների ներգրավածությունը համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին, քանի՞ հաստիք է համալրված, ի՞նչ հաճախականությամբ են տեսուչներն անցնում մասնագիտական վերապատրաստումներ,
- արդյո՞ք առկա են տեսուչների պաշտոնի համապատասխան անձնագրեր՝ տեխնիկական բնութագրերի, տեսուչների իրական աշխատանքային պահանջների համապատասխանությամբ:

1.2 Կոնվենցիայի համաձայն՝ աշխատանքի տեսուչները լիազորված են միջոցներ ձեռնարկելու՝ որևէ շինությունում, սարքավորման մեջ կամ աշխատանքային մեթոդում թերությունները վերացնելու նպատակով, որոնք, ըստ տեսուչների հիմնավորված կարծիքի, կարող են սպառնալ աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը: Որպեսզի աշխատանքի տեսուչները հնարավորություն ունենան ձեռնարկելու այդ միջոցները, դատական կամ վարչական մարմիններ բողոքարկելու պայմանով՝ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, նրանք իրավունք ունեն կարգադրելու կամ պահանջելու, որ տրվեն կարգադրություններ:

ա) Շինություններում որոշակի ժամկետում այնպիսի փոփոխություններ կատարելու համար, որոնք անհրաժեշտ են աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության վերաբերյալ իրավական դրույթներին խիստ համապատասխանությունն ապահովելու համար, կամ

բ) աշխատողների առողջությանը և անվտանգությանը անմիջական սպառնալիքի դեպքում անհապաղ կատարման ենթակա միջոցներ ձեռնարկելու համար:

Եթե հաստատված ընթացակարգը անհամատեղելի է Կազմակերպության անդամի վարչական կամ դատական պրակտիկայի հետ, տեսուչներն իրավունք ունեն դիմելու իրավասու մարմին՝ կարգադրություններ տալու կամ անհապաղ կատարման ենթակա միջոցներ ձեռնարկելու համար: Տեսչական այցելության դեպքում տեսուչները գործատուին կամ նրա ներկայացուցչին տեղյակ են պահում իրենց ներկայության մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ կարծում են, որ նման ծանուցումը կվնասի իրենց պարտականությունների կատարմանը:

- Որքանով է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տեսուչների աշխատանքային պրակտիկայում իրացվում մասնագիտական կարծիքի հիման վրա տրամադրվող կարգադրագրերի գործառույթը, նշել նման կարգադրագրերի քանակը,
- կարգադրագրերից որքան են հետագայում բողոքարկվել վարչական կամ դատական մարմին, որքան են բավարկվել, որքան են մերժվել, խնդրում ենք նշել իրավական հիմքերը:

1.3 Կոնվենցիայի 14-րդ հոդվածում ամրագրված է, որ աշխատանքի տեսչությունը ծանուցվում է արտադրական պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի մասին ազգային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ձևով:

- 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քանի՞ անգամ են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչությանը արտադրական պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի մասին ծանուցել,
- ի՞նչ ընթացք են ստացել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչությանը արտադրական պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի մասին ծանուցումները:

1.4 Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, բացառությունների պահպանման պայմանով, աշխատանքի տեսուչներին՝

- ա) արգելվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնաբաժին ունենալ իրենց վերահսկողության ներքո գտնվող ձեռնարկությունում,
- բ) պարտավոր են, համապատասխան քրեական պատժի կամ կարգապահական միջոցների կիրառման սպառնալիքի տակ, նույնիսկ պաշտոնաթողությունից հետո չհրապարակել արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթաց, որոնց նրանք կարող էին ծանոթանալ իրենց պարտականությունների կատարման ժամանակ,
- գ) արդյո՞ք բացարձակորեն գաղտնի են պահվել բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների վերաբերյալ բողոքների աղբյուրը և գործատուին կամ նրա ներկայացուցչին չեն հաղորդվել այն մասին, որ տեսչական այցելությունը կատարվել է այդպիսի բողոքի հիման վրա, քանի՞ անանուն բողոք է ստացել ԱԱՏՄ-ն, ի՞նչ ընթացք են ստացել անանուն բողոքները:
- Արդյո՞ք իրականացվել է հսկողություն տեսուչների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող ձեռնարկությունում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնաբաժին ունենալու վերաբերյալ, ի՞նչ ընթացակարգով են ստուգվել նման դեպքերը, քանի՞ նման դեպք է բացահայտվել, ի՞նչ ընթացք են ստացել բացահայտված դեպքերը,
- արդյո՞ք իրականացվել են միջոցառումներ՝ քրեական պատժի կամ կարգապահական միջոցների կիրառմամբ, նույնիսկ պաշտոնաթողությունից հետո արտադրական կամ առևտրային որևէ գաղտնիք կամ արտադրական (տեխնոլոգիական) գործընթաց չհրապարակելու մասով,
- արդյո՞ք իրականացվել են միջոցառումներ կոնվենցիայով նախատեսված՝ բացարձակորեն գաղտնի պահելու բոլոր տեսակի թերությունների կամ իրավական դրույթների խախտումների

վերաբերյալ բողոքների աղբյուրը և գործատուին կամ նրա ներկայացուցչին չհաղորդելու այն մասին, որ տեսչական այցելությունը կատարվել է այդպիսի բողոքի հիման վրա:

1.5 Կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկությունները տեսչական ստուգման են ենթարկվում այնպիսի հաճախականությամբ և այնպիսի մանրակրկիտությամբ, որքանով դա անհրաժեշտ է համապատասխան իրավական դրույթների արդյունավետ կիրառման ապահովելու համար:

- Ի՞նչ հաճախականությամբ են ստուգվում ձեռնարկությունները, խնդրում ենք տրամադրել 2021 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստուգում անցած ձեռնարկությունների ցանկը:

1.6 Կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ տեսչության կենտրոնական մարմինը հրապարակում է տարեկան ընդհանուր զեկույց՝ իրեն ենթակա տեսչական ծառայությունների գործունեության վերաբերյալ: Այդ զեկույցները հրապարակվում են ողջամիտ ժամկետներում, ամեն դեպքում ոչ ուշ, քան հաշվետու տարվա ավարտից հետո 12 ամսվա ընթացքում: Տարեկան զեկույցների օրինակները հրապարակումից հետո՝ ողջամիտ ժամկետներում և ամեն դեպքում 3 ամսից ոչ ուշ, ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

- Արդյո՞ք Կոնվենցիայում սահմանված ժամկետում ՀՀ ԱԱՏՄ-ն հրապարակել է Կոնվենցիայում նշված զեկույցները, խնդրում ենք նշել հրապարակման ամսաթվերը,
- արդյո՞ք Կոնվենցիայում սահմանված ժամկետում ՀՀ ԱԱՏՄ-ն Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին է ուղարկել տարեկան զեկույցների օրինակները, խնդրում ենք նշել ուղարկման ամսաթվերը:

1.7 Կոնվենցիայի 21-րդ հոդվածի համաձայն՝ տեսչության կենտրոնական մարմնի կողմից հրապարակվող ամենամյա զեկույցներում ընդգրկվում են հետևյալ և գործին վերաբերող մյուս բոլոր հարցերը՝ այնքանով, որքանով դրանք գտնվում են տվյալ կենտրոնական մարմնի հսկողության տակ՝

- ա) աշխատանքի տեսչության գործունեությանը վերաբերող օրենքները և կանոնակարգերը,
- բ) աշխատանքի տեսչության անձնակազմը,
- գ) վիճակագրական տվյալներ տեսչության հսկողությանը ենթակա ձեռնարկությունների և դրանցում զբաղված աշխատողների թվաքանակի մասին,
- դ) վիճակագրական տվյալներ տեսչական այցելությունների մասին,
- ե) վիճակագրական տվյալներ կատարված խախտումների և կիրառված պատժամիջոցների մասին,
- զ) վիճակագրական տվյալներ արտադրական պատահարների մասին,
- է) վիճակագրական տվյալներ մասնագիտական հիվանդությունների մասին:

- Արդյո՞ք պահպանվել են ԱԱՏՄ-ի կողմից հրապարակվող ամենամյա զեկույցներում Կոնվենցիայի վերը նշված պահանջները:

Հավելված 2 – Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վարչության գործունեության և կատարողականի գնահատման չափորոշիչների մասով

ԱԱՏՄ գործունեության ծրագրի կազմման մասով

- 2.1 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ «տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը՝ ընթացիկ տարում հաջորդ տարվա համար տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատվող փաստաթուղթ է, որն առնվազն ներառում է տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը»:
- ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրի կառուցվածքը և ներառվող ցուցանիշների շրջանակը արդյո՞ք սահմանված են որևէ ենթաօրենսդրական ակտով:
- 2.2 ԱԱՏՄ 2021 և 2022 թթ. գործունեության ամենամյա ծրագրերի կառուցվածքը նույնական են: Տարեկան ծրագրերի «ԱԱՏՄ ձեռքբերումներ համառոտ կամ ԱԱՏՄ ձեռքբերումների համեմատական ցուցանիշներ» բաժնում ներկայացված են նախորդ տարվա ընթացքում ԱԱՏՄ կարողությունների՝ մարդկային, նյութական, ենթակառուցվածքների զարգացմանը միտված միջոցառումների իրականացման արդյունքները:
- Որքանո՞վ է այս բաժնի վերաբերյալ տեղեկատվությունը բխում տեսչական մարմինների մասին օրենքով ԱԱՏՄ գործունեության ամենամյա ծրագրին ներկայացվող պահանջներից:
- 2.3 ԱԱՏՄ 2021 և 2022 թթ. գործունեության ամենամյա ծրագրերի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների առկա վիճակը» ենթավերնագրի ներքո ներկայացված է ԱԱՏՄ գործունեության նախորդ տարվա միջոցառումների արդյունքները, որոնք բնութագրում են ԱԱՏՄ աշխատանքը:
- Որքանո՞վ են նշված բաժնի ցուցանիշները բնութագրում ԱԱՏՄ վերահսկողության ոլորտի ընդհանուր վիճակը, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների ոլորտում տիրող իրավիճակը:
- 2.4 ԱԱՏՄ 2021 և 2022 թթ. գործունեության ծրագրերի «ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա խնդիրներն ու բացահայտված ռիսկերը» վերնագրի ներքո ծրագրի 2-րդ բաժնում ամբողջությամբ ներկայացված են ԱԱՏՄ կարողությունների բացերը:
- Որքանո՞վ են նկարագրված ռիսկերն ու խնդիրները համապատասխանում ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտների, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների ոլորտի խնդիրներին և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
- 2.5 ԱԱՏՄ 2021 և 2022 թթ. գործունեության ծրագրերի «տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ ու իրազեկման միջոցառումներ» (հավելված 1) բաժնում:
- Որքանո՞վ են նախանշված միջոցառումները բխում ծրագրի նախորդ բաժնում վերհանված, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների ոլորտում արձանագրված խնդիրներից ու ռիսկերից:
- 2.6 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը տեսչական մարմնի գործունեության ծրագրում պահանջում է ունենալ վերահսկողության ոլորտում առկա խնդիրների ու բացահայտված ռիսկերի նվազեցման ուղղված միջոցառումների ժամանակացույց: 2022 թ. միջոցառումների ծրագրի (հավելված 1) միջոցառումները խմբավորված են ըստ տեսչության կառուցվածքային միավորների, ներառյալ՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությանը վերապահված միջոցառումները: Մինչդեռ, նույն աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությունը հանդիսանում է պատասխանատու կատարող:

- Որքանով է միջոցառումների ծրագրում նման խմբավորումը բխում տեսչական մարմինների մասին օրենքով տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրին ներկայացվող պահանջներից:
- 2.7 2022 թ. միջոցառումների ծրագրի հավելված 1-ի 2-րդ և 3-րդ սյունակները վերնագրված են որպես «միջոցառում»: Խնդրում ենք պարզաբանել աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությանը վերապահված ոլորտում նախանշված բոլոր միջոցառումների համար:
- Ո՞րն է համարվում միջոցառում, որը՝ գործողություն,
 - աշխատանքային օրենսդրության ո՞ր ռիսկերի կամ խնդիրների լուծմանն ու վերացմանն են ուղղված նշված միջոցառումները,
 - ակնկալվող արդյունքը, օրինակ՝ «թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում», ինչպե՞ս է գնահատվելու, ի՞նչ քանակական կամ որակական ցուցիչներով,
 - որքանով է նույն բաժնի 2-րդ միջոցառման ակնկալվող արդյունքը բխում աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտի խնդիրներից ու ռիսկերից: Ինչո՞ւ այն ներառված չէ իրազեկման միջոցառումների ծրագրում՝ հավելված 2,
 - ինչո՞ւ սահմանված ժամկետները կոնկրետ ու հստակ նշված չեն: Միայն 1-ին միջոցառման մասով է նշված կոնկրետ ժամկետ: Մյուսների դեպքում նշված է՝ տարվա ընթացքում:
- 2.8 2022 թ. միջոցառումների ծրագրի հավելված 1-ում որպես առանձին ոլորտ ներկայացված է «Օրենսդրական ակտեր» բաժինը, որով նախատեսվում է տեսչական գրասենյակ ներկայացնել օրենսդրական ակտերում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական ակտերի նախագծեր: Տեսչական մարմինները կարող են իրենց գործունեության արդյունքներով առաջարկություններ ներկայացնել, սակայն ոչ օրենսդրական ակտերի նախագծեր:
- Որքանով է օրենսդրական ակտերի նախագծերի մշակման գործառույթը բխում «տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով տեսչություններին վերապահված լիազորություններից, կոնկրետ՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության գործառույթից:
- 2.9 ԱՄՏՄ 2022 թ. գործունեության ծրագրի՝ «կանխարգելիչ և իրազեկման» գործողությունները (հավելված 2) կազմված են նույն տրամաբանությամբ, ինչ հավելված 1-ը: Խնդրում ենք պարզաբանել ծրագրի հավելված 2-ի՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության ոլորտում միջոցառումների 1-ին կետով նախատեսված միջոցառումը:
- Որքանով է «շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների, հետ համագործակցությունը» ճանաչվում որպես միջոցառում,
 - նույն միջոցառման ներքո արդյո՞ք պետք է հասկանալ, որ նշված դիվանագիտական ներկայացուցչությունների հետ իրականացվելու է սեմինար-քննարկում,
 - ի՞նչ արդյունք է ակնկալում ՀՀ-ում թրաֆիկինգի դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

- ըստ միջոցառման՝ որքա՞ն շահառու մասնակիցներ են ներգրավված լինելու սեմինար-քննարկմանը, ի՞նչ օրակարգով, ո՞ր ռիսկերի կամ խնդիրների լուծմանն է միտված լինելու սեմինար-քննարկումը,
 - ի՞նչ արդյունքներ են ակնկալվելու սեմինար-քննարկումների արդյունքում, քանի՞ տնտեսվարող սուբյեկտ կամ շահառուների ի՞նչ քանակ է ներգրավված լինելու այս միջոցառման շրջանակներում, կոնկրետ ո՞ւմ է թիրախավորելու պլանավորված միջոցառումը:
- 2.10 ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1124-Ն որոշման մեջ 25.11.21 N 1948-Ն որոշմամբ կատարված լրացումներով ու փոփոխություններով սահմանված է «VIII. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» բաժինը, որում տրված է ոլորտային ռիսկերի գնահատման մեթոդիկան: Տեսչության 2022 թ. գործունեության միջոցառումների ծրագրի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության ոլորտում նախատեսված է «ստուգաթերթերի նախագծերի մշակում դեռևս ստուգաթերթեր չունեցող տնտեսական գործունեության տեսակների համար»:
- Արդյո՞ք նախանշված միջոցառումը վերաբերելի է կոնկրետ աշխատանքային ռիսկի գնահատմանը, թե՞ նշված միջոցառումը նախատեսված է հանքարդյունաբերության ոլորտի ստուգաթերթի լրամշակմանը:
- 2.11 ԱԱՏՄ կանոնադրությամբ, տեսչության «10) աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում օրենքով սահմանված պետական վերահսկողության իրականացումը» գործառնության «10.1 «ը» - «ժա» պարբերություններով սահմանված վերահսկողությունը տեսչական մարմինն իրականացնում է ստացված գրավոր դիմումի առկայության դեպքում»: Խնդրում ենք պարզաբանել:
- ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1124-Ն որոշման մեջ 25.11.21 N 1948-Ն որոշմամբ կատարված լրացումներով ու փոփոխություններով սահմանված է «VIII. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» բաժնի դրույթները արդյո՞ք տարածվում են տեսչության կանոնադրության 10-րդ կետի 10.1 «ը» - «ժա» պարբերություններով սահմանված լիազորությունների իրականացման վրա:
 - Արդյո՞ք նախատեսվում է աշխատանքային պայմանագրերի գրանցման էլեկտրոնային համակարգի ստեղծման պայմաններում վերոնշյալ գործառնության իրականացումը կազմակերպել ռիսկերի գնահատման ստուգաթերթերի միջոցով:

Տեսչական մարմնի 2021 թ. գործունեության և կատարողականի գնահատման հաշվետվությունների կազմման ու ներկայացման մասով

- 2.12 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի 4-րդ մասով պահանջվում է, որ «Տեսչական մարմինն իր պաշտոնական կայքէջում և հանրության համար հասանելի այլ միջոցներով հրապարակի իր և իր ծառայողների գործունեության կատարողականի գնահատման չափորոշիչները, դրանց կիրառման հիմնավորումները, դրանց նկատմամբ վերահսկողության ձևերը, ինչպես նաև բարելավման ուղիները»: Խնդրում ենք պարզաբանել:

- արդյո՞ք ԱՄՏՄ-ն իր 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության մեջ արտացոլել է տեսչության աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում կատարողականի գնահատման չափորոշիչների կիրառման հիմնավորումները, դրանց նկատմամբ վերահսկողության ձևերը և բարելավման ուղիները,
 - արդյո՞ք ԱՄՏՄ 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվությունը պարունակում է տեղեկատվություն աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատակիցների (տեսուչների) գործունեության կատարողականի վերաբերյալ:
 - ԱՄՏՄ կայքէջում խնդրում ենք տրամադրել հղումը վերոնշյալ տեղեկատվությունը գտնելու մասով:
- 2.13 Տեսչության կանոնադրությամբ՝ տեսչության նպատակն է ապահովել «...աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանումը»: Տեսչության 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության նպատակի չափորոշիչներ բաժնում աշխատանքի իրավունքների ոլորտի համար այն գնահատված է 2020 թ. համար 3.0 միավոր և նույն մակարդակը պահպանված է 2021 թ. համար:
- Արդյո՞ք սա նշանակում է որ տեսչությունը այս ոլորտում չի ապահովել նպատակային ցուցանիշի մակարդակի աճ՝ նախորդ տարվա համեմատ,
 - որքա՞ն է գնահատված եղել կամ պլանավորված եղել աշխատանքային ոլորտում նպատակային ցուցիչի մեծությունը, եթե նման պլանավորում իրականացվում է:
- 2.14 Տեսչության գործունեության կատարողականի գնահատման նպատակային ցուցանիշների շարքում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը աշխատանքային իրավունքների մասով գնահատված է 2020 թ. 5.3-ից 2021 թ-ին՝ 3.4:
- Արդյո՞ք սա նշանակում է, որ աշխատանքային իրավունքների ոլորտում ռիսկերը նվազել են: Եթե՝ այո, խնդրում ենք պարզաբանել, ո՞ր գործոնների, քայլերի կամ իրականացված միջոցառումների արդյունքում է տեղի ունեցել նման նվազեցումը:
- 2.15 ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1124-Ն «...ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու... մասին» որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին 2021 թ. նոյեմբերի 25-ի N 1948-Ն որոշմամբ սկզբունքորեն վերանայվել է «VIII. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» բաժինը:
- Որքանո՞վ է մեթոդաբանական նման փոփոխությունն ազդել աշխատանքային իրավունքների ոլորտում ռիսկերի մակարդակի փոփոխության վրա,
 - արդյո՞ք տեսչության 2021 թ. գործունեության կատարողականի գնահատումը իրականացվել է «VIII. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» բաժնում սահմանված մեթոդաբանության պահանջների հիման վրա:
- 2.16 Տեսչության 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման «Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական ու մարդկային ռեսուրսները» բաժնում ոչ մի ֆինանսական գնահատական չի տրված ֆինանսական միջոցների մեծության վերաբերյալ, միայն նշված է, որ այն կազմում է

վարչության աշխատակիցների վարձատրությունը ու պարգևատրումները: Մարդկային ռեսուրսների գնահատականի դերում ներկայացված է վարչության 9 հաստիքներից 6-ի ներգրավվածությունը՝ 3 հաստիքի թափուր լինելու հանգամանքներում: Ելնելով վերոնշյալից՝

- որքան է կազմել աշխատանքային իրավունքների ոլորտի ռիսկերի գնահատման համար ֆինանսական միջոցների մեծությունը,
- արդյո՞ք կատարողականի գնահատման մեթոդաբանությունը չի սահմանել ըստ վերահսկողության ոլորտների ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման աշխատանքների համար հատկացվելիք ֆինանսական ու մարդկային ռեսուրսների չափորոշիչներ և պլանային մեծություններ,
- արդյո՞ք վարչության բոլոր աշխատակիցներն են տարվա բոլոր աշխատանքային օրերին ամբողջությամբ ներգրավված եղել ռիսկերի պլանավորման, վերլուծության ու գնահատման աշխատանքներում: Ձեր գնահատմամբ՝ քանի՞ մարդ/օր է հատկացվել այս աշխատանքների իրականացմանը,
- առկա է արդյո՞ք վարչության մեկ աշխատակցի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության ու գնահատման գործընթացի իրականացման ծավալի հաշվարկ,
- արդյո՞ք վարչության կողմից իրականացվող ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման գործընթացն իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով կամ ծրագրային ապահովման միջոցներով:

2.17 Տեսչության 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման «խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները» բաժնում, բացակայում են աշխատանքային իրավունքի ոլորտում 6990 միջոցառումների համար ծախսված ֆինանսական միջոցների մեծությունը: Մասնավորապես,

- արդյո՞ք պետական բյուջեով չի նախատեսված նման ծրագրային առաջադրանքների ֆինանսավորման առանձին ծրագիր,
- որքանո՞վ է հավաստի, որ խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումների իրականացումը բացառապես իրականացվել է միայն տեսչության ստորաբաժանումների աշխատակիցների կողմից,
- ինչո՞ւ չեն հաշվառվել կամ օգտագործվել դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ աշխատանքային իրավունքների ոլորտում համատեղ իրականացված իրազեկման, խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով ծախսված միջոցները,
- ինչո՞ւ տեսչության կողմից չեն օգտագործվում քաղաքացիական հասարակության միավորումների հնարավորություններն ու կարողությունները աշխատանքային իրավունքի ոլորտում իրազեկման, խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումների կազմակերպման ու իրականացման գործում:

2.18 Տեսչության 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման «Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկությունների քանակը» բաժնում գերակշռում է տարբեր գերատեսչությունների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի շուրջ 20 նախագծերի վերաբերյալ կարծիքների ներկայացման ցուցանիշը: Խնդրում ենք պարզաբանել.

- նշված իրավական ակտերի նախագծերից քանի՞սն են վերաբերել աշխատանքային իրավունքի ոլորտին, նշել կոնկրետ թիվը,
- արդյո՞ք տեսչության կանոնադրական խնդիրներից է բխում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- արդյո՞ք վերոնշյալ գործընթացում գործառույթների կրկնություն չեք տեսնում:

Տեսչությունն իր հերթին մշակում է նաև աշխատանքային իրավունքի ոլորտում իրավական ակտերի նախագծեր: Խնդրում ենք պարզաբանել.

- արդյո՞ք, «տեսչական մարմինների մասին» օրենքը պահանջում է նման տեսքով առաջարկությունների ներկայացում կառավարություն կամ լիազոր մարմնին: Չէ՞ որ իրավական ակտերի նախագծերի մշակման գործառույթը վերապահված է ոլորտի քաղաքականություն մշակող լիազոր մարմիններին,
- որքա՞ն ֆինանսական ու մարդկային ռեսուրսներ են ծախսվում աշխատանքի իրավունքի ոլորտում իրավական ակտերի նախագծերի տեսքով առաջարկությունների մշակմանը, ինչպես նաև այլ պետական կառավարման մարմինների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների պատրաստմանը:

2.19 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «III. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա վիճակի վերաբերյալ վերլուծություն» վերտառությամբ վերնագրի ներքո արձանագրված է ՀՀ կառավարության 2019 թ. օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշմամբ հաստատված՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագրի պահանջների հիման վրա ռիսկերի առկա վիճակի վերլուծության օրենսդրական, 2019-2021 թթ. ընթացքում տեսչության կողմից իրականացված վերահսկողության արդյունքների և վարվող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների բազայի մասին տեղեկատվություն: Այդուհանդերձ, հաշվետվության այս բաժնում բացակայում են տեսչության վերահսկողության ոլորտներում, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքի ոլորտում, կոնկրետ ռիսկերի նկարագրությունները, դրանց մեծության միավորները, ռիսկերը ձևավորող գործոնները և ազդեցության հետևանքները: Խնդրում ենք պարզաբանել.

- ինչո՞վ է բացատրվում տեսչությանը վերապահված ոլորտներում, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների ոլորտում ռիսկերի առկա վիճակի վերլուծության բացակայությունը,
- արդյո՞ք տեսչության կողմից իրականացվել է աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի վերլուծություն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թ. նոյեմբերի 25-ի N 1948-Ն որոշմամբ ռիսկերի գնահատման վերանայված մեթոդաբանության «VIII. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԱՄԱՐՈՒՄԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԸ» բաժինը:

Խնդրում ենք տրամադրել աշխատանքային իրավունքի ոլորտում ռիսկերի առկա վիճակի վերլուծության վերաբերյալ նյութը կամ նշել իդումը ԱԱՏՄ կայքէջում:

2.20 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «V. Խորհրդատվական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն» բաժնում նշվում է, որ խորհրդատվությունների գերակշիռ մասը կատարվել է տեսչության նախաձեռնությամբ: Միաժամանակ, աշխատանքային իրավունքներ ոլորտում իրականացվել է «1383 խորհրդատվական

աշխատանք, որից 77-ը տնտեսվարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն՝ աշխատողների աշխատավարձի, հավելավճարների վճարման, աշխատաժամանակի վերաբերյալ: Խնդրում ենք պարզաբանել:

- արդյո՞ք 77 խորհրդատվական աշխատանքն իրականացվել է տնտեսվարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի հիման վրա,
 - ինչո՞ւ ԱԱՏՄ-ն իր կայքէջում չի վարում «հաճախ տրվող հարցեր» վերնագրով բաժին,
 - որքանո՞վ է տեսչության «Թեժ գծով» ստացված, աշխատանքային իրավունքի ոլորտին վերաբերելի տնտեսվարող սուբյեկտների կողմից բարձրացրած հարցերը (1306 հարցում) հիմք հանդիսացել ոլորտում ռիսկերի առկա վիճակի վերլուծության և հետագա ստուգումների կամ իրազեկման ու կանխարգելման միջոցառումների ծրագրի մշակման համար: Խնդրում ենք նշել օրինակներ:
- 2.21 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «VI. տեղեկատվություն տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումների, դրանց նպատակների ու ստացված արդյունքների վերաբերյալ» բաժնի աշխատանքային իրավունքների ոլորտում, որպես կանխարգելիչ միջոցառումներ, նշված են 70 իրազեկում, 1383 խորհրդատվություն, 16530 ստուգայց: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ով տեսչության հաշվետվությամբ պահանջվում է ներկայացնել «4) կանխարգելիչ միջոցառումները և այն ռիսկերը, որոնց վերհանման են ուղղված և որոնք կանխել են դրանք»: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պարզաբանել:
- աշխատանքային իրավունքի ոլորտում իրականացված իրազեկման, խորհրդատվության, իրականացված ստուգայցերը վերհանված ո՞ր ռիսկերի մեղմանը կամ չեզոքացման են միտված եղել և այդ միջոցառումների արդյունքում որքանո՞վ են նվազել բացահայտված ռիսկերը:
- 2.22 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «VII. Տեղեկություն իրականացված ստուգումների վերաբերյալ» բաժնում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում ներկայացված են 2021 թ. իրականացված ստուգումների քանակը, տեսակները: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի պահանջներին համապատասխան, տեսչության հաշվետվությունը ներառում է տեղեկատվություն ստուգումների մասին՝ «5) ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները»: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պարզաբանել:
- արդյո՞ք հաշվետվության մեջ նշված՝ «աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում» իրականացված ստուգումները համապատասխանում են կամ վերաբերելի են տեսչության կանոնադրության 10-րդ կետի «10.1 «ը» - «Ժ» ենթակետերով սահմանված աշխատանքային իրավունքների վերահսկման ոլորտի գործառնություններին,
 - արդյո՞ք իրականացված ստուգումների, հրապարակված հանձնարարագրերի և կազմված տեղեկանքների քանակը պետք է դիտարկվի որպես ստուգման արդյունք: Եթե՝ այո, խնդրում ենք նշել հիմքը,
 - ինչպիսի՞ն են եղել 2021 թ. աշխատանքային իրավունքների ոլորտում ստուգման իրական արդյունքները, ի՞նչ նշանակալի փոփոխությունների են դրանք հանգեցրել:

Օրինակ՝ նվազել է նշված թեմայով բողոք-դիմումների թիվը կամ բացահայտվել են նոր ռիսկեր...

- 2.23 2021 թ. հաշվետվության նույն բաժնում նշված է, որ «2021 թ. թեմատիկ ստուգումների արդյունքները, որպես վիճակագրական տեղեկատվություն կարող է օգտագործվել 2022 թ. նույնաբովանդակ տվյալների համադրման և վերլուծության համար»: Խնդրում ենք պարզաբանել.
- Ի՞նչ արդյունքների մասին է խոսքը,
 - արդյո՞ք ստուգումների արդյունքների համադրելիությունը ապահովում է աշխատանքային իրավունքների ոլորտում իրավիճակի զարգացումների նկարագրությունը,
 - Ի՞նչ զարգացումների մասին կարելի է խոսել 2021 թ. ստուգումների տվյալների համադրության արդյունքում:
- 2.24 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «VIII. Տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վեր է հանել տեսչական մարմինը, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը» բաժնում նշված է, որ «տնտեսվարողների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության 4 ոլորտներում **պատշաճ վերահսկողության բացակայությամբ, ինչպես նաև օրենսդրական պահանջների չիմացությամբ և ոչ բավարար իրազեկմամբ** և որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատշաճ պահպանմամբ և իրականացմամբ»: Ելնելով նման ինքնագնահատականից՝ խնդրում ենք պարզաբանել.
- արդյո՞ք տեսչության կառավարման խորհուրդը տեղեկացված է նման եզրահանգմանը, որ միաձայն համաձայնել և ընդունել է 2021 թ. տեսչության հաշվետվությունը,
 - Ի՞նչ հիմքով են տեսչության աշխատակիցները պարզևատրվել, եթե չեն տիրապետում վերահսկողության ոլորտների օրենսդրությանը և պատշաճ իրազեկված չեն,
 - Ի՞նչ քայլեր են նախատեսված 2022 թ. տեսչության գործունեության ծրագրում՝ նման վիճակը շտկելու համար:
- 2.25 Հաշվետվության նույն բաժնում «Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում» պարբերության մեջ թվարկված են աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման առավել հաճախ հանդիպող խախտումների օրենսդրական համապատասխան հոդվածները, թվով 10: Այդուհանդերձ, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը պահանջում է ներկայացնել «6) տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերահանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը»: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պարզաբանել և տրամադրել տեղեկատվություն.
- արդյո՞ք տեսչությունը տիրապետում է տնտեսվարող սուբյեկտների կողմից աշխատանքային իրավունքի ոլորտի օրենսդրական պահանջների խախտումների կամ շեղումների վիճակագրությանը,
 - եթե՝ այո, խնդրում ենք տրամադրել 2021 թ. ընթացքում տեսչության վերահսկողության ոլորտում ներառվող աշխատանքային օրենսդրության պահանջներից առավել հաճախ հանդիպող խախտումների թվաքանակները՝ ըստ խախտումների պատճառների,

- որքանով են դրանք տարածված եղել կամ ընդգրկել տնտեսության առանձին ճյուղերը կամ տնտեսվարող սուբյեկտների շրջանակը:
- 2.26 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «IX. Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն» բաժնում նշված է, որ տեսչությունը ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին է ներկայացրել օրենսդրական փոփոխությունների 34 առաջարկություն և ներկայացրել կարծիքներ: Խնդրում ենք պարզաբանել.
- ներկայացված օրենսդրական փոփոխությունների առաջարկություններից քանի՞սն են վերաբերելի եղել աշխատանքային իրավունքի ոլորտի օրենսդրության կատարելագործմանը, խնդրում ենք նշել օրինակներ,
 - աշխատանքային իրավունքների ոլորտի օրենսդրական փոփոխությունների առաջարկներից քանի՞սն են պայմանավորված եղել օրենսդրական բացերը լրացնելու անհրաժեշտությամբ, խնդրում ենք նշել օրինակներ,
 - աշխատանքային իրավունքների ոլորտի օրենսդրական փոփոխությունների առաջարկներից քանի՞սն են պայմանավորված եղել ստուգումների արդյունավետության բարձրացման հանգամանքով, խնդրում ենք նշել օրինակներ,
 - աշխատանքային իրավունքների ոլորտի օրենսդրական փոփոխությունների առաջարկներից քանի՞սն են պայմանավորված եղել տնտեսվարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռի նվազեցման հանգամանքով, խնդրում ենք նշել օրինակներ:
- 2.27 Տեսչության 2021 թ. գործունեության հաշվետվության «X. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին» բաժնում ներկայացված է միայն տեսչական մարմնի և նրա աշխատողների դեմ բերված դիմումների (բողոքների) ընդհանուր քանակը՝ տարանջատված վերադասության կարգով և դատական կարգով: Միաժամանակ հղում է տրված հաշվետվության հավելված 1-ին: Հաշվետվության հավելված 1-ի 3.4 կետում տրված է դիմում բողոքների բացվածքը ըստ տեսչության վերահսկողության ոլորտների: Համաձայն նշված տեղեկատվության՝ 2021 թ. տեսչության աշխատանքային իրավունքների ոլորտի մասով բերված բողոքների ընդհանուր թիվը կազմել է 42 դեպք՝ վերադասության և դատական կարգով կազմել է համապատասխանաբար 21 դեպք: Այդուհանդերձ, «տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ը պահանջում է, որ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ բերված բողոքների քանակից բացի ներկայացվեն նաև տվյալներ «8) ...բովանդակության և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների» մասին: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պարզաբանել.
- Ի՞նչ բովանդակության են եղել աշխատանքային իրավունքների ոլորտում տեսչական մարմին և դատական կարգով բերված բողոքները,
 - աշխատանքային իրավունքների ոլորտում տեսչական մարմին բերված 21 բողոքների վերաբերյալ ի՞նչ որոշումներ են կայացվել,
 - աշխատանքային իրավունքների ոլորտում դատական կարգով 21 բողոքների վերաբերյալ ինչպիսի՞ վճիռներ են կայացվել:

- 2.28 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ը պահանջում է, որ «3. Տեսչական մարմնի տարեկան հաշվետվությունները պետք է արտացոլեն իրավիճակի զարգացումները: Տարեկան հաշվետվության փաստացի տվյալները պետք է համեմատվեն նախորդ երկու տարիների իրավիճակներն արտացոլող տվյալների հետ»: Ելնելով վերոնշյալ պահանջից՝ խնդրում ենք պարզաբանել.
- որքանով է ԱԱՏՄ աշխատանքային իրավունքների ոլորտի մասով 2021 թ. գործունեության հաշվետվության փաստացի տվյալները համեմատված նախորդ երկու տարիների իրավիճակն արտացոլող համապատասխան տվյալների հետ,
 - ի՞նչ խոչընդոտներ կան իրավիճակի զարգացումների համեմատական վերլուծություն կատարելու համար,
 - ի՞նչ քայլեր են ձեռնարկվում տեսչության կողմից վերոնշյալ օրենսդրական պահանջի լիարժեք կիրառման ու ապահովման մասով:

Հավելված 3 – Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային իրավունքների ոլորտին վերաբերելի իրազեկմանը և խորհրդատվության տրամադրմանը միտված միջոցառումների մասով

Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների ծրագրի կատարմանն առնչվող հարցեր

3.1 Տեսչության 2021 թ. գործունեության կատարողականի գնահատման հաշվետվության հավելված 1-ի 1.4 «խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները» կետում ըստ վերահսկողության ոլորտների տրված է տարվա ընթացքում իրականացված իրազեկման միջոցառումների ընդհանուր թիվը: Մասնավորապես, աշխատանքային իրավունքի ոլորտում 2021 թ. համար նշված է 6990 միջոցառում: Մինչդեռ, բացակայում է իրազեկման միջոցառումների բացվածքը:

Խնդրում ենք տրամադրել, աշխատանքային իրավունքի ոլորտում 2021 թ. ընթացքում տեսչության կողմից իրականացված իրազեկման և խորհրդատվության վերաբերյալ ներքոշարադրյալ տվյալները՝

- որքա՞ն է եղել կատարված ստուգայցերի քանակը, որի ժամանակ իրականացվել է իրազեկում և խորհրդատվություն,
- որքա՞ն է եղել Թեժ գծով ստացված զանգերին տրամադրված խորհրդատվության և պարզաբանումների քանակը,
- որքա՞ն է եղել ԱԱՏՄ Ֆեյսբուքյան և պաշտոնական կայքէջի միջոցով կատարված հրապարակումների քանակը:

Խնդրում ենք կցել ԱԱՏՄ ֆեյսբուքյան էջում և կայքէջում կատարված հրապարակումների հղումները:

3.2 Տեսչության 2021 թ. գործունեության տարեկան ծրագրի կատարողականի հաշվետվության հավելված 2-ի «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ» բաժնի 7-րդ միջոցառման շրջանակներում ծրագրով պլանավորված են ակնկալվող արդյունքներ՝ «ասուլիս, հաղորդագրություն և տեսանյութ», մինչդեռ կատարողականի սյունակում հիշատակվում է ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Երևանի քաղաքապետարանի հետ սեմինար-խորհրդատվությունների կազմակերպում:

Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք ներկայացնել տվյալներ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ուղղությամբ ԱԱՏՄ-ի գործառույթների ընդլայնման մասով 2021 թ.-ին՝

- ո՞րքան ասուլիս է կազմակերպվել,
- քանի՞ հաղորդագրություն է պատրաստվել և տրամադրվել,
- քանի՞ տեսանյութ է պատրաստվել և ի՞նչ հաղորդակցման ուղիներով է տրամադրվել հանրությանը:

Նույն հաշվետվության հավելված 2-ի «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ» բաժնի 8-րդ միջոցառման կատարողականի բաժնում ո՞րքանով է

միջոցառման նշված կատարողականը համապատասխանում ծրագրով նախատեսված արդյունքներին: Մասնավորապես,

- որքանով են «Պրիզմա» և «Սոցիոկոպ» կազմակերպություններին տրամադրված հարցազրույցները հանդիսանում գործատուների ներկայացուցիչների և աշխատողների համար նախատեսված սեմինարների ու խորհրդատվության տրամադրման միջոցառման իրականացում:
- Որքանով են «Արժանապատիվ աշխատանք հիմա՝» ծրագրի շրջանակներում կազմակերպված ֆոկլու-խմբի քննարկումները բխում գործատուների ներկայացուցիչների ու աշխատողների համար սեմինարների կազմակերպման և խորհրդատվության իրականացման միջոցառման ծրագրային արդյունքներից,
- քանի՞ գործատուի ներկայացուցիչ կամ աշխատակից է մասնակցել ֆոկլու խմբի քննարկմանը,
- քանի՞ գործատուների ներկայացուցիչներ են մասնակցել արդյունաբերողների և գործարարների միության հետ կազմակերպված սեմինարին, նմանատիպ քանի՞ սեմինար է կազմակերպվել տարվա ընթացքում,
- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հետ պատրաստված «Աշխատանքային իրավունք, կարմիր գծեր, որոնք չպետք է հատի գործատուն» ձեռնարկն արդյո՞ք ներկայացվել է գործատուների և աշխատողների համար կազմակերպված սեմինարին,
- Ձեր գնահատմամբ՝ ինչպիսի՞ հասանելիություն է ունեցել ձեռնարկը, ի՞նչ տպաքանակով է հրապարակվել և ի՞նչ թվաքանակով գործատուների է հասանելի եղել,
- Նույն տրամաբանությամբ, ազգային գրադարանում կազմակերպված սեմինարին գրադարանի քանի՞ աշխատակից է մասնակցել:

3.3 Նույն հաշվետվության հավելված 2-ի «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ» բաժնի 9-րդ՝ «ԱԱՏՄ-ի գործունեությունը լուսաբանող տեսանյութերի, հարցազրույցների կազմակերպում, տեսահոլովակների պատրաստում» միջոցառման կատարողականի բաժնում բացակայում են միջոցառման կատարման քանակական գնահատականները:

Մասնավորապես, խնդրում ենք տրամադրել տվյալներ ԱԱՏՄ-ի կողմից աշխատանքային օրենսդրության վերահսկման նոր գործառնությունների մասով 2021 թ.-ին.

- քանի՞ տեսահոլովակ է պատրաստվել,
- քանի՞ հարցազրույց է տրամադրվել ՉԼՄ-ներին,
- քանի՞ լուսաբանող տեսանյութ է պատրաստվել:

Խնդրում ենք կցել ԱԱՏՄ կայքէջում դրանց հղումները:

3.4 Նույն հաշվետվության հավելված 2-ի «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ» բաժնի 10-րդ միջոցառման կատարողականի բաժնում առանց կոնկրետության նշված է, որ «Արարատի և Արմավիրի մարզերի մի շարք համայնքներում իրականացվել են իրազեկման և խորհրդատվական աշխատանքներ՝ մինչև 18 տարեկան անձանց աշխատանքում ներգրավվելու առանձնահատկությունների վերաբերյալ»: Մինչդեռ, համաձայն ծրագրի 10-րդ կետի միջոցառման, պահանջվում էր

իրականացնել սեմինար-քննարկում: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք տրամադրել տվյալներ և պարզաբանել:

- Արարատի և Արմավիրի մարզերում ե՞րբ է իրականացվել է սեմինար-քննարկումը,
- Արարատի և Արմավիրի մարզերի քանի՞ համայնքներում է իրականացվել միջոցառումը,
- Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների ո՞ր կազմակերպությունների կամ հասարակության ո՞ր շերտերի համար է իրականացվել,
- Ի՞նչ ձևաչափով է իրականացվել իրազեկման և խորհրդատվության տրամադրումը,
- Ի՞նչ մասնակցություն են ունեցել համայնքի ներկայացուցիչները, ո՞ւմ հետ է կազմակերպվել միջոցառումը:

3.5 Նույն հաշվետվության հավելված 2-ի «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ» բաժնի 11-րդ միջոցառման կատարողականի բաժնում նշված է, որ ԱԱՏՄ կայքէջում հրապարակված է իրազեկող նյութ: Մինչդեռ, ԱԱՏՄ կայքէջի «տեղեկատվություն» բաժնում բացակայում է իրազեկում ենթաբաժինը: Պարզ չէ, թե կայքէջում որտեղ է տեղադրված իրազեկումը, և որքանով է այն հասանելի եղել հանրությանը: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պարզաբանել:

- իրազեկման ո՞ր թեմայով է նյութ պատրաստվել, աշխատանքի տեղավորման կեղծ առաջարկների չեզոքացման, թե՞ անվտանգ միգրացիայի ապահովման, թե՞ թրաֆիկինգի վտանգի նվազեցման և ո՞ւմ կողմից,
- իրազեկման քանի՞ նյութ է պատրաստվել և ի՞նչ ձևաչափով՝ տեսանյութ, տեքստ, ձայնային հաղորդագրություն և այլն,
- հանրային իրազեկման կազմակերպման տեսանկյունից ի՞նչ սփռվածություն ունի ԱԱՏՄ կայքէջը կամ կայքէջից օգտվողների շրջանակը, քանակը,
- հանրության ո՞ր շերտերին է հատկապես ուղղված եղել իրազեկումը և դրա համար ի՞նչ քայլեր են ձեռնարկվել՝ հասցեականությունը ապահովելու իմաստով:

Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների իրազեկման գործընթացին առնչվող հարցեր

3.6 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի և ԱԱՏՄ կանոնադրության 11-րդ կետի 10-րդ ենթակետի գ) և զ) ենթակետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ ԱԱՏՄ-ն տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով պետք է իրականացնի դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ձեռնարկների թողարկում, բուկլետների, տեղեկանքների հրատարակում, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվության փոխանցում: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն ԱԱՏՄ-ի կողմից 2021 թ. ընթացքում աշխատանքային իրավունքների ոլորտում իրականացրած իրազեկման միջոցառումների մասին, մասնավորապես՝

- տնտեսվարողների կամ քաղաքացիների ո՞ր շերտերի համար որքա՞ն դասընթացներ են իրականացվել և ի՞նչ թեմաներով,
- տնտեսվարողների կամ քաղաքացիների ո՞ր շերտերի համար և ի՞նչ թեմաներով, քանի՞ սեմինար է կազմակերպվել,
- տնտեսվարողների կամ քաղաքացիների ո՞ր շերտերի համար և ի՞նչ թեմաներով, քանի՞ քննարկում է կազմակերպվել,

- աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ քանի՞ ձեռնարկ է թողարկվել, ի՞նչ տպաքանակով,
- աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ որքա՞ն բուկլետներ և տեղեկանքներ են հրապարակվել ԱԱՏՄ կայքէջում, սոցիալական ցանցերում և տպագրվել թղթային տարբերակով. խնդրում ենք կցել հղումները,
- զանգվածային լրատվամիջոցներով որքա՞ն իրազեկման տեղեկատվություն է հրապարակվել, և ՉԼՄ-ների քանի՞ աղբյուրներով,
- վերոնշյալ դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ձեռնարկների թողարկում, բուկլետների, տեղեկանքների հրատարակում, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվության քանի՞ միջոցառում է պլանավորված եղել ԱԱՏՄ «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների ծրագրում»:

Նոր իրավական ակտերի դրույթների կիրառման կամ ուղեցույցների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների հետ տարվող աշխատանքներին առնչվող հարցեր

- 3.7 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ով և ԱԱՏՄ կանոնադրության 13-րդ կետով սահմանված է, որ տեսչությունը աշխատանքային իրավունքի բնագավառի՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների հետ իրականացում է բացատրական աշխատանքներ, կոնկրետ հարցերով խորհրդատվության մատուցում: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք տրամադրել տվյալներ ԱԱՏՄ-ի կողմից 2021 թ. աշխատանքային իրավունքների, աշխատանքային օրենսդրության իրավական ակտերի դրույթների վերաբերյալ.
- քանի՞ բացատրական աշխատանքներ է իրականացվել:
 - ի՞նչ եղանակով են իրականացվել բացատրական աշխատանքները:
 - աշխատանքային օրենսգրքի կամ աշխատանքային հարաբերությունների ո՞ր հարցերն են դիտվել բացատրական աշխատանքների համար առավել հրատապ:
 - բացատրական աշխատանքների ո՞ր մասն է իրականացվել ստուգումների շրջանակում:
 - տնտեսվարող սուբյեկտների ո՞ր խմբերի համար են իրականացվել բացատրական աշխատանքներ:
 - բացատրական աշխատանքների արդյունքում քանի՞ տնտեսվարող սուբյեկտ է ստացել խորհրդատվություն կամ պարզաբանում:
 - վերոնշյալ բացատրական աշխատանքներից քանի՞ս են պլանավորված եղել ԱԱՏՄ «2021 թ. կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների ծրագրում»:
- 3.8 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ով և ԱԱՏՄ կանոնադրության 15-րդ կետով սահմանված է, որ տեսչությունը աշխատանքային իրավունքի օրենսդրության նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում իրազեկում է իր պաշտոնական կայքէջի և զանգվածային լրատվության, ինչպես նաև հանդիպումների կազմակերպման միջոցով: Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությանն առնչվող ուղեցույցների վերաբերյալ իրազեկումն իրականացվում է տեսչական մարմնի

պաշտոնական կայքէջում դրանք հրապարակելու և (կամ) ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ հանդիպումներ, քննարկումներ անցկացնելու և անվճար ձեռնարկներ կամ թերթիկներ տրամադրելու միջոցով: Ելնելով վերոնշյալ պահանջներից՝ խնդրում ենք տրամադրել տվյալներ, թե 2021 թ-ին.

- աշխատանքային օրենսդրության և աշխատանքային հարաբերություններին առնչվող նոր իրավական քանի՞ ակտ է հրապարակվել ԱՍՏ կայքէջում և ՉԼՄ-ներով, խնդրում ենք կցել հղումները,
- աշխատանքային օրենսդրության և աշխատանքային հարաբերություններին առնչվող քանի՞ ուղեցույց է հրապարակվել ԱՍՏ կայքէջում և ՉԼՄ-ներով, խնդրում ենք կցել հղումները,
- հրապարակված իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման քանի՞ հանդիպում-քննարկում է կազմակերպվել տնտեսվարող սուբյեկտների հետ,
- յուրաքանչյուր հանդիպմանը տնտեսվարող սուբյեկտներից միջին հաշվով քանի՞ ներկայացուցիչ կամ աշխատող է մասնակցել, խնդրում ենք կցել հանդիպման հղումները և արձանագրությունները,
- աշխատանքային օրենսդրության և աշխատանքային հարաբերություններին առնչվող քանի՞ օրինակ անվճար ձեռնարկներ կամ թերթիկներ են տպագրվել,
- աշխատանքային օրենսդրության և աշխատանքային հարաբերություններին առնչվող հանդիպում քննարկումներին քանի՞ օրինակ անվճար ձեռնարկներ կամ թերթիկներ են տրամադրվել մասնակիցներին:

Հավելված 4 – Հարցաշար ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքային տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վարչության ծառայողների շահերի բախման և բարեվարքության պահանջների պահպանման մասով

Տեսուչի շահերի բախման կառավարման գործիքակազմերին առնչվող հարցեր

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ով սահմանված է, որ տեսչական մարմինն իր գործունեությունը պետք է կազմակերպի այնպես, որպեսզի բացառվեն շահերի բախման իրավիճակները: Ելնելով այս կարգավորումից՝

- 4.1 Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) կողմից շահերի բախման բացահայտման նպատակով ի՞նչ գործիքներ են կիրառվում տեսչության կողմից: Խնդրում ենք ընդգծել.
 - բանավոր հայտարարություններ,
 - գրավոր հայտարարություն,
 - մամուլի հրապարակումներ,
 - թեժ գծով ստացված տեղեկություններ,
 - ներքին կամ արտաքին ազդարարի կողմից հաղորդումներ,
 - գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում:
- 4.2 ԱԱՏՄ-ի կողմից արդյո՞ք մշակված են շահերի բախման իրավիճակների արձանագրման կամ հայտարարության ձևաթղթեր:
- 4.3 ԱԱՏՄ-ն վարում է, արդյո՞ք, շահերի բախման դեպքերի հաշվառման գրանցամատյան (ռեեստր):
- 4.4 ԱԱՏՄ-ի կողմից մշակված են, արդյո՞ք, տեսուչների գործունեությամբ պայմանավորված՝ շահերի բախման (տեսուչի ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածության) հնարավոր հանգամանքների (ռիսկային իրավիճակների կամ գործոնների) ցանկ:
- 4.5 ԱԱՏՄ ղեկավարությունը, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերն արդյո՞ք տիրապետում են իրենց ենթակայությամբ գործունեություն իրականացնող տեսուչների՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անձնական գործերի տվյալներին: ԱՅՈ կամ ՈՀ: Եթե՝ այո, խնդրում ենք նշել տվյալների ցանկը:
- 4.6 ԱԱՏՄ ղեկավարությունը, այդ թվում՝ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող վարչության պետերը, ստուգման կարգադրագրեր կամ հանձնարարագրեր կազմելիս արդյո՞ք հավաստիանում են տեսուչների կողմից վերահսկվող կամ դիմում ներկայացնող տնտեսվարող սուբյեկտների շահերի համընկնման կամ հակասելու հանգամանքներին: ԱՅՈ կամ ՈՀ: Եթե՝ այո, ապա խնդրում ենք ներկայացնել գործընթացը կարգավորող ընթացակարգը և գործնականում արձանագրված դեպքերի քանակը:
- 4.7 ԱԱՏՄ-ն արդյո՞ք հավաստիանում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով տեսուչներին ներկայացվող անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի կիրառման պահանջներին: Յուրաքանչյուր կետի վերաբերյալ խնդրում ենք նշել, ԱՅՈ կամ ՈՀ: Այո-ի դեպքում նշել ընթացակարգը և գործնականում արձանագրված դեպքերի քանակը: Մասնավորապես՝

- տեսուչի կողմից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու հանգամանքը,
- տեսուչի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը,
- տեսուչի կողմից առևտրային կազմակերպությունում պաշտոնի զբաղեցումը կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացումը,
- տեսուչի կողմից այլ վճարովի աշխատանքի իրականացումը՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի,
- տեսչության ներսում տեսուչի համատեղ աշխատանքը մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, երբ նրանց աշխատանքը գտնվում է անմիջական ենթակայության կամ վերահսկողության ներքո,
- տեսչությունում որպես երրորդ անձի ներկայացուցիչ հանդես գալը այն տնտեսվարողների անունից, որտեղ ինքը ունի բաժնեմաս կամ որը գտնվում է իր վերահսկողության ներքո,
- տեսուչը վերահսկողություն է իրականացնում այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որտեղ ինքը կամ իր ընտանիքի անդամը ունի բաժնեմաս,
- տեսուչի կողմից վերահսկվող տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված քաղաքացիա-իրավական պայմանագրերի վերաբերյալ, երբ դրանք չեն կրում համընդհանուր բնույթ,
- տեսուչի մասնակցությունը կամ անդամակցությունը կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումներին, որոնք վերահսկվում են տեսուչի կողմից,
- տեսուչի կողմից այլ պաշտոնատար անձանց կամ ծառայողների գույքի հավատարմագրային կառավարիչ հանդես գալը,
- տեսուչին սեփականության իրավունքով պատկանող գույքը իր կողմից վերահսկվող տնտեսվարող սուբյեկտներին հավատարմագրային կառավարման հանձնելը,
- տեսուչի պաշտոնաթողությունից հետո աշխատանքի տեղափոխումը այն տնտեսվարող սուբյեկտի մոտ, որը վերջին մեկ տարվա ընթացքում վերահսկվել է տվյալ տեսուչի կողմից:

Տեսուչի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների իրականացմանն առնչվող հարցեր

- 4.8 ԱԱՏՄ իրականացնում է արդյո՞ք տեսուչի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների իրականացման նկատմամբ հավաստիության ստուգում: ԱՅՈ կամ ՈՉ: Եթե՝ այո, ապա խնդրում են նշել ընթացակարգերը և գործնականում արձանագրված դեպքերի քանակը: Մասնավորապես՝
- տեսուչի կողմից գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքների մասին հայտարարությունների ընդունում և հաշվառում,
 - տեսուչի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների իրականացման համար անմիջական ղեկավարի կամ մարմնի ղեկավարի համաձայնության տրամադրում,
 - տեսուչի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների իրականացման վայր հանդիսացող կազմակերպությունների վերաբերյալ տվյալների համադրում տեսուչի կողմից վերահսկվող տնտեսվարող սուբյեկտների ցանկի հետ:

Տեսուչի կողմից նվերների ընդունման արգելքին առնչվող հարցեր

- 4.9 ԱԱՏՄ-ն իրականացնում է, արդյոք, տեսուչների կողմից նվերների ընդունման արգելքի պահպանմանը միտված քայլեր: ԱՅՈ կամ ՈՉ: Եթե՝ այո, ապա նշել ընթացակարգերը և գործնականում արձանագրված դեպքերի քանակը: Մասնավորապես՝
- տեսուչի կողմից պաշտոնական պարտականությունների կատարմամբ պայմանավորված նվերներ ընդունելու մասին հայտարարությունների և ստացված նվերների հաշվառման իրականացումը,
 - տեսուչի կողմից պաշտոնական պարտականություններով պայմանավորված՝ իր կողմից վերահսկվող տնտեսվարողների կողմից ստացված նվերների հանձնումը պետությանը կամ նվիրատուին մերժումը՝ նվերի ստացման մասին համապատասխան հայտարարությամբ հանդես գալը:

Տեսուչի վարքագծի սկզբունքներին և կանոններին առնչվող հարցեր

- 4.10 ԱԱՏՄ 2021 թ. տարեկան ծրագրի 2.4.3 կետով նախատեսված է «Տեսուչների վարքագծի կանոնների սահմանում» միջոցառումը: Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պատասխանել.
- ի՞նչ փուլում են գտնվում տեսուչների վարքագծի կանոնագրքի մշակման աշխատանքները,
 - ո՞րքանով են տեսչության կողմից մշակված ԱԱՏՄ տեսուչների վարքագծի կանոնները բխում «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից,
 - արդյո՞ք տեսչության կողմից արձանագրվում են տեսուչների վարքագծի կանոնների խախտման դեպքեր,
 - տեսչությունը «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան արդյո՞ք միասնական էլեկտրոնային հարթակում ներկայացրել է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուներ,
 - 2021 թ. տեսչության կողմից էթիկայի հանձնաժողովի ձևավորման քանի՞ դեպք է արձանագրվել,
 - տեսչությունը ունի՞ արդյոք նշանակված բարեվարքության հարցերով կազմակերպիչ,
 - 2021 թ. ընթացքում տեսչության բարեվարքության հարցերով կազմակերպիչը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 46-ով վերապահված լիազորություններից քանի՞սն է իրականացրել:
- 4.11 ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի կողմից 2022 թ. հունվարի 25-ի թիվ 03-Լ որոշմամբ հաստատված՝ «ԱԱՏՄ 2021 թ. տարեկան հաշվետվության» հավելված 1-ի 2.5 բաժնում տեսուչների «բարեկրթության և հարգալիության», ինչպես նաև նրանց «անաչառության և անկողմնակալության» վերաբերյալ ստուգման ենթարկված տնտեսվարող սուբյեկտների կողմից լրացված հարցաթերթի միջոցով ստացված պատասխանների հիման վրա արձանագրված են համապատասխանաբար 9.9 և 9.8 բարձր բալային միավորներ:

Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պատասխանել.

- տեսուչների գործունեության «անաչառության և անկողմնակալության» գնահատված բարձր բալերի պայմաններում, ինչպե՞ս կմեկնաբանեք Նույն հաշվետվության հավելված 1-ի 3.4 բաժնում տեսչական մարմին և դատարան բերված տնտեսվարող սուբյեկտների կողմից աշխատանքային իրավունքի ոլորտում 2020 թ. նկատմամբ 2021 թ-ին բողոքների քանակի աճը՝ 5-ից 21 դեպքերով,
- տեսուչների համար սահմանված «բարեկրթության և հարգալիության», ինչպես նաև «անաչառության և անկողմնակալության» սկզբունքները որքանո՞վ են բխում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հանրային ծառայողի վարքագծի համապատասխան սկզբունքների մեկնաբանություններից,
- արդյո՞ք հարցաշարին պատասխանած, գնահատում իրականացնող տնտեսվարող սուբյեկտները, իրազեկված են եղել հարցաշարում ներառված տեսուչի «բարեկրթության և հարգալիության», ինչպես նաև «անաչառության ու անկողմնակալության» սկզբունքների մեկնաբանություններին,
- Նոր նշանակված տեսուչների համար արդյո՞ք կիրառվում են բարեվարքության թեստավորման կամ ստուգման գործընթացներ,
- տեսչության թեժ գծերի, ներքին ու արտաքին ազդարարի հաղորդումների, գրավոր դիմում-բողոքների և մամուլի հրապարակումների միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա, 2021 թ. ընթացքում, գործնականում տեսուչների կողմից բարեկրթության, հարգալիության և անաչառության կանոնների խախտումների քանի՞ դեպք է արձանագրվել:

Տեսուչների մասնագիտական կարողություններին և վերապատրաստմանն առնչվող հարցեր

- 4.12 «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ով սահմանված են տեսուչների մասնագիտական կարողությունների կառավարման և վերապատրաստման պահանջները:

Մասնավորապես, օրենքը պահանջ է ներկայացնում տեսչության կառավարման խորհրդի և ՀՀ Վարչապետի աշխատակազմի ԶԾԳ-ի հետ համատեղ հաստատելու տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման բազմակողմանի, մանրամասն և նպատակաուղղված ռազմավարական տարեկան ծրագիր՝ համագործակցելով նաև համապատասխան ոլորտների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք պատասխանել.

- ԱԱՏՄ-ի կառավարման խորհուրդն ունի արդյո՞ք ԶԾԳ-ի հետ հաստատած՝ տեսչության ծառայողների վերապատրաստման ռազմավարական ծրագիր,
- եթե՝ այո, ապա արդյո՞ք այդ ծրագրում ներառված են ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատակիցների վարքագծի, շահերի բախմանը, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և նվերների ընդունման արգելքի թեմաներով վերապատրաստման միջոցառումներ,

- ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատակիցներն ունեն, արդյո՞ք, հավաքագրված կրեդիտներ տեղական կամ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված վերապատրաստման միջոցառումներից,
- տեսուչների մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստման կարիքների բացահայտման շրջանակներում իրականացվո՞ւմ է, արդյոք, ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատակիցների, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված, բարեվարքության կարիքների գնահատում,
- ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման, վերապատրաստման ծրագրում դիտարկվո՞ւմ են, արդյոք, կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և կառավարման թեմաները, այդ թվում՝ նեպոտիզմի, ֆավորիտիզմի, կլիենտիզմի, հովանավորչության և կոռուպցիոն հանցագործություններով պայմանավորված այլ ռիսկերի մասով,
- 2021 թթ. ընթացքում ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատակիցների ո՞ր մասն է անցել բարեվարքության թեմաներով վերապատրաստման դասընթացներ:

Հավելված 5 - Հարցաթերթ տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքների գնահատման

Տնտեսավարող սուբյեկտի անվանում (լրացվում է գանկության դեպքում)

Լրացնող (լրացվում է գանկության դեպքում)

(անուն ազգանուն, պաշտոն, հեռախոս)

Վերահսկողության ոլորտ (նշել)

- դեղերի շրջանառություն
- բժշկական օգնություն և սպասարկում
- սանիտարահամաճարակային անվտանգություն
- աշխատանքի իրավունք

1. Որքանով էին ստուգում իրականացնող անձինք ներկայանալի:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

2. Որքանով էին ստուգում իրականացնող անձինք բարեկիրթ և հարգալից:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

3. Որքանով եք բավարարված աշխատանքների թափանցիկությունից՝ ստուգումից առաջ ներկայացվե՞ց ստուգման նպատակը, հիմքերը՝ ո՞ր իրավական ակտերի հիման վրա է կատարվում ստուգումը:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

4. Բացատրվե՞ց, թե ինչ է ստուգաթերթը, ինչպե՞ս է կատարվում վերջինիս լրացումը, յուրաքանչյուր հարցի գնահատումը, ինչո՞ւ է գնահատվում «այո» կամ «ոչ» կամ «չի պահանջվում»: (անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

5. Ստուգման ընթացքում կատարվե՞ց խորհրդատվություն ստուգաթերթի՝ Ձեզ համար անհասկանալի հարցերի վերաբերյալ:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

6. Խախտումների արձանագրման դեպքում ցուցաբերվե՞ց մեթոդական աջակցություն, թե ինչպե՞ս ապահովել իրավական ակտերի պահանջների կատարումը:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

7. Գնահատե՞ք ստուգում իրականացնող անձանց արհեստավարությունը՝ որքանո՞վ էին տիրապետում գործունեության ոլորտին:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

8. Ինչպե՞ս եք գնահատում ստուգաթերթերի արդյունավետությունը՝ որպես օրենսդրության պահանջներին համապատասխանությանը նպաստող գործիք:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

9. Որքանով էին ստուգում իրականացնող անձինք անաչառ և անկողմնակալ:

(անհրաժեշտ է նշել մեկ գնահատական՝ V նշանով, ընդ որում՝ «1» միավորը համարվում է ամենացածր գնահատականը, «10» միավորը համարվում է ամենաբարձր գնահատականը)

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մեկնաբանություններ (լրացվում է ըստ անհրաժեշտության) -----

Խնդրում ենք ներկայացնել առաջարկություններ, որոնք, ըստ Ձեզ, կբարելավեն Տեսչական մարմնի գործունեությունը, ինչպես նաև կնպաստեն Տեսչական մարմին - տնտեսվարող սուբյեկտ արդյունավետ փոխհամագործակցությանը:

Խնդրում ենք հարցաթերթը լրացնելուց հետո այն դնել տրված ծրարի մեջ, ստանձել և հանձնել ստուգում իրականացնող անձանց:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ